

Punaru



2

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ	1	Վիուկները
* * *	11	«Անտիկ շրջանից մինչև Ը. դար»
ԳԵՈՐԳ ԹԵՄԻՋԵԱՆ	24	Շարժում
ՅԱԿՈԲ ՕՇԱԿԱՆ	25	Սահակ Պարզեւեան
ՓԱՆՈՍ ՃԵՐԱՆԵԱՆ	40	Կեռասներին
»	»	**
* * *	41	Մեծարանք՝ հայ զբաղեւորում
ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ	42	Յ. Կարապետի «Միջնադար»ը
ՅԱԿՈԲ ԿԱՐԱՊԵՆՅ	47	Եւ եւս խաղաղութեան զուէր ազաչեցում
Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ	49	«Պոկուած ծառեր»ուն տարերքը
Ա. ԱՐՓԻՆԷ	52	Պոկուած ծառեր
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ	54	Ժ. Աթաբեանի «Կեանքը գեղեցիկ է» հատորը
ԺԻՐԱՅՐ ԱԹԹԱՐԵԱՆ	57	Նոր տարուայ պատմութիւն
ՅԱԿՈԲ ՄԱՆՈՒԿԵԱՆ	59	Լուսիկ Մելիքեանի «Թեհրան»ը
ԼՈՒՍԻԿ ՄԵԼԻՔԵԱՆ	61	Առաջին յոյգեր
ՍԵԴԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ	63	Գոյարանական տաճնապը կամ հայկականութեան հարցը լիբանանահայ նկարչութեան մէջ
ԼԵՒՈՆ ՄԿՐՏՉԵԱՆ	69	Պարոյր Հայկազը իր ժամանակակիցների ուրախում
* * *	73	Մշակութային լուրեր
Կողքի նկարը՝		գործ Զարուհի Փիլիկեանի



# Բագրն

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԿԱՆՈՒՐԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՏԻ

ԻՒՆ. ՅԵՐԻ. ԹԻՒՆ ԳՐԱԳՐԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ 1982 ՎԵՐՈՒՅԻՐ

Ս. ՍԱՆՆԻՆԵԱՆ

## ՎՃՈՒԿՆԵՐԸ

(ԳՈԹԱԿԱՆ)

Վիշապի քեփ, գայլի առամ,  
Վհուկների մումիաներ,  
Թաթարի շուրք, թուրքի ֆիք...

ՇԷՑԲՍԳԻՐ

Մի առաւօտ, երբ ես նախանշում էի Նիւ Եորքի քաղաքակենտրոնում գտնուող մի սրճարանում, սեղանիս մօտեցաւ իր երեսունի դոները բառիսով կիկն: Ես սիրում եմ, երբ կիկն զեղեցիկ է լինում: Բայց նա զեղեցիկ չէր: Ամենեւին զեղեցիկ չէր: Գեղեցիկ չլինելով հանդերձ, նա ինչ-որ սառնութիւն բերեց իր հետ, ինչ-որ անհաճոյ մթնոլորտ:

Ես սարսուռ ունեցայ:

— Կարո՞ղ եմ նստել ձեզ հետ, — հարցրեց նա:

Ես շտապում էի չուշանալ իմ աշխատանքից:

— Անշուշտ, — ասացի բարկութեամբ:

— Ի՞նչ է, չէ՞ք սիրում իմ դէմքը, — հարցրեց նա ինչ-որ հանկու-

կային ժպիտով:

— Օ՛հ, ոչ, տիկին Վնյակն Կարելի է չսիրել ձեր զեղեցիկ դէմքը, —

շտապեցի արդարանալ ես:

— Գեղեցի՞կ, — հարցրեց նա:

— Այո:

digitised by A.R.A.R.®

Վերջի վերջոյ ես մի կնոջ հետ էի խօսում, իսկ կանայք շատ զգայուն են իրենց արտաբերների գնահատման եւ թերազնահատման հարցում: Եւ ես ստիպուած էի այդ կնոջը զգեցնելս:

— Ինչո՞ւ էք այդքան արագ ուտում:

— Շտապում եմ, տիկին: Ուղիղ ժամը ութին ես պէտք է իմ գործատեղիում լինեմ: Իմ քսուք շատ խիստ մարդ է:

— Թաղեմ նրան: Գիտէ՞ք նրա հասցէն...

— Ոչ:

— Ո՞ր ուղղութեամբ է ձեր գործարանը:

— Հիւսիսային:

Կինը դէմքը դարձրեց դէպի հիւսիս: Յուշամատով օդի մէջ ձախից ակ լըջան դժեց եւ խօսեց ինքն իրեն.

— Աքու-լուլու-քուքու...

— Ի՞նչ է այդ...:

— Ձեր գործարանի ժամացոյցի սլաքը տառ բողբոջում ետ տուեցի...

Հիմա հանդիստ կերէք:

— Կարողացա՞ք անել այդ, — կասկած յայտնեցի ես:

Ձգացի, որ նա ե՛ւ վերաւորուեց, ե՛ւ բարկացաւ:

— Զկարողանայի՞ չէի անի:

— Ներողութիւն, — ասացի:

Նա հանդարտեց.

— Այդ ներողութիւնը մի կողմ դրէք: Ասացէք, ամուսնացա՞ծ էք:

— Ոչ, — ասացի:

— Ինչո՞ւ:

— Կանայք ինձ չեն սիրում:

— Ես ձեզ սիրում եմ:

Ես սարսափեցի, բայց ասացի.

— Շնորհակալ եմ...

— Այդ շնորհակալութիւնը մի կողմ դրէք: Ես ուզում եմ ձեզ հետ ամուսնանալ...

— Ի՞նչ, — աղաղակեցի ես եւ տեղիցս վեր թռայ:

— Նստեցէք, — հրամայեց նա, — ամէնքը մեզ են նայում: Ասացէք, որ համաձայն էք ամուսնանալ ինձ հետ:

— Համաձայն չեմ, — հակառակեցի ես:

— Այն ժամանակ ես ստիպուած եմ ձեզ մի դարձնել եւ բարձրացնել Empire State Buildingի տանիքի վրայ: Այս ցուրտ ձմրանն դուք այնտեղ կը մնաք առանց խոտի, առանց դարբի, առանց ջրի:

— Ես չեմ վախենում ձեր այդ ասածից, որովհետեւ չեմ հաւատում, որ դուք այդքան զօրութիւն ունէք, — ասացի:

— Oh yah ?, — հեղեկեց նա:

— Yah !

— Ուրեմն չէ՞ք վախենում:

— Ոչ: Զեմ վախենում:

— Տեսնո՞ւմ էք այն պարոնին, — գլխով ցոյց տուեց նա մի միջահասակ մարդու, որը մեզից մի քանի քայլ այն կողմը, առաւօտ շուտ, մի հացիկի մէջ դրուած, վրան հաստ շերտով կծու մանսնեխ քսուած hot dog էր ուտում:

— Տեսայ այդ պարոնին:

digitised by A.R.A.R.@

— Այդ պարոնին ես հիմա մի կապիկ կը դարձնեմ :  
 — Այդ՝ մարդկային իրաւունքներէ ռանակոխում է : Նա կարող է բո-  
 ղիքի առ որ անկ է :  
 — Ի՞նչ է այդ :  
 Բացատրեցի :  
 — Գիտե՞ք, թէ ինչու եմ հաւանում ձեզ :  
 — Ոչ, չգիտեմ :  
 — Որովհետեւ դուք մանուկի պէս էք խօսում : Դուք մի մեծացած-  
 մեծացած մանուկ էք :  
 — Ինչո՞ւ էք այդպէս կարծում :  
 — Որովհետեւ, եթէ ես այն պարոնին կապիկ դարձնեմ, ինչպէ՞ս նա  
 կարող է Սպիտակ Տուն գնալ եւ բողբոջել : Հիմա ձեր դէմքը մի կողմ դար-  
 ձըրէք :  
 Դարձրի :  
 — Արու-յուլու-բուբու... Հիմա նայէ՛ք :  
 Նայեցի : Հաթ տոկ ուսող պարոնը չկար այլեւս : Նրա փոխարէն, նրա  
 աթոռին նստել էր մի կապիկ եւ բանան էր ուտում արագ-արագ :  
 Ես չժեցի : Նայեցի շորս կողմս, տեսնելու համար, թէ ինձնից բացի  
 ուրիշներն էլ տեսնո՞ւմ են կապիկին, թէ ոչ : Ոչ ոք հետաքրքրուած չէր կա-  
 պիկով : Ըստ երեւոյթին, նրան չէին տեսնում : Նայեցի կնոջը : Տեսնելով իմ  
 շուարումը՝ կիւն ծիծաղեց : Նրա ծիծաղում գեհեհեհան մի բան կար, որն  
 ինձ սարսուռ պատճառեց եւ շատ վախեցրեց :  
 — Ուրուբ-ուլուլ-ուբա, — կապիկին նայելով ասաց կինը :  
 Ես չեմ կարող բացատրել, թէ ինչպէս եղաւ, որ կապիկի փոխարէն  
 տեսայ Հաթ տոկ ուսող պարոնին, որը դեռ ծամում էր վրան մանանիս զըռ-  
 ւած իր բարակ երչիկը, իր սրածայր բիւնրը ցնցելով այնպէս, որ կարծես  
 քիչ առաջ ինքը կապիկի չէր փոխուել եւ երչիկի փոխարէն բանան չէր ու-  
 տում : Կասկածում եմ, որ իմացել էր :  
 — Տեսա՞ք, — հարցրեց կինն՝ աչքերի անկիւններով ինձ նայելով :  
 — Այո, — վախից խզուած ձայնով ասացի ես, — խնդրում եմ ինձ կա-  
 պիկ չդարձնել...  
 — Ինչո՞ւ ոչ, — հրճուեց նա՝ իմ վախը տեսնելով :  
 — Լսել եմ, որ կապիկները չեն կարողանում ընտելանալ այս երկրի օ-  
 դին եւ շուտ մեռնում են :  
 Նա նորից ծիծաղեց :  
 — Այ տղայ, եթէ կապիկ դառնաք ի՞նչ նշանակութիւն կ'ունենայ ձեզ  
 համար, որ շուտ կը մեռնէք : Կապիկները մահուան մասին գաղափար չունեն :  
 — Կապիկները բանան են սիրում, իսկ ես բանան չեմ սիրում :  
 — Եթէ ամուսնանաք ինձ հետ, ձեզ կապիկ չեմ դարձնի :  
 — Ոչ : Ձեմ ամուսնանայ :  
 — Հիմա ձեզ շուն կը դարձնեմ : Այս երկրում շները լաւ են ապրում :  
 — Այս երկրում ես աճօթի եւ թափառական շներ էլ եմ շատ տեսել :  
 — Ես կը պահեմ ձեզ :  
 — Ոչ : Ես չեմ ուզում շուն դառնալ :  
 — Ի՞նչ կենդանի էք ուզում, որ դարձնեմ ձեզ :  
 — Ոչ մի :  
 — Այդ անկարելի է : Կա՛մ պիտի ամուսնանաք ինձ հետ, կամ էլ պի-  
 տի մի որեւէ կենդանի դառնաք :

- Այդ մարդկային իրաւունքների ոտնակոխում է։
- Ո՞ր մէկը։ Ինձ հետ ամուսնանա՞լը, թէ կենդանի դառնալը։
- Երկուսն էլ։
- Մի համարձակուէ՞ք այդպէս խօսել ինձ հետ։ Ուզո՞ւմ էք դալլ դառնալ։
- Ոչ, Գայլերը միշտ սոված են։
- Տեսնում եմ, որ դուք այնքան էլ շատ ուտողներից չէք։ Լաւ, ես ձեզ կը դարձնեմ ծողային մի կենդանի։
- Օրինա՞կ։
- Կէտ ձուկ։ Այդ մի մեծ եւ բարի կենդանի է։
- Խուսերը կէտ ձուկը բռնում են, հարպը քսում են իրենց զսապող-ներին, իսկ միւր ծախում հապոնացիներին։ Ես չեմ ուզում Ստալինի սապո-ղին քսուել, եւ ոչ էլ, որ հապոնացիները ինձ ուտեն։
- Թերեւս ձեզ նրանց թագաւորն ուտի։
- Ես ատում եմ թագաւորներին։
- Լաւ։ Ձեզ շնածուկ կը դարձնեմ։
- Շնածկերը մարդ են ուտում, իսկ ես դատաւարում եմ նրանց այդ մարգատեցութիւնը։
- Շնածկերը մարդ են ուտում ո՛չ թէ ելնելով մարդատեցութիւնից, այլ՝ մարդասիրութիւնից։
- Ես չեմ ուզում մարգասէր շնածուկ լինել։
- Դուք չէք ուզում ինձ հետ համագործակցել, երբ այսօր աշխարհը համագործակցութիւնից է խօսում։ Դուք, ես տեսնում եմ, ետապաշտ մէկն էք, — զանգատուեց կինը։
- Ետապաշտ, որ չեմ ցանկանում շնածուկ կամ մի ուրիշ կենդանի տարած դառնալ։
- Ե՛ւ այդ, եւ դիւտաւարայէտ ա՛յն, որ չէք ցանկանում ինձ հետ ամուսնանալ։
- Լեցե՞ք, տիկին, — ձեռքերս աղաչական բացեցի ես, — ինչո՞ւ էք անպայման ցանկանում ամուսնանալ ինձ հետ։ Ինչո՞ւ էք ցանկանում ձեր այդ անզուգական գեղեցկութիւնը փչացնել՝ ապրելով ինձ հետ։ Ո՞վ եմ ես։ Զընչին աշխատաւարձով ապրող մի հասարակ աշխատաւոր մի փոքրիկ գործա-րանում։ Հաւատացէ՛ք ինձ, որ ես շատ սնշնորհ մարդ եմ։ Ես ո՛չ երգել դիւտեմ, ո՛չ պարել եւ ոչ էլ։ ձգտում ունեմ հարստանալու։ Ես ո՛չ հարուստ եւ ոչ էլ անուանի ու ազդեցիկ ծանօթ բարեկամներ ունեմ։ Ամուսնացէ՛ք մի ուրիշ անուանի երգչի, շարժանկարային կամ հեռուստատեսային դերասանի հետ։
- Նրանք անհաւատարիմ են ամուսնութեան մէջ։
- Լուսնի վրայ մարդ ուղարկող մի գիտնականի հետ։
- Այդ գիտնականներն այնքան են իրենց ամբողջ էութեամբ նուիրուել ուտողութեան, որ կորցրել են իրենց ճոնականութիւնը։ Ես տղամարդ եմ ու-րում, այլ ոչ բարդ հաշուարկումներ կատարող մի ռոբոտ։
- Ամուսնացէ՛ք մի միլիոնատիրոջ հետ։ Իւղի եւ մեղրի մէջ լող կը տաք եւ ապարանքում կ'ապրէք։
- Միլիոնատէրերը ցոփ կեանք են վարում։
- Ամուսնացէ՛ք այս երկրի նախագահներից մէկի հետ։ Այս երկրի տիկ-նանց տիկիներ կը դառնաք։ Ձեր ամուսնու հետ երկրից երկրի կ'անցնէք։ Թա-ղաւորները, նախագահները, վարչապետները, նախարարները — ես նայիցի

նրա սեւ չոր-ցածաք եւ կապոյտ երակներով ծածկուած ձեռքի երեսին, — կը հաւրարեն ձեր այդ գեղեցիկ ձեռքը եւ դուք պատուի եւ գուրգուրանքի տալարկայ կը հանդիսանաք...

Այդ ժամանակ էր, որ մեր սեղանին մօտեցաւ մի կին, որն իր նմանութեամբ վհուկի կատարեալ նմանօրինակն էր, բայց մի քիչ աւելի տարիքոտ թուացող: Եւ կարծեցի, որ նա վհուկի մեծ քոյրն էր, բայց պարզուեց, որ նրա մայրն էր: Եկուորը նստեց եւ տեքաց: Երեսի յոգնել էր: Նա շատ դժգոհ զէմք ունէր:

— Գնա՛ ինձ համար սուրճ բեր, — հրամայեց նա վհուկին:

— Ձփախէ՛ս, կը զղջաս, — սաստեց ինձ վհուկը եւ դնաց:

Երբ վհուկը վերադարձաւ մի գաւաթ սրճով, եկուորն ինձ նայեց ուշադիր, եւ աղջկան հարցրեց.

— Ինչո՞ւ ես զբաղուած, աղջիկս:

— Mother, ես այդ տղային համոզում եմ եւ սպառնում, որ նա տնտեսանայ ինձ հետ:

Մայր վհուկը սկսեց ձեռքի ափով սեղանի վրայի տնտեսանելի փըշ-թանքները մաքրել, յետոյ հարցրեց աղջկան.

— Դրամ ունի՞ր:

— Այ:

— Եթէ դրամ չունի, ապա ինչպէ՞ս պէտք է նա մեզ պահի:

— Մենք պէտք է պահենք նրան:

— Ուղո՞ւմ է ամուսնանալ քեզ հետ:

— Այ: Հենց դրա համար էլ ես ուզում եմ մի մալախո տեսակի կապիկ դարձնել նրան:

— Յետո՞յ:

— Մեր բնակարանը բերել:

— Այ, — ասաց մայր վհուկը, — մեր բնակարանում մենք այլեւս չենք կարող կենդանիներ պահել:

— Ինչո՞ւ:

— Այսօր, քո տնից դուրս գալուց յետոյ, մեր բնակարանը եկաւ բնակարանների տեսչութեան հսկիչը եւ ասաց, որ մեր բնակարանը այլեւս կենդանաբանական այգու է վերածուել եւ պէտք է դրանց ցրել: Արդ, նրա գնալուց յետոյ ես քո բոլոր այդ արջերին, շնագայլերին, կապիկներին, բազմապիսի թռչուններին նորից մարդ դարձրի եւ ասացի, որ դնան իրենց տները: Պէտք է տեսնէիր, թէ ինչ խուճապ ստեղծուեց: Դռնից դուրս գալու ժամանակ իրար հրհրում էին, միմեանց ոտնակոխ անում...

— Հի՛, հի՛, հի՛...

Նրանց ծիծաղից արիւնս սառեց երակներումս, շնայած, որ օր-ցերեկ էր, եւ Նիւ Եորքի քաղաքականորոնի մի սրճարանում էի գտնուում, հարիւրաւոր մարդկանց մէջ:

— Իսկ ի՞նչ արե՞ր կոկորդիլոսին, — շարունակելով ծիծաղել, մօրը հարցրեց աղջիկը:

— Նրան էլ նորից մարդ դարձրի: Մի գեղեցիկ երիտասարդ էր: Նրա տեսքից սիրտս խփեց...

— Գիտեմ: Բայց նրան չպէտք է նորից մարդ դարձնէիր, — մի քիչ ափսոսանքով ասաց աղջիկը:

— Ինչո՞ւ ոչ:

— Երբ ես նրան սիրային առաջարկ արեցի, նա իմ արտաքինի վերա-

բերեալ գէշ արտայայտուեց եւ ետ վճռել էի նրան միշտ կոկորդիլոս պահել։  
— Ձի կարելի, աղջիկս, — փառաբանեցով խօսեց մայր վհուկը, —  
թէ՛ մարդկանց եւ թէ՛ կոկորդիլոսների համար վերաւորական է մարդուն  
կոկորդիլոս դարձնելը...

— Լաւ, իսկ ի՞նչ ես տեսիմ որան մակակօ դարձնելու մասին, — աղ-  
ջիկը գլխով ինձ ցոյց տուեց մօրը։

— Փորձից պիտեմ, որ մակակոնները շուտ-շուտ չեն հիւանդանում,  
իսկ անասնաբուժութիւնը հիմա շատ է թանկացել, — անորոշ տասց մայր  
վհուկը։

— Հայրս շուտ-շուտ էր հիւանդանում։

— Հօրդ ես մակակօ չէի դարձրել, այլ՝ գորիյա։ Նա մի շատ առողջ  
գորիյա էր։ Երբեք չհիւանդացաւ, բայց մեռաւ շատ կոնծելուց։ Իր վանդա-  
կում նստած՝ նա խմում էր ու խմում։ Այն ժամանակ մենք դրամ շատ ու-  
նէինք։ Հայրդ շատ հարուստ մի մարդ էր։

— Ինչո՞ւ նրան գորիյա դարձրիր։

— Սիրուհի էր պահում։

— Ուրեմն նրան այդպէս էլ պէտք էր։ Քեզ պէտք եղեցիկ մի կնոջ թո-  
ղած՝ սիրուհի՝ էր պահում այդ աւագակը։

— Տղամարդիկ միշտ աչքածակ են։

— Օ՛, մատրը, եթէ դու համաձայն չես, որ որան ես մակակօ դար-  
ձրեմ, թոյլ տուր թութակ դարձնեմ։ Թութակները օակաւակեր են։ Նա  
մեզ վրայ առանձին ծախս չի նստի։ Մա՛նաւանդ՝ որ թութակները չեն հի-  
ւանդանում։ Նրանք երեք հարիւր տարի են ապրում, — նորից մօրը գլխով  
ինձ ցոյց տուեց աղջիկը։

Ես անմիջապէս ինձ երեւակայեցի վանդակում նստած, կեռ կտուցով  
եւ բազմերանդ փետուրներով զարդարուած մի թութակի, որը երեք հարիւր  
տարի շարունակ միշտ նոյնն է ասում, ասանց դադարի՝ զբարի լոյս, բարի  
լոյս... Ես լաւ եմ, դուք ինչպէ՞ս էք... Նստեցէք, նստեցէք... Սուրճ ու-  
ղում էք... Մխադրանի՛կ... Ո՛չ, ո՛չ, ես չեմ ծխում...»։

— Թութա՛կ, — հարցրեց մայր վհուկն աղջկան, — ոչ, ոչ։ Դրանք  
ամէնից ձանձրալի եւ շատախօս թռչուններն են... Իմ ժամանակին (այն ժա-  
մանակ դու փոքր էիր, եւ երեւի չես յիշում), ես մի քանի երիտասարդնե-  
րի թութակ դարձրի եւ զղջացի արածիս համար։ Այն ժամանակ ես հօրդ գո-  
րիյա էի դարձրել եւ զրել վանդակում։ Մակայն ես նրան արտօնել էի անդ-  
լերէն խօսելու։ Ասացի արդէն, որ հայրդ գորիյա դառնալուց յետոյ իրեն  
յանձնեց կոնծարանութեան։ Իր վանդակում նստած՝ խմում էր ու խմում։  
Ո՞ւրեմն էր, վանդակի ճաղերի արանքից դատարկ շիշը դուրս նետում ու գո-  
ռում։

«— Հէ՛յ, վհուկ, ուխակի՛...»։

— Նա միշտ ինձ վհուկ էր անուանում։ Ես մօտենում էի նրա վանդա-  
կին ու ասում։

«— Ջորջ, հերթք է խմես։ Դու վնասում ես քո թանկագին առողջու-  
թեանը...»։

— Իսկ նա կատաղում էր։ Բռնում էր վանդակի ճաղերից, ցնցում էր  
ամբողջ վանդակը, մի կատարեալ դորիլայի պէս մոնչում եւ ինձ սպառնում։

«— Վհու՛կ, եթէ ձեռքս ընկնես, միայն մի վայրկեան ձեռքս ընկնես,  
քեզից ամենամեծ կտորը ականջդ պիտի թողնեմ...»։

— Ես էլ ոչ այնքան նրա սպառնալիքից ստիպուած՝ որքան նրա գո-



ոռւմ-գոշումից, ուխտիկի նոր չիլ էի նետում նրա վանդակի ճաղերից ներս։ Արդ, այդ թուփակները, որոնց մասին պատմեցի, անգիր էին արել հօրդ եւ իմ խօսակցութիւնները եւ ամբողջ օրը կրկնում էին։ Ինչպէս երեւում է՝ դրանք ծարդ եղած ժամանակ շատ ուշիմ էին եղել...

— Այս մէկն այնքան էլ ուշիմներից չի երեւում, — ասաց աղջիկն ինձ ակնարկելով։

Ես վերաւարուեցի։ Ուղեցի բողոքել։ Բայց վախեցայ եւ ձայն չհանեցի։

— Լաւ, ես սրան դեղձանիկ կը դարձնեմ. կարծում եմ դեղձանիկներին թոյլ կը տան մեր բնակարանում պահելու։

Մայր վհուկը մտածեց եւ հարցրեց.

— Դու ուզում ես նրան երկա՞ր պահել քեզ մօտ։

— Այո։

— Այդ գէպքում խորհուրդ չեմ տայ։ Իմ փորձից գիտեմ, որ մարդուց փոխուած դեղձանիկները երկար չեն ապրում։

— Ինչո՞ւ։

— Ես էլ եմ մտածել այդ մասին եւ եկել եմ այն եզրակացութեան, որ դեղձանիկներն ամէնից անմեղ կենդանիներն են, իսկ մարդը՝ ամէնից ծանր հոգի ունեցող արարածը։ Արդ, անմեղ դեղձանիկը չի կարողանում իր մէջ կրել մարդու բարդ հոգին եւ մահանում է։

— Այս աղան հորթի պէս մի բան է։

— Այդ գէպքում դու կարող էիր նրան հորթ դարձնել, բայց հորթին կանայ խոտ է պէտք եւ կաթ։ Այդ երկուսն էլ մենք չունենք։ Մենք փանկացել ենք, աղջիկս։ Հօրդ դրամները վերջացել են։ Դու լաւ կ'անես մի հարուստի վրայ սիրահարուես եւ նրան ճանկը գցես... Յետոյ դու նրա գլուխները քո անուան կը դրես, ինչպէս ես արեցի հօրդ հետ, եւ նրան ինչ կենդանի ուղենա՞ս կը դարձնես...

— Ես պիտի ցանկանամ նրան կոկորդիլոս դարձնել...

— Կարող ես, եթէ այդ հարուստի հոգին կոկորդիլոսեան է։ Այդ տուժեմ եմ նրա երկարակեցութեան համար։ Հայրդ երկար ապրեց եւ դու կ'ապրէր, եթէ նա իրեն գինովութեան շյանձնէր։ Նա յաջող գործիւս գուբս կ'աւել, որովհետեւ իր մարդ եղած ժամանակ գործիւյի հոգի ունէր։ Ամէն մարդ մի կենդանու հոգի է կրում իր մէջ։ Մէկը՝ գործիւյի, միւսը՝ դայիկ կամ ոչխարի եւ այդպէս...

— Ի՞նչ ես տուժեմ։ Ի՞նչ անեմ այս հորթի հետ, — մօրը հարցրեց վհուկը իմ մասին։

Մայր վհուկը նորից ինձ նայեց յուսախաբ։ Նա շատ բարկացաւ։ Բարկութիւնից նա գէմքով դարձաւ գէպի հաշարանի պատը եւ խօսեց արհամարհանքով անձին նկատմամբ.

— Ասում ես նա դրամ չունի եւ ոչ էլ ձգտում ունի դրամ ունենալու։ Ինքն էլ հորթային հոգեբանութիւն ունի։ Արդ, մենք ո՛չ խոտ ունենք եւ ոչ էլ ջուր նրան կերակրելու համար։ Մեր բնակարանումն էլ մենք չենք կարող այդ հորթին տեղ անել։ Թող, թո՛ղ կորչի-գնայ...

Վհուկը լուռ մնաց։

Մայր վհուկը շրջուեց գէպի ինձ եւ իր ձեռքի երեսը շարժեց վրաս այնպէս, որ կարծես մօղուկ էր քշում.

— Գնա՛, Գնա՛ աշխատանքիդ։

Ես վեր թռայ տեղիցս այնպիսի՝ արագութեամբ, որ ամբողջ շրջուեց։

ևս ուղղեցի այն եւ դառնայով դէպի մայր վհուկը, երախտագիտական զգացումներով լեցուն այնպիսի՝ խոր խոնարհում հետաքրքի նրա առջեւ, որ քիթըս կպաւ սեղանի մակերեսին:

Մայր ու աղջիկ զուարճացան իմ այդ սարկային խոնարհութեան վրայ եւ ծիծաղեցին գեհնական:

Նորից արիւնս սառեց մարմնումս, բայց ես չըղուեցի եւ սկսեցի վաղել խելակորոյս դէպի ճաշարանի մուտքը: Սրճարանը թէեւ մեծ էր, բայց այն նեղ էր: Եւ ես իմ ոչ-մարդկային արագութեան վազքի ճանապարհին չըլում էի անոնները, օղանները: Ես տաք սուրճը եւ այլ խմիչներ եւ ուստիքներ թափում էի հիւրերի վրայ: Ես ընդհարում էի ուսելիքներով եւ խմիչներով բեռնաւորուած մատուցողների օկուտեղների եւ ճնշ նրանց հետ եւ գետին տապալում նրանց: Այդ մահուան սարսափից առաջացած վազք չէր, այլ՝ թուրքի, դեղձանիկ, կապիկ դառնալու վախի մի վազք:

«Տէր Աստուած, թէեւ ես հորթային հոգեբանութիւն ունեցող մէկն եմ, բայց օգնիր ինձ, որ այդ վհուկները չզղջան եւ ինձ հորթ չդարձնեն... Ճիշդ է, ես սիրում եմ հորթերին, բայց ինքս չեմ ցանկանում հորթ կամ այլ կենդանի դառնալ... Ճիշդ է, Տէր Աստուած, իմ կեանքը մի բան չէ, բայց ես նորից ցանկանում եմ մարդ մնալ...»:

Հակառակի պէս, ճաշարանի դուռը ինքնադարձ էր: Եւ ես այն փոխանակ ճիշդ ուղղութեամբ հրէւ, հրեցի հակառակ ուղղութեամբ: Քաղաքակրթութեան մէջ նոյնիսկ, անուշ առարկաներն իրենց դերն ունեն եւ պատիւը: Իմ կատարած անկարգութեան դէմ դուռը բողբոջեց այնպիսի՝ սաստկութեամբ, որ ճոռչաց ու դղրդաց այնքան զօրեղ, որ ամբողջ շէնքը զզրագաց նրա հետ: Դուռը որպէս ապացոյց իմ կատարած անկարգութեան՝ ծռուեց իր ծխնիի վրայ: Բայց ես, անկարգ տարագիրս, մի կերպ դուռն եկայ նրա այլեւս անլարժացած փեղկերի արանքից:

Մայթի վրայ այլ էր աշխարհը: Թէեւ թեթեւ ձիւն էր դալիս, բայց ես ինձ համարեցի ամէնից հրջանիկ մարդն ամբողջ աշխարհում: Ամերիկայում ընդունուած է, որ ամէն մի տարագիր իրեն ամէնից երջանիկ մարդն համարի ամբողջ աշխարհում, եթէ նոյնիսկ շատ ծանր կեանք է ապրում, եւ ինձ նման վհուկների կատարողանքից ազատում:

«Բայց մա՞րդ եմ ես արդեօք, — մտածեցի ես սարսափահար, — կարող է պատահել, որ այդ վհուկներն ինձ արդէն թուրքի են դարձնել կամ կապիկ»: (Այդ վհուկները, երբ մտածում էին ինձ ինչ կենդանի դարձնել, ես իմ մտքում ընտրել էի թուրքի դառնալ կամ էլ մակակօ կապիկ):

Ուստի ես սկսեցի շօշափել ինձ՝ ստուգելու համար իմ ինքնութիւնը: Զեռքս տարայ դէպի քիթս եւ շօշափեցի այն: Ես կարծում էի, որ քիթս փոխադրէն ես թուրքի մի կեռ կտուց կը գտնեմ: Բայց քիթս տեղն էր: Այն, ըստ սովորութեան, փափուկ էր եւ պաղ: Եթէ կապիկ դարձած լինէի, ես չպիտի կարողանայի խօսել: Ուստի՝ ձեռքիս փեղքը միացրի միմեանց, որ ամերիկացի քաղաքական գործիչներից էի սովորել, վեր բարձրացրի եւ սկսեցի պոռայ:

— Ես մա՛րդ եմ, ես մա՛րդ եմ...

Ես ոչ ոքի չէի ուղում դարձացնել իմ մարդ լինելով: Ես ոչ մի քաղաքական կամ այլ տեսակի իմաստ չէի դնում իմ այդ յայտարարութեան մէջ: Ես միայն իմ ցնծութիւնն էի ուղում յայտնել, որ ես մարդ եմ, այլ ոչ մի ուրիշ կենդանի, որ այդ մայր ու աղջիկ վհուկները ցանկանում էին ինձ դարձնել: Իմ յայտարարութիւնը միայն ու միայն ուրախութեան ճիւղ էր ինձ

համար: Ես լսում էի իմ ձայնը, ուրեմը՝ ես դեռ մարդ էի:

Ամերիկացիները, որ ոչ մի բանի վրայ ուշադրութիւն չեն դարձնում, եթէ այդ իրենց չի վերաբերում, սկսեցին հաւաքուել իմ շուրջը: Նըրանք չէին կարողանում հասկանալ, թէ ինչու ես պնդում էի, թէ ես մարդ եմ:

— Big deal, որ դու մարդ ես, — ասաց մէկը թունոտ եւ ձգեց ու գնաց:

Սակայն ես շարունակում էի իմ յայտարարութիւնը, ձեռքերս իրար միացրած եւ օդի մէջ շարժելով:

— Ես մա՛րդ եմ... Ես մա՛րդ եմ...

Սրճարանի ներսում աղմուկ ստեղծուեց: Մարդիկ փորձում էին շքեղեցիկ ծոռած դուռը: Յետոյ մայթի վրայ թափուեցին սպասաւորները, հիւրերը, ճաշարանի տէրը:

— Բռնեցէ՛ք այդ վանդալին, բռնեցէ՛ք այդ վայրենուն, — դուռում էր ճաշարանի տէրը, — նա իմ ճաշարանը տախտակաւ է արել... Նա կոտորել է իմ դուռը... Նա ցաւերել է իմ մատուցողի ծունկը... Նա ինձ երեք հարիւր դոլարի տնտեսական վնաս է պատճառել...

Մի պահու, որին այս ցուրտ ձմրանը տնից երեւի դուրս էր արել նրա շիկահեր հարսը, ձեռքի ցուպի երկաթեայ ծայրով ծեծում էր սառած մայթը եւ միշտ նսյն էր ասում:

— Բռնեցէ՛ք այդ բարբարոսին... Բռնեցէ՛ք այդ բարբարոսին...

Ես այդ պահուի նկատմամբ ոչինչ չունէի: Ես նրա շիկահեր հարսի սիրեկանը չէի, որպէսզի նրան սովորեցրած լինէի տնից դուրս անելու: Իր սկսարովը, բայց այս պահուը լարուել էր իմ դէմ եւ ուզում էր, որ ինձ, որը քիչ առաջ հորթ պիտի դառնար, բռնէին եւ բանտ տանէին:

Տէ՛ր Աստուած: Այդ ո՞ր երկրում է, որ մէկին բռնում են եւ բանտ տանում, որովհետեւ նա չի ցանկանում հորթ դառնալ:

Եւ ես դեռ գոռում էի եւ աղաղակում, որ ես մարդ եմ, յանկարծ օդից մի ոստիկան ծնուեց: Մի հուժկու, առողջ եւ կարմրերես ուստիկան եւ մի ակնթարթի ընթացքում իմ ձեռքերը երկաթեայ օղակով իրար միացրեց: Դեռ չհասկանալով, թէ ինչ կատարուեց, ես շարունակեցի իմ միացւած ձեռքերը ցնցել օդում:

— Ես մա՛րդ եմ... Ես մա՛րդ եմ...

Ոստիկանը սխալ հասկացաւ (ոստիկանները միշտ սխալ են հասկանում): Նա կարծեց, որ ես բողոքում եմ, որ նա բռնութիւն գործադրեց ձեռքերս շրջալի զարկելու համար: Նա նայեց ինձ շատ խոժոռ եւ երկաթեայ սպառ ձայնով ասաց:

— Այս ձեռնակապերը չենց մարդու համար են:

— Հա, — համաձայնեցի ես:

Նա ինձ նայեց զարմացած եւ ձգելով շրջալի ծայրից, ասաց:

— Գնանք...

Ամբոխը ճանապարհ բացեց մեզ համար:

Ես քայլեցի ոստիկանի հետ՝ ետ-ետ նայելով: Ես վախ ունէի, որ վըհակները՝ մայր ու աղջիկ, զղջան ինձ ազատ տրձակելու որոշման մէջ, յետեւիցս դան եւ հենց մայթի վրայ, ամբոխի աչքի առջեւ ինձ որեւէ կենդանի դարձնեն:

Այդ յետոյ էր, երբ ես սկսեցի ուսումնասիրել միջազգային օրէնքները, ահապ, որ ներքին համաձայնութիւն կայ վհուկների եւ իշխանութիւնների

միջև՝ իրենց գործունեությունների քննադատում միմեանց գործերին չխառնելու, եթե ևս վճռակների ձեռքում էի գտնուում, այլևս նրանց ձեռքում էի գտնուում եւ ոչ մի ոստիկան չէր կարող արգելք հանդիսանալ, որ նրանք ինձ մի որեւէ կենդանի չղարձեն։ Դրա հակառակը, վճռակները չէին կարող մի որեւէ կենդանի ղարձնել, եթե ևս արդէն ոստիկանական ապարանջաններ էի կրում։

Այլ կերպ միջազգային ոստիկանությունը խայտառակ կը լինէր, եթէ, ասենք, իմ ոստիկանը չըջուէր եւ իմ փոխարէն տեսնէր մակակօ մի կապիկ, որին նա այդ ցուրտ-ձմրանը ձերբակալել է (մակակոնները ցրտին չեն դիմանում), նրա առջևի թաթերը շղթայի է զարկել եւ միւսով ծածկուած մայրթի վրայով քարշ է տալիս իր յետեւից։

Այդ անշուշտ այն ժամանակ, եթէ վճռակներն իմ յետեւից դային եւ ինձ մակակօ կապիկ ղարձնէին։ Կենդանիների պաշտպանութեան բնկերությունները, մամուլը, ձայնասփիւռը, հեռուստատեսը աղմուկ-ազդուակ կը բարձրացնէին բողոքելու համար այդ հակամարդկային արարքի դէմ։ Իմ նըկարը կը ցուցադրէին եւ նկարիս տակ կը դրէին։

Ռոստիկանական վայրագութեան մի նոր եւ անմեղ պոչ։ Ռոստիկանները մարդուց բացի ձերբակալում են նաեւ կապիկներին։ Նայեցէք այդ խեղճ կենդանուն։ Տեսէք, թէ ինչպէս այդ անմեղ կենդանին իր քարայրիկ ու անկոչիկ տոտիկներով վազում է ոստիկանի յետեւից, այդ ձիւնապատ մայթի վրայով։ Եւ նրա առջևի թաթերը շղթայուած են։ Մենք մարդու իրաւունքների մասին ենք խօսում, աչքաթող անելով կապիկների իրաւունքները...»։

Իմ հարցը աղմուկ կը բարձրացնէր եւ ոստիկանությունը ծաղր-ծանախի տառակայ կը դառնար։

Թող դառնար։ Այդ մահապատերերին հենց այդպէս էլ պէտք է։

Սակայն վճռակները չերեւացին։

Որպէս վնասուց հատուցում ինձ ոտիպեցին հազար դոլար վճարել ճաշարանատիրոջը։ Այդ դրամը չունենալու պատճառով ես վեց տմիս գիշերները այդ շարաքստիկ ճաշարանում աման էի լուանում անվճար։

✽

Վճռակներին եւ այլևս չհանդիպեցի, եթէ չհաշուենք, որ մէկ անգամ հանդիպեցի հեռուից հեռու։ Այդ ժամանակ եւ այլևս Նիւ Եորքում չէի ապրում, այլ՝ մի գիւղաքաղաքում։ Մի գիշեր եւ քնել չէի կարողանում, ուստի՝ դուրս եկայ այն ասն պատշգամբը, ուր ապրում էի։ Լուսնակ գիշեր էր։ Պարզ երկնքի տակով սպիտակ ամպեր էին սահում մութ ու լուս ստեղծելով։ Մէկ էլ տեսնեմ, որ իմ վճռակները՝ մայր եւ աղջիկ, հեծած իրենց ունեւորներին, իրենց մազերը քամուն տուած՝ սլանում էին գէպի հարու։ Նըրանք երբեմն երեւում էին շատ պարզ, երբեմն էլ մութ, երբ մտնում էին ստուերների մէջ։ Թէեւ նրանք ինձ չտեսնէին, բայց ես սարսափահար փախաւտայ սենեակս եւ դուռ ու լուսամուտ պինդ-պինդ գոցեցի։ Մի քանի օր յետոյ հաղորդեցին, թէ Անկարայում վճռակների միջազգային համադումար է տեղի ունեցել։ Այդ ժողովը Անկարայում էր տեղի ունեցել, որովհետեւ թուրքերը շատ բարեսպակամ են վճռակներին։ Խօսք կայ, որ նրանք վճռակներից են տոաջացել...։

ՍՈՒՐԷՆ ՍԱՆԻՆԵԱՆ



Անցեալ տարի, Երեւանի «Սովետական գրող» հրատարակչութիւնը 20 հազար տպագրանակով լոյս ընծայեց մեր հին բանաստեղծութենէն ծագած քաղ մը, որ կ'ընդգրկէ «Ամսօրիկ շրջանից» միմչիւ Ը. դարը: Ձայն կազմած են բանաստեղծ Լեւոն Միրիջանեան և բանասիրական գիտութիւններու տղա-թոր Նորոգ Հանգուցեալ Գրիգոր Յակոբեան: Գրաբար բնագիրներուն դիմաց տրուած աշխարհաբար թարգմանութիւնները կատարած ու տասնըհինգ էջ-նոց յառաջարանը գրած է Միրիջանեան, իսկ իբրեւ խմբագիր յիշուած է բանաստեղծ Լուդվիկ Դուրեան:

Անմիջապէս փախազիծ մը բանալով ըսենք, որ ուղիղ տասնամեակ մը առաջ, «Ամսօրիկ շրջանից» միմչիւ Ը. դարը անունը կրող այս հատորը կազմող-ներուն եւ ասոնց ընկերացող երրորդ մտաւորականի մը (Ս. Դեմիւրիեան) միացեալ ջանքերով «Հայաստան» հրատարակչութիւնը լոյս ընծայած էր ե-րեք հատորնոց շարքի մը առաջին հատորը, որուն մէկ կարեւոր բաժինը, ե-ծ դարերու բանաստեղծական հատկաքաղը, կատարած էր Գրիգոր Յակոբեան ու յառաջարանը ստորագրած էր զարմեալ Լեւոն Միրիջանեան:

Այս տեղեկութիւններուն թւումով կ'ուզէինք պարզապէս ըսել, որ Ներ-կայ ժողովածուն իր ծաւալով, ներկայացման ձևով թէ լայն հատարակու-թեան մատչելի ըլլալու իր նախանձախնդրութեամբ ունի մեծ առաւելութիւն

մը «Մարգարիտներ»ուն ընդգրկած Համապատասխան շրջանին վրայ: Ըժիշկ է, որ ինը հեղինակներէն վեցը՝ Դաւթակ Քերթոզ, Կոմիտաս Կաթողիկոս, Սահակ Զորափորեցի, Սահակղուխտ Սիւնեցի, Խոսրովիղուխտ Գողթնեցի և Ստեփանոս Սիւնեցի «Մարգարիտներ»էն հղածին պէս փոխադրուած են նոր ժողովածուին մէջ, բայց հեղապատկուած եւ ութապատկուած են աւելի Հանգամանաւոր դէմքերուն էջերը, Սահակ Պարթեւի, Մեսրոպ Մաշտոցի եւ Մովսէս Խորենացիի բաժինները, իսկ Յովհան Մանգակունի, որ բոլորովին կը բացակայէր «Մարգարիտներ»էն, նոր Հաւաքածոյին մէջ ներկայացուած է քսանութ բանաստեղծութիւններով:

Յիշեալ անունները Հայոց պատմութեան նշանաւոր դէմքերէն են՝ կաթողիկոս, դիւտարար, թարգմանիչ, պատմագիր, կանոնագիր, բայց անոնց մէջ չի ընկեր Ծանօթ են իրրեւ բանաստեղծ: Սահակ Պարթեւ Հռչակուած է իրրեւ թարգմանիչ եւ բարեկարգիչ, Մեսրոպ Մաշտոց՝ իրրեւ գրի գիւտին հեղինակ, Մովսէս Խորենացի ճերթողահայր տիազոսին տէր ըլլալով Հանգերմ, առաւելաբար պատմահայր է իւրաքանչիւր Հայու մտքին, այլ Քլեմտիկ շրջանից մինչեւ Ը. դար»ը ընդգրկող Հատորը կսւ զայ ըսել, որ ուրիշ մարդերու մէջ Հայ մարդուն երախտագիտութիւնը վայելող մտքի այս ներկայացուցիչները իրենց ետին ձգած են նաեւ բանաստեղծական ժառանգութիւն մը:

Անշուշտ, ամէն ոք գիտէր, որ Սահակ Պարթեւ, Մեսրոպ Մաշտոց, Մովսէս Խորենացի եւ միւսները հեղինակած են կրօնական բանաստեղծութիւններ ու իրենց յատուկ տեղը ունին Շարականցի առանձին բաժիններուն վրայ, բայց մեր իրականութեան մէջ ցայսօր չէ գտնուած մէկը, որ Համարձակօրէն ըսէր մեզի, թէ Սահակ Պարթեւ տէր է քսանութ ինքնուրոյն բանաստեղծութիւններու, Մեսրոպ Մաշտոց՝ վաքսանութ, Մովսէս Խորենացի՝ վաքսանութից:

Տրուած բանաստեղծութիւններուն թիւը ռզեւորիչ է Հարկաւ, բայց, մեր կարծիքով, կարելի էր աւելի խտապահանջ ըլլալ ընտրութեան մէջ ու հետո մնալ աւետարանական կարգ մը դրուագները կրկնող անարուեստ տուրքէն կամ մերկապարանոց փառարանութիւններէն: Խորքով թէ արտայայտչական իր ձեւով Սահակ Պարթեւին արժանի ի՞նչ ունի, օրինակ, սա վերապատմաբ:

Ոստովք եւ տերեւեալ ձիթեմեօք  
Երբայցեցուց մանկունքն օրեմէիմ՝  
Ուրախ լիք, երեսագլմ քաղաք,  
Եւ ցնծա՛, Սիօ՛ն,  
Մալը եկեղեցի:

Կամ՝ «Ծով կննցազոյս»ին ու անոր պէս չքնաղ ուրիշ ալիկոծումներ յօրինած Մեսրոպ Մաշտոցին վրայ ի՞նչ կ'աւելցնեն հետեւեալ ողորմեանները.

Մեղայ, Տէր, բազումոգորմ Աստուած,  
Մեղայ, ազարմեա:  
Մեղայ, Տէր, եւ անկանիւմ առաջի քո,  
Մեղայ, ազարմեա:

Աւետարանը կրկնող կամ զիրար կրկնող նման կտորներուն բեռը կարեւր էր խնայել ժողովածուին կամ անոնց յատկացուած էջերը լեցնել բանաստեղծական այս կամ այն արժանիքով աւելի օժտուած կտորներով: Վերի սոսկիորական ողորմեաններուն փոխարէն աւելի լաւ պիտի ըլլա՞ր արդեօք, եթէ

տեղ տրուած ըլլար դարձեալ Մեքսիկայ Մաչուպիկոյ վերադարձած սա պատկերին:

Ոստաքանց եղէ եւ որպէս գարմանի,  
Պտղակարոյն՝ որպէս ձիթեցի:  
Այլ անյիշալար եւ ամօխակալ փրկիչ,  
Խնայեալ ի մեղուցեալ ծառայիս:

Նոյնպէս, աւելի լաւ պիտի ըլլար, եթէ Յովհան Մանդակունիին անուանով ներկայացուած «Ե թաքոր ի լերին» կտորին վերջին երկու տուները կրկնող «Ջաննաւի խորհուրդը» բոլորովին դուրս ձգուէր հատորէն ու պահուէր չենք գիտեր ինչու դուրս ձգուած «Որք գարդարեցիմ» երգին ամէնէն յատկանշական տունը, կազմողներէն Գրիգոր Յակոբեանի մէկ աշխատանքութեան մէջ մէջբերումով փառաբանուած չորրորդը:

Որք ճորտիտաւր Բանիւ գարդարեալ,  
Պայծառագոցեան եկեղեցիք Հայաստանեայց  
Ի ճեռն սրբոյն Սահակայ,  
Երգով քաղցրութեան հնչմամբ զԱստուած օրհնեցումք:

Սիրելի է մեզի յուսալ, որ անարուեստ վերապատումներն ու կրկնութիւնները հանդուրժելու եւ անկրկնելիներուն հանդէպ անտարբեր մնալու այս տկարութիւնը պիտի դարձանուի շարքին յաջորդ հատորներուն առիթով եւ աւելի յարգ պիտի ընծայուի հայաստանեայց բաներուն:

Մինչ այդ սակայն, մատնանշենք նկատուած մէկ-երկու մշուշներ եւս:  
Մեքսիկայ Մաչուպիկոյ վերադարձած յարքին մէջ շօշափուած են հիմնական երկու հարցեր, մէկը՝ զգացուած անհատական յանգանքներուն աշխարհումը, միւսը՝ հնոցին մէջ ողջ մնացած «գերիս մանկանց» աստուածային հրաշքը, եւ այս երկու նիւթերը, աւելորդ է ըսել, մշակուած են անանձին տոանձին, առաջինը՝ «Ողորմեանքներու դուխին տակ, երկրորդը՝ «Հարցանք»-ում:

Արդ, «Ամսիկ շրջանից միմյնի Ը. դար» ժողովածուն կազմողները տեղ մը իրարու խառնած են այդ երկու իրողութիւնները եւ բոլորովին անյայտ ձգած իրենց շարժառիթը:

Այսպէս, «Դարձն գրաստանն քո ի մէջ» տողով սկսող «Ողորմեանք»-ին երեք տուններէն առաջին երկուքը իբրեւ անանձին բանաստեղծութիւն ներկայացուցած են «Ամսիկ»-ի էջ 58-ին վրայ, իսկ երրորդ տունը տեղաւորած են «Ուր աստուածներ գերիս մանկունս» Հարցին գլուխը (էջ 62), յապուելով այս անգամ վերջինին վերջին տունը:

Ի դէպ, միայն տարբեր նիւթեր ընդգրկած բանաստեղծութիւնները իրարու չեն խառնուած, այլ նոյն բանաստեղծութեան առիթով իրարու խառնուած են նաեւ երկու տարբեր հեղինակներ, նոյն շրջանի կտորները «Ամսիկ»-ի համար ընտրած եւ նոյն շրջանի մէր գրականութեան մասնագէտ, բանասիրական գիտութիւններու առիթը Գրիգոր Յակոբեանի դրչին տակ, «Ամսիկ»-էն մէկ տարի առաջ (1980) լոյս ընծայած իր «Մարտիկանքի ժամբը հայ միջնադարեան գրականութեան մէջ» անուն հատորին էջերուն, այս անգամ «Որք գարդարեցիմ» խորագրով ծանօթ դուխ-գործողին առիթով: Քիչ անդին կ'արտահայտենք այդ երկուութեան երկու երեսները ցոյց տալով երկու էջերը, չկարենալով ըմբռնել դարձեալ, թէ ինչպէս նայն մտաւորականը, իր

նայն դործին մէջ, նայն բանաստեղծութիւնը կրնայ երկու տարբեր հեղինակ-ներու վերագրել եւ խաղաղ սրտով անցնիլ մեկնաբանութեան:

Կայ եւ աւելի զարմանալին: «Շարականներն ժամրը հայ միջնադար-իսն գրականութեան մէջ» աշխատասիրութիւնը իր հեղինակէն զատ ունի նաեւ խմբագիր մը՝ «քառասիրական գիտութիւնների դպրոցի Գ. Վ. ԱՅԳԱՐԻԱՆ» եւ անոր հրատարակութիւնը երաշխաւորած խումբ մը մտաւորականներ: «Գիրքը երաստարակութեան եւ երաշխաւորել գրախօսներ՝ քառասիրական գի-տութիւնների դպրոցի Ա. Գ. ԱՌԱՔԵԼ ԵԱՆԸ, քառասիրական գիտութիւնների քեկնածուներ Ա. Ա. ՂԱԶԻՆԵԱՆԸ եւ Վ. Ս. ՆԵՐՍԻՍԵԱՆԸ»:

Եօթանասնամեայ հեղինակի մը դործը նման խոցելի կողմերէ զերծ կա-ցուցանելու համար՝ խմբագիր ու զրախօս այդքան տոգորներու եւ տոգորու-թեան թեկնածուներուն համար այնքա՞ն դժուար բան էր արդեօք կռահել այդ երկուութիւնը ու խնայել անոր ծանրութիւնը երաշխաւորուած դործին:

Երկրորդ փակագիր: Չենք զիտեր այս քանիերորդ անգամն է, որ կը հաստատենք, թէ սրբագրութիւնը դատադիր դործ է եւ այդ դատէն դերծ չեն կըցած մնալ մեր թերթերէն ու դրոշներէն եւ ոչ մէկը, ընդ որս եւ մենք: Դեռ մեր նախորդ թիւին մէջ, եւ մեզի համար մինչեւ օրս անհասկնալի պատճառով մը, Աշոտ Պատմագրեանէն ու Նոր-Այրէն արտատպուած դրու-թիւններուն երկրորդ էջերը իրարու տեղ դրուած էին, զլիսատուած էր Այվա-զովսկին սկսող զխաղաղը, Օշականի «Սահակ Պարգեւեան» վէպին օրերորդ Գոհարեանը տեղ մը եղած էր օրիւրդ Վառլան, եւ այլն, իսկ մեր անցեալ տարուան թիւերուն մէջ Մովսէս Հերկելեանի յօդուածին Միքէլ Անճելոյ փո-խարինած էր Լեւնարտո տա Վինչիի, ու Յարութիւն Պէրպլեանի դրութեան մէջ Խալափեանի հերոսներէն Տիրայրը ուրիշ էջի մը վրայ դարձած էր Տի-րան:

Բայց կայ տարբերութիւն մը մեր եւ Հայրենի հրատարակչութիւննե-րուն միջեւ, անոնց անձնակազմերուն առատութիւնը բան մը կը նշանակէ ի վերջոյ, պէ՛տք է նշանակէ, եւ յետոյ, քիչ մը կը տարբերին իրարմէ թե-թային հեւքն ու հատորային հանդարտութիւնը, եւ յետոյ իրարմէ չա՛տ կը տարբերին ընթացիկ յօդուածներուն ու սրբատառ տեղդոմներուն պահան-ջած բծախնդրութիւնները:

Վերագրանալով «Անտիկ շրջանից միջին Ը. դար» անուն ժողովա-ծուն, յայտնենք, որ կազմողները, զժրախտաբար, ընթերցողին չեն պար-զած նաեւ իրենց ընտրած կտորներուն աղբիւրները, հանգամանք մը, որ դուռ կը բանայ ուրիշ տարակոյսներու: Կարգ մը նշաններ ցոյց կու տան, որ Շարականցէն, Ժամագիրքէն կամ Տաղարանէն զատ այլ հրատարակութիւն-ներ կամ ձեռագիրներ եւ ունեցած են անոնք իրենց տրամադրութեան տակ՝ Ուրիւակ, Շարականցը եւ միւսները «մատենէր» կ'ըսեն ու «յայտներ», «Անտի-կ»ը՝ «մատենէր» (42) ու «յայտներ» (154): Շարականցը եւ միւսները հին «աւ»ին տեղ ընդհանրապէս կը կիրարկեն աւելի ուշ իւրացուած «օ» ձայնաւո-րը, մինչ «Անտիկ»ը կարգ մը պարագաներու պահած է հին «աւ»ը (84, 184): Պատասխանատուութենէ զերծ մնալու կամ աւելի մեծ պատասխանատուու-թեան մը տակ մնալու համար, նման ժողովածուներ կազմողները ընդհան-րապէս կը նշեն իրենց օգտաւորած աղբիւրները, ինչ որ զլացած են ընել այս դործը գլուխ հանած մտաւորականները, առիթ տալով, ինչպէս ըսուե-



ցու, անբաղձալի երկուութիւններու, Հեռու ապրելով մեծ մատենադարաններէն ու մեծագրական գանձատուններէն, հայ մարդը եկեղեցիներուն մէջ լըսած է միայն հոռ կարդացածը կամ իր տրամադրութեան տակ ունի միայն Շարակնոցը, Ժամագիրքը կամ Տաղարանը, մէկը կամ միւսը, որոնց հետ, այս անգամ հնչական թէ ուղղագրական առումով, հայտ չեն ձևնորդի մէջ նկատուած շուրջ յիսուսն պարագաներ: Կ'ըսենք հայտ չեն եւ չենք ըսեր սըխալ արտագրուած են անոնք ձևնորդի մէջ, եւ որովհետեւ ոչ մէկ ծանօթութիւն տրուած է այդ մասին, խնդիրը կը մնայ քննութեան ենթակայ, թէեւ կասկածը տուեալաբար կը ծանրանայ ձևնորդի վրայ, ուր թոյլ տրուած աններդաշնակութիւններուն ետին դժուար չէ ենթադրել անուշադիր պաշտօնեաներու հերթական երթեւեկը նորէն:

Անփութութեան հետեւանքով թոյլ տրուած աններդաշնակութիւնը ծընունդ տուած է նաեւ թարգմանական աններդաշնակութիւններու, հակառակութիւններու թէ իմաստային թիւրիմացութիւններու գծով: Սխալ արտաբերուած բառը զարմանալիօրէն յաճախ հիշդ թարգմանուած է, իսկ այլուր սխալ արտագրուածը առաջնորդած է թարգմանական անճշտ արդիւնքներու:

Թարգմանչիք, Լեւոն Միրիջանեան, կ'ըսէ.

«Մենք նկատի ենք ունեցել, որ ներկայ մեր քարգմանութիւնից կտաղեմն օգտուելով նաեւ այն անձինք, ովքեր երբեւէ տաղացի քարգմանութիւններ կ'անեն՝ մեր գտնովը այլ լեզուներով ներկայացնելու համար»:

Նման արդար փառասիրութիւններ հետապնդող անձը, պէտք է ենթադրել, որ վերստին ու վերստին ստուգած է իր թարգմանած կտորներուն բընագիրները, բայց ցաւօք, անհարկուած անճշտութիւններուն առատութիւնը նման բծախնդրութեան մը մասին չի վկայեր: Զենք կրնար անյարբէր թուոր պարագաները յիշել հոռ, բաւարարութեան հետեւաբար մէկ-երկուքը ուշադրութեան յանձնելով:

Յնդրոյ առաքելայ ժողովածուին մասին յաւելեալ գաղափար մը տալու համար քիչ անդին մեր անջատած մեծ ու փոքր երեք-չորս կտորներուն աշխարհաբար փոխադրութիւններուն վրայ հազիւ թէ կարելի է նուազումներ կուտնել, մինչ անոնց գրաբարին մէջ, մեր աղբիւրներուն համեմատութեամբ, սպորդած են հինգ-վեց վրէպներ, թարգմանչիին աչքին առջեւ, եբք ինք. թարգմանելը այնքան մեծ սէր կը տածէ գրաբարին հանդէպ, անհրաժեշտ կը գտնէ անոնց հրատարակութիւնը թարգմանութեան հետ, ա'յն առողջ տրամաբանութեամբ, որ այդ «շէպֆուլ անհամախառն տւելի միշդ ու հարապատօրէն են վերաբնակարարութեան քննարկները, ովք, պահպանուած է տրուեալ տեղեկագրութեան ամբողջական չափովը»:

Նրբերանգները, ոճը...

Որոնք միշտ չեն յարգուած:

Քիչ անդին մեր արտագրած բանաստեղծութիւններուն պարագային, տուեալներն՝

«Որչ յարաբերական դերանունը պէտք է ըլլայ յոգնակի՝ Որք:

Նոյն տողին «մեծութեան» մեծութիւն:

Յաջորդ տունը սկսող դերանունը, նոյնպէս, պէտք է ըլլայ յոգնակի՝

Որք:

Վերջին տունին «մեզ» տրական հոլով՝ ի մեզ:

Երկրորդ բանաստեղծութեան «Ի Հայաստան աշխարհ» աշխարհ:

Իսկ վերջինին «յգեալք» լցեալ:

Հակառակ գրաբարեան նրբերանգներուն այս զանցումին սակայն, բո-

լորն ալ ճիշդ բարձրացած են ու փոխադրուած են ճիշդ:

Գրարարը.

Որք գերկրաւոր մեծութեան փառաց խաւար կոչեցին,

Աշխարհաբարը.

Նրանք երկրաւոր փառքի ճոխութիւնը խաւար կոչեցին:

Բայց սխալագործած գրարարը միշտ չէ, որ ճիշդ հնչած է աշխարհաբարին մէջ: Երբեմն սխալ արտագրուածը առաջնորդած է սխալ փոխադրութեան: Ահաւասիկ նմոյշներէն մէկը, Մովսէս Խորենացիի բաժինէն.

Որ քազմազեայ քրովքէից անտեսանելի,

Թարգմանութիւնը.

Որ քազմազի քրովքէից անտեսանելի (էջ 88):

Ինչպէս զգալի է թուոյն, այս «բազմազի» բառը որակական նբերանդներէ զուրկ բառ է, գեղեցիկ չի հնչեր հոս, ոչինչ ունի քերթմբակաւ ու բնաւ շարականային չի թուիր, եւ արդէն բնագրին մէջ քազմազի չեն քերթմբէները, այլ քազմաչեայ են:

Որ քազմաչեայ քրովքէից անտեսանելի, (Շարակնոց, էջ 33):

Տակաւ ժողովածուն կազմողները քաջածանօթ են հարկաւ բնագրուած ժամանակաշրջանի գրականութեան, բայց չենք գիտեր ինչու այդքան շուտ մոռցած են նոյն գրականութեան մէջ յաճախ թեւածող եւ տեսողական նոյն բազմապատկուած շնորհներով թեւածող քերթմբէները, ա'յնքան շուտ, որ չեն նկատած իրենց կազմած ժողովածուն Մովսէս Խորենացիին վերադրուած բաժինին մէկ այլ էջին (120) վրայ նոյն յատկանիշներով ման եկող քերթմբէները, որոնք կրնային «բազմազի» անհեթեթութենէն բնուած փոփոխուող զգաստութեան մը մղել գիրենք:

Այսօր ընդ քազմաչեայ քրովքէում

Այս խոցելի կողմերուն առնթներ, խնդրոյ առարկայ ժողովածուն դուռ կը բանայ նաեւ այլ հարցականներու, ջարդ մեծ մասամբ անանուն մնացած երգերը յանկարծօրէն այս կամ այն անունին կապելու դիւրութեան համար մանաւանդ:

Մենք պատկի փորձ մը ըրինք «Ամսիկ շրջանից միմչեւ Ը. դար»-ը լեզու հոգ բանաստեղծութիւններուն աղբիւրները ստուգելու եւ գտանք, որ չհաշտուած հինգ-վեց կտորներ, միւս բոլորը առնուած են Շարակնոցին, բայց Շարակնոցին տուած ծանօթագրութիւնները յաճախ խոտոր կը համեմատին «Ամսիկ»ի մէջ նուիրագործուած հեղինակ-բանաստեղծութիւն հաշտութեան:

Լեւոն Միրիջանեանի ստորագրած յառաջաբանը, որմէ կը սպասուէր բանասիրական ստուգումներու երաշխաւորութիւնը, բաւարարուած է ընդունած բանաստեղծութիւններուն զեղարուեստական արժանիքներուն ընդգրծումներով, երբ նոյնքան կարեւոր էր գեղ. միջեւ այսօր անորոշ կամ կիսանորոշ մնացած անոնց հեղինակային դիմագիծելուն հաւասար ճշդումը:

Հաշտութեւ հատորին մէջ ձգուած այս բացը արդէն գոյ տարածութիւնները փարատելու փոխարէն՝ նոր տարածութիւններ կը գիգէ հետաքրքիր մտքերուն մէջ:

Օրինակ, Շարակնոցին մէջ «կամում Խաղկազարդի կիւրակիւն»-ը մերասպարուած է Ներսէս Կլայեցիին, մինչդեռ այդ կանոնէն չորս կտոր ներկայացուած է Սահակ Պարթեւին անունով եւ այդ մասին ոչինչ ըսուած է ընթերցողին:

Շարակնոցի մէջ «զԱմսիկըն» անուն բանաստեղծութիւնը ունի եր-

կու հեղինակ. «զԱնտիկարն՝ Յովհան Մանգուկունին եւ այլք առնն՝ քէ Օսմանցի», բայց «Անտիկար զայն ընծայած է, գործեալ առանց այլեւայլի՝ Յովհան Մանգուկունին (էջ 142)։

Միեւնոյն աղբիւրին մէջ, կ'ըսուի գործեալ։

«... զԹարգմանչաց օրհնութիւնն, եւ զԱւլբ Սարգսի օրհնութիւնն՝ Վարդան վարդապետին է ասացեալ», այլ թարգմանչաց օրհնութիւնը ներկայացուած է Յովհան Մանգուկունիի անունին տակ (էջ 188)։

Վարդապետն ու կարգ մը ուրիշ տօները փառերգող շարքին համար՝ Շարակնոցը կը յիշեցնէ. «... Զայս ամենայն՝ ոմանք Անանիայիմ տան, եւ Եմանք՝ Խարենացւոյն»։

Բայց Գրիգոր Յակոբեանի եւ Հեւոն Միրիջանեանի կազմած հատորին մէջ ո'չ Անանիային անունով ներկայացած է Վարդապետը եւ ոչ ալ Խարենացիին, այլ՝ Ստեփանոս Սիւնցիին (էջ 188)։

Շարակնոցէն կատարուած շեղումը պէտք չէ անպայման շեղում նկատել եւ ոչ ալ անոր հաւատարիմ մնալու պարտքան՝ ճշգրտութեան փաստ, որովհետեւ երկուութիւնները տիրական են հոն եւս։ Այնուամենայնիւ, ինչպէս կ'ըսէ նոյն ժամանակաշրջաններու բերքին քաջահմուտ Մանուկ Աբեղ-հան, «Սակաւաթիւ ծածօթութիւններն այդ մասին կամ 13րդ դարից եմ գտնիս, կամ երգերի ծագովածունքի», Շարակնոցի մէջ դրուած տեղեկութիւններ եմ, որոնք Այնգալէս շատ եին չեմ, որովհետեւ Շարակնոցի շատ եին ձեռագիրներ չաւնիմք»։

Կարեւորը այդ սակաւաթիւ ծանօթութիւնները հաստատելու կամ հերքելու ճիշտով ձեռք բերուած յստակացումն էր, ընտրական նոր լոյսը, այն տրամաբանական հաւատարմութիւնը, առանց որուն նման գործ մը կը կոտորեցնէ իր գիտական արժէքը եւ կը ձգէ ոչ մեծ պատասխանատուութեամբ կատարուած աշխատանքի մը տպաւորութիւնը։

Մենք չենք գիտեր, թէ ինչու կատարուած չէ ձեռագրային, աշխարհահայեացքային, յեղուական ու ոճական հիմունքներով հնարաւոր ոտուկումներու այդ փորձը, բայց գիտենք, որ նուիրական աշխատանք է աստիկա եւ այդ ճամբուն վրայ նոր արդիւնքներ կարելի է ձեռք ձգել միայն Հայաստանի մէջ, ուր բանահիւսութիւնը ամէն օր նոր լոյս մը կը նետէ մութ մնացած բազում հարցերու վրայ։

Իր այս ձեւին մէջ, «Անտիկ շրջանից մինչեւ Ը. դար» հատորին ամփոփած բանաստեղծութիւնները մենք կը շարունակենք կարգաւ իրելու ըստ ինքեան գործեր, առանց անոնց հեղինակային կշիռին, տնայէս՝ ինչպէս կը կարգայինք զանոնք, ընդգծելով նոյն ատեն, որ գործը կը մնայ միշտ շահեկան, Հայաստանի թէ Սփիւռքի մեր զանգուածներուն համար հաւատարապէս, միջնորդաբար բանաստեղծական մեր ժառանգութիւնը եկեղեցական շրջանակներէն քսան հազար տալֆանակով դուրս բերելու իր առաջին արժանիքով, մեարդական ուղղագրութիւնը յարգած ըլլալու երկրորդ հանգամանքով եւ զրաբար բնագիրները պարզ ընթերցողին հասկնալի ընծայող թարգմանչական իր նախանձախնդրութեամբ։

Կատարուած աշխատանքին մասին ընդհանուր գաղափար մը տալու համար՝ յաջորդ էջերուն կը ներկայացնենք քանի մը յատկանշական նմոյշներ։

## ՈՐՔ ԶԱՐԴԱՐԵՑԻՆ

Որք զարդարեցին սմբուկնաբար զիմաստա անեղին,  
Հաստատելով յերկրի զգիր կենդանի,  
Հովուել զհօտ նոր Իսրայէլի,  
Երգով քաղցրութեան հնչմամբ զկատուած օրհնեսցուք:

Որ զերկրաւոր մեծութեան փառաց խաւար կոչեցին,  
Ապաւինելով ի յոյս ամանի փեսային,  
Անհատ բանին արժանի եղեն,  
Երգով քաղցրութեան հնչմամբ զկատուած օրհնեսցուք:

Որ զօրութեամբ Հօր իմաստութեան էին անեղի  
Հաստատեցին զաթառ սրբոյն Գրիգորի՝  
Թարգմանութեամբ հշտնագրութեան.  
Երգով քաղցրութեան հնչմամբ զկատուած օրհնեսցուք:



Որք քաղաւորաց ազգաց եւ ազանց  
Գերագոյն ցուցին արփիափայլ զերգս հոգեւորս,  
Հնտրեալ դասուց վերին Սիւմնի.  
Անմաստաց լուսոյն երկրպագեսցուք:

Որ խորհրդեամբ հշտնարիտ լուսոյ փառաց անեղին  
Նկարագրեցաւ մեզ զիր կենդանի՝  
յԱրգանդ մաքուր Մեծին Մեքալպայ.  
Անմաստաց լուսոյն երկրպագեսցուք:

Որք գծածկեալ խորհուրդ աստուածգիտութեան  
Տնօրինաբար յայտնեալ ծանուցին,  
Հանգոյն սրբոյ մեծին Մովսէսի.  
Անմաստաց լուսոյն երկրպագեսցուք:

Որ յօրինակ հշտնարիտ սիրոյ առաքելոցն  
Ազրեքաբար ի մեզ էացաւ.  
Հոգի շնորհաց բղիսումն անապառ,  
Անմաստաց լուսոյն երկրպագեսցուք:

Որ երկոճումբ սուրբ լուսաւորչօք տանս Թորգոմայ,  
Հաստատեցեր զեկեղեցիս Հայաստանեայց,  
զԼոյս իմաստից մեզ ծագելով,  
Մաղթանօք սոցա, Քրիստոս, խնայեա ի մեզ:



Նրանք տնօրինեցին միտքն աստուածային՝  
Երկրի վրայ հաստատելով գիրք կենդանի,  
Որ հավուեն հօտը նոր խորայելի-  
Քաղցրահունչ երգով օրհնեցէ՛ք Աստծուն:

Նրանք երկրաւոր փառքի նախնիներն իսկապէս կոչեցին,  
Ազատիներով անմահ փեսայի յայսին,  
Արժանի եղան անմահ մտքերին-  
Քաղցրահունչ երգով օրհնեցէ՛ք Աստծուն:

Նրանք Աստծու իմաստութեան զօրութեամբ  
Հաստատեցին աթոռ սուրբ Գրիգորի՝  
Նշանագրերը մեկնաբանելով-  
Քաղցրահունչ երգով օրհնեցէ՛ք Աստծուն:



Նրանք ազգերի եւ ցեղերի քաղաքներին  
Տալին գերազանց եւ արփիափայլ երգերն հագնուր՝  
Ընտրելով դրանք դասերից վերին Միանի-  
Անմատոյց լոյսին երկրպագեցէ՛ք:

Աստծու փառքերի նշմարիտ լոյսի խորհրդով  
Մեզ նկարագրուեց կենդանի գիրք՝  
Մաքուր արգանդում Մեծն Մեքսոյի-  
Անմատոյց լոյսին երկրպագեցէ՛ք:

Ծածկեալ խորհուրդը Աստծու նախնական՝  
Տնօրինաբար նրանք յայտնեցին,  
Նմանելով սուրբ մեծն Մովսէսին-  
Անմատոյց լոյսին երկրպագեցէ՛ք:

Ըստ օրինակի սուրբ առաքելոց  
Ճշմարիտ սիրոյ, ձեր մէջ էացաւ  
Շնորհների բխման ռզին անսպառ-  
Անմատոյց լոյսին երկրպագեցէ՛ք:

Դու, որ Թորգոմի տան երկու սուրբ լուսաւորիչներով  
Հիմնադրեցիր եկեղեցիներն Հայաստան երկրի՝  
Լոյսն իմաստութեան մեզ ծագեցնելով,  
Սրանց մաղթանքով, Քրիստոս, խնայիր դու մեզ:

### ՆՄԱՆՆԵԱԼ ՄՈՎՍԷՍԻ

Նմանեալ Մովսէսի Տէր վարդապետ,  
Բերելով զգիր օրինաց ի Հայաստան աշխարհ,  
Որով լուսաւորեցան ազգ որդւոց Թորգոմայ:

Քանզի մա արժանաւորեցաւ կալ ի սինկական փառաբանութեանմ,  
Եւ ընկալեալ պատգամս կենդանիս,  
Նայր ի սրայէլեան բանակին,  
Որով լուսաւորեցան ազգ որդւոց Յակովբայ:

Արդ, աղաչեմ գոյնին հեգութիւնդ, Տէր վարդապետ,  
Բարեխօսեալ առ Հայր ի յերկինս՝ վասն քո տօնողացս,  
Քանզի քեւ լուսաւորեցան մանկունք սուրբ եկեղեցւոյ:

### ԿԱՆՈՆ ՍՐԲՈՑ ԹԱՐԳՄԱՆԶԱՅ

Ցնծացէ՛ք այսաւր ազգ եւ ազինք ամենայն,  
Ի յիշատակի սուրբ վարդապետացն,  
Որք պայծառացան լուսովն երկնային:

Ցնծացեալ բերկրեցան ի փառս Որդւոյն Աստուծոյ,  
Եղին զաւրաւորք ի պատեքազմի,  
Գիշտեմն անաւրէն ի սիրոյ բարձին:

Անմարմնացեալքն ի մարմնի  
Հրեշտակաւորաւն առաքինութեամբ,  
Զարդարեցին փառաւ ասորք գեկեղեցի,  
Եւ եղին քարոզք Որդւոյն Աստուծոյ:

### ԱՆՃԱՌԵԼԻ ՇՆՈՐՀՕՔ ԼՅԵԱԼՔ

Անճառելի շնորհօք լցեալք  
Ի յիշատակի սուրբ վարդապետին.  
Խնդրեմք ի քէն, Տէր,  
Կեցո զանձինս մեր:

Եւ զնզնութիւն սրբոյ վարդապետին,  
Ընկալցաւք ի սիրտս մեր հաւատով,  
Բարեխօսութեամբ սարա, Տէր,  
Կեցո զանձինս մեր:

Դատաւրեալ ընդ անմարմնական բազմութիւնսն,  
Եւ ի սրբոյ հագւոյն պսակեալ,  
Ի ճեռն սորին բարեխօսութեան, Տէր,  
Կեցո զանձինս մեր:



Տէր ուսուցիչը Մովսէսին էր նման,  
Բերելով զիրն աստուածային՝ ի Հայաստան,  
Որով լուսաւորուեցին ազգերը Թորգոմի որդւոց:

Արժանացաւ նա սինայական փառաբանման,  
Եւ, առնելով պատգամները անմահական,  
Տուեց իսրայէլեան բանակին,  
Որով լուսաւորուեցին ազգերն Յակոբի որդւոց:

Արդ, ազաւում եմ քո հեղութեանդ, տէր ուսուցիչ,  
Բարեխօսիր երկնում Հօր առջեւ՝ քեզ տոնողներիս համար,  
Քանզի քեզեզ լուսաւորուեցին ծառաները սուրբ եկեղեցու:



Յնծացէ՛ք այսօր, ազգեր եւ ցեղեր ամենայն,  
Յիշատակն է տօնում սուրբ ուսուցիչների,  
Որոնք պայծառացան երկնային լոյսով:

Յնծութեամբ բերկրեցին ի փառս Աստուծոյ Որդու,  
Պատերազմում զօրաւոր եղան,  
Անօրէն իշխանին մէջսդից վերացրին:

Մարմին առած ամմարմնացեալները,  
Հրեշտակաւորօն առաջինութեամբ,  
Մուրբ եկեղեցին զարդարեցին փառքով  
Եւ եղան ճարգողները Աստուծոյ Որդու:



Ի յիշատակ սուրբ ուսուցչի՝  
Աննառելի շնորհքով լցուած,  
Քեզանից մենք խնդրում ենք, Տէր,  
Պահպանիր դու անձերը մեր:

Ճգնութիւնը սուրբ ուսուցչի  
Հաւատով մեր սիրտն է լցնում,  
Բարեխօսութեամբ նրա, Տէր,  
Պահպանիր դու անձերը մեր:

Դասուել է նա ամմարմնական  
Բազմութեան մէջ եւ պսակուել է սուրբ հազով.  
Բարեխօսութեամբ նրա, Տէր,  
Պահպանիր դու անձերը մեր:

### ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ

Մանդակունին թարգմանիչներին նուիրել է Ծ շարական, որից էլ՝ կանոնական, իսկ մէկը՝ պարականոն:

Ըստ շարականի, թարգմանիչները եղել են նուիրուած, դադարաւորական մարդիկ, որոնք աւօրեայ երկրային փառքն ու մեծութիւնը համարել են սին եւ զխաւար», իրենց յոյսը դնելով մշտական փառքի, հոգեկան մեծութեան ու անուան վրայ: Մանդակունին ակնարկում է, որ հենց այդ հոգեկան կեանքի, կենդանի դրի համար էր, որ Մեծն Իսահակը արհամարհեց պարթեւներին հայրենի պայազատութիւնը, ընտրեց եկեղեցականը, հոգեկանին ծառայելու ուսպարէզը եւ անմահացրեց իրեն: Այդ հոգեկան կեանքի համար էր, որ Մեսրոպ Մաշտոցն էլ հեռացաւ աշխարհային, արքունի դործերից, առանձնացաւ եւ դարձաւ դրի ու գրականութեան հիմնադիր, հոգեկանի փառաւոր ու անմահ ծառայ:

Որք գերկրաւոր մեծութիւն փառաց խաւար կոչեցին,  
Ապաւինելով ի յոյս անմահ փեսային՝

Անհառ քանին արժանի եղին... (Շարական, էջ 692):

Այդ թարգմանիչները, լցուած հոգեկան զօրութեամբ եւ իմաստութեամբ, կարողացան Գրիգոր Լուսաւորչի հիմնադրած հայ եկեղեցին աւելի հաստատուն, ամուր ու ազդային դարձնել՝ բազմաթիւ թարգմանութիւններով եւ մայրենի լեզուի ժամերգութեամբ:

Որք զօրութեամբ Հօր իմաստութեան էին անեղի,  
Հաստատեցին զաթռա սրբայն Գրիգորի՝

Թարգմանութեամբ նշանագրութեամբ... (Շարական, էջ 692):

Թարգմանում է Ս. Գիրքը, որն իր բարերար ազդեցութեամբ զօրեղ ուղղակ է հանդիսանում հայ հոգեւոր կեանքի համար: Հայ եկեղեցին հարուստանում է նոր երգերով, քարոզներով ու ազօթ քերթով: Այդ մասին է երգում նոյն շարականի միւս տունը:

Որք նարախտուր քանիւ զարգարեալ պայծառագոցեցան,  
Եկեղեցիք Հայաստանեայց ի ձեռն սրբայն Սահակայ... (Շար., էջ 693):

Օրհնութեան երկրորդ մասն աւելի ջերմ ու քնարական է:

Ե. զարի թարգմանիչներն եղել են ո՛չ միայն գործի մշակներ, այլեւ՝ հոգեւոր երգի հիմնադիրներ, հոգեբուխ բանաստեղծներ: Սրանք գովերգել են ոչ թէ թագաւորներին ու նրանց տարած սին յաղթանակները կամ աշխարհիկ, ժարմուկան վայելքները, այլ յօրինել են որտարուիս, ջերմ, հոգեւոր երգեր՝ զգերազոյն քան զգովասանական եւ գյաղթողական երգս թաւաւորաց ազգաց:

Որք քաղաւորաց ազգաց եւ ազանց,

Գերագոյն ցոյցին արփափայլ գերզս հագեւորս... (Շար., էջ 693):

Յաջորդ տան մէջ պատկերւում է Մեսրոպ Մաշտոցը որպէս կենդանի գիր ու գրականութիւն ստեղծող:

Որ խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց անեղին,

Նկարագրեցաւ մեզ գիր կենդանի, յարգանդ մաքուր մեծին Մեսրոպայ,

Անմատոյց լուսոյն երկրպագեցուք... (Շարական, էջ 693):

Գ. Ա. ՅԱԿՈԲԵԱՆ

(Շարականների ժամրը հալ միջնադարեան գրականութեան մէջ — V-XV ԴԴ., էջ 99-100):



ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ

«Կամնմ սրբոց քարգնանչաց» շարականներից Վարդան վարդապետին են պատկանում «Որք գարգարեցին» Օրհնութեան երկու պատկերները: Ծարականն երգում է ակ ձայնով: Օրհնութեան առաջին պատկերը («Որք գարգարեցին») բաղկացած է չորս տնից, բոլորն էլ սկսվում «Որք» դերանունով: Ծարականի սկզբում հեղինակը նկատի ունի Սահակին, Մեսրոպին եւ սրանց աշակերտներին, որոնք պայծառացրին աստուածային իմաստութիւնը եւ իրենց յօրինած գիր ու գրականութեան եւ թարգմանութեան միջոցով նուիրեցին Հայ ժողովրդին: Ծարականը Մ. Մաշտոցի հիմնած այբուբենը համարում է «գիր կենդանի», որովհետեւ այդ գրերի միջոցով հետագայ սերունդներին եւ ապագայի համար հաղորդած մտքերն ու գաղափարները, ուրիշ խօսքով՝ ազգային գրականութիւնն անմահանալու է:

Որք գարգարեցին սմօրիմարար գիմաստս անեղին,  
Հաստատելով յերկրի գգիր կենդանի... (Ծարակնոց, էջ 692):

Ըստ շարականի, Սահակն ու Մեսրոպն արհամարհեցին երկրաւոր փառքն ու մեծութիւնը, ընտրեցին «լուսեղէն բաժնի» ճանապարհը: Սահակը թողեց Հայրենի ապաշաղատութիւնը պարթեւազանց, իրեն նուիրեց Հայ մշակոյթին, եկեղեցուն, եւ աստուածային բանին, իսկ Մեսրոպը լքեց արքունի եւ զինուորական ծառայութիւնները, լցունց սուրբ հոգու զօրութեամբ եւ նոյնպէս նուիրուեց իր ժողովրդին: Երկուսն էլ անմահացան իրենց անմահ գործերի հետ:

Օրհնութեան միւս հատուածը կամ երկրորդ պատկերը նուիրուած է թարգմանիչների ձեռքով խաղճուած Հայոց հոգեւոր երգին եւ, աւանանայէս, Սահակին ու Մեսրոպին:

Պատկերաւոր եղանակով շարականը ցոյց է տալիս, որ մեր առաջին հոգեւոր երգերի հեղինակները, տակաւին Ն. դարում, աշխարհի միւս ջրիտոնեայ ազգերին ցոյց տուեցին Հայոց հոգեւոր երգի հարստութիւնն ու պայծառութիւնը:

Որք քազաւարաց, ազգաց եւ ազանց գերագոյն ցուցին  
Արիիսպայլ գերզս եռգեւորս բնագեւալ դասուց վերին Սիւվնի...  
(Ծարակնոց, էջ 693):

Այս շարականին մի տունը նուիրուած է աւանանայէս Մեսրոպ Մաշտոցին, որը համարւում է մեր գիր ու գրականութեան ստեղծողը:

Որ խորհրդեամբ ճշմարիտ լուսոյ փառաց անեղին,  
Նկարագրեցաւ մեզ գիր կենդանի յարգանգ մաքուր մեծին Մեսրոպայ  
(Ծարակնոց, էջ 693):

Վարդան վարդապետի շարականները վեհ բովանդակութեան հետ ունեն նաեւ գեղեցիկ, ինքնուրոյն ձեւ, որտեղ տիրապետող եղանակն այլաբանութիւնն ու խորհրդածութիւնն են՝ բնորոշ, ինքնատիպ պատկերներով: Թարգմանչաց նուիրուած շարականներում հեղինակը Բրիստոսի մարդեղութեան խորհրդի եւ կրօնական գաղափարների կողքին հնչեցրեց նաեւ ազգային մշակոյթի մեծարժան ու Հայրենասիրական եղանակներ՝ ի դէմս Սահակի, Մեսրոպ Մաշտոցի եւ աւագ ու կրտսեր թարգմանիչների:

Գ. Ա. ՅԱՆՈՒՅԱՆ

(«Ծարակնանքի» ժամը հայ միջնադարեան գրականութեան մէջ — V-XV դդ., էջ 267-269):

## Շ Ա Ր Ժ Ո Ւ Մ

Պիտի դառնամք իրարու  
 երբեմն առանց անիւններում,  
 ուղիներում՝  
 — քուագրուած եւ ծանօթ —  
 Մեր անծանօթ ոստումներուն  
 դաշտերը լայն պիտի բացուին  
 անժամանակ  
 սպասելով շարժումին մէջ  
 Միջերկրական դուրերուն:

Պիտի սպասենք իրարու  
 երբեմն առանց ժամադրութեան,  
 տեղի,  
 աստղի,  
 կռակներու՝

Փոխադրելով դուրի քառեր  
 անապատի ճուղիներուն:  
 Պիտի քակուիմք իրարու մէջ  
 երբեմն առանց հանգոյցի  
 եւ ճամբորդենք իրարու մէջ  
 կայարանէ կայարան՝  
 միշտ հասցէներ փոխելով:  
 Ընդելուզուած իրարու մէջ՝  
 պիտի փնտռենք մենք զիրար  
 լուսնկայի շողերով  
 կամ աչքերով գառնուկներուս  
 մորթուած,

Մինչեւ որ գառ,  
 Բլլաս  
 արշաւին մէջ —

Ըլլառ ուրիշ,  
 ուրիշներ,  
 հրագումդեր մետաղի,  
 աստղեր սիրուն՝  
 ընթացիւ մէջ սկսնակ  
 եւ ճոյնքան եին,

Ըլլառ շքերթը ցաւիս,  
 մեծ  
 ծարաւիս  
 քնածող  
 ամճրելի մէջ  
 ըստուփին մէջ  
 միշտ սպասուած զարումին:

ԳԵՈՐԳ ԹԵՄԻՋԵԱՆ

## Ծ. Օ Շ Ա Կ Ա Ն

### Ս Ա Հ Ա Կ Պ Ա Ր Գ Ե Ի Ե Ա Ն

Ամէն օր, այդպէս «թեթեւացած» անցնէր պիտի սեղանին առջեւ: Թաղուէր ինք իր մէջ, փակ՝ բոլորովին: Առջեւի թուղթը, հերմակ շապիկ էր կամ պատանք, դալիք խորհուրդին: Ո՛վ անձանձբոյթ սպասուէր սպասած դրազէտին, առնմայ աղջիկներուն դժոխքէն ալ խոր: Աւելին. խուժումը՝ իր վրան, ծառիկ անցեալին՝ Գոլիս, Իզմիր, Ամերիկա, թերթերու խմբագրութեանց մէջ, ձեռագրի հետ հակայ իր գոտեմարտով կը ճուային ու կը սեւեային: Հիմա՞: Ամիսները կ'անցնէին ու ժանգոտած անոր դրիչը ազաւաններ միայն կը գոմէր թուղթին տողերուն, նայելով պատուհանէն դուրս, հեռագրութեան, օրինակելով, ալքերու հարազատութենէն, յիմար թըռչուններուն քովնոր հայեացքը փողոցի աղտին, սեւեռ ու անհանգիստ, դրազէտին հոգիին նման:

— Խեղճ գրիչ, — կ'ըսէր մտովի ու մազերը փուշ-փուշ կ'ելլէին տղի մարմինին վրայ: Իրա՞ւ: Վե՞ր՝ այդ փայտի կտորը, անոր անձին ու գոյութենէն:

— Ծերացանք, — կրկնեց անիկա, առանց ուշ դնելու ձայնի խափանցիկ տախտակորմին, որով կը զատուէր մեծ արձակագիրին նշխարանքէն: Յետոյ ձգեց սեղանը՝ շինալով դիմա-նայ սպասելու յոգնութեան: Փոթորի՞կ՝ հողիին մէջ: Ե՛րբ արդէն խաղաղ էին եղած ջուրերը անոր խղճմասնքին. խորունկ, անդիմադրելի լքում մը իր թմբիւրը կը ծաւալէր անոր երակներուն բաւիղներէն: Բայց ո՞ր: Անդրադարձաւ, որ օրը ծանր ու յղի էր շատ մը բաներով:

— Արտե՛մ:

Չայնը ուղղուած էր «կնոջը», որ տախտակորմին միւս կողմը, կարգաւ ու կամ լալու իր մենութեան մէջ կը սպասէր այդ ձայնին, սարսափելով անոր բեկորներէն, ինչպէս սլաքի մը խայթէն, բայց զայն փնտռելով...

— Ի՞նչ կայ:

— Եկուր:

Տախտակորմէն մաս մը բան տեղի տուաւ մեղմով: Դո՞ւն: Գրազէտին խեղճին փոքր մէկ փաստն էր ատիկա: Միջնորմին մէջ ճարտար այդ յարդարանքը, թէ՛ դուռ, թէ՛ պատ այդ ազուցումն ալ, սորված էր անիկա ուսանողութեան օրերէն: Օգտակար ուսում, վասնզի երբ ճոխ ու հանդատաւէտ սպարանքներու մէջ ճառագայթէին ետքը (պիտի ծանօթանանք լայնօրէն դրազէտին այդ օսկեղաթիւն), բախտին չըջումով ստիպուած եղաւ հետզհետէ քաշուելու խոնարհ, քանի մը սենեակնոց յարկաբաժիններու, անիկա դորժածեց

իր փորձառութիւնը։ Նոր տունէ մը ներս մտած—մտած՝ անիկա տուն կը փոխէր, հոգին նորոգելու, աչքերուն նոր նկարներ ճարելու համար։ առաջին գործը պիտի ըլլար զատել, հնարել, զտնել իր աշխատանոցը, անմիջապէս, տունին ներկայանալի, մեծագոյն սենեակը կիսելով մէջտեղէն, միւս մասը ձգելով մօր ու աղջկան։ Անիկա դեռ պատանութեան փարիզէն ուսանող—ուհիներու մանսարդներուն մէջ կը գործադրէր այդ փրկարար հնարքը, փաստելով անոր խոր տարողութիւնը։ Ով պիտէ ուրկէ ժառանգուած, դեռ անկործան նախապաշարումով մը կը հաստատար ոչ թէ հոգիին, զոր աղծած ու պղծած էին անկէ անժառանգ թուր շահադէտները, այլ՝ իմացակրթութեամբ, մեր մէջ իբր ատանձին իսկութիւն, ինչպէս ատանձին բան էր արդէն մարմինը։ Այդ հնարքով խնայուած կ'ըլլար անկողին—գազաղբ, ոտնդծումի մեծ արարքին դէմ պանդոյր իր պսակուածքով ու մէջը ընդունած գորշ արտաթիւններուն, փոքրութիւններուն, կերքի մոխիրներուն ու աղերուն զառնաւած յիշատակովը։

Մեծին, Արտեմ Գոհարեան։

Քառասուն, այդ նշանաւոր Արտեմը։

Անցած։ Անցնելու վրայ։

Հասակազեղ։ Քաւչեայ մաշածութեամբ մը, որ անոր մարմինը կ'առնէր, 900ի մեր արժակազիր մէկ բանաստեղծը պիտի ըսէր։ «Կը պարւոյնէր, կը շարժէր» արտում հմայքի մը մէջ։ Պիտի կենար բացուածքին բռնի պատուելու ջանքով մը վայելուչ իր թախիծէն, որ կը բխէր իրմէն, իր ջանքին հակառակ։ Աչքերը պիտի ընէր քաղցր ու խոհուն։ Գրագէտը կը զայրանար կիներու ղէմքին՝ թախիծի ջողէն, ուրանալով անոնց այդ իրաւունքը, քանի որ չէին աշխատեր ու «հաց» մտածեր։ Կրակորական արարածները պարտաւոր էին, անոր փրկութեամբ խնամքը, սրբուած տախտակ ընել իրենց երեսը, հոն ընդունելու համար գիրը ներգործողներուն։

Առանց անցնելու շիմէն, առնէր պիտի դրագէտին հրահանգները, որոտնջները, հայհոյանքը, կասկածները զանազան ցաւերու մասին, բայց մանաւանդ հակայ ու նկարշաղկոյ անոր պարսաւը ազգէն, գրողներէն, հարուստներէն, — պարսաւ կենդանի, անձին հեղումովը զօրացած ու ծնունդով հակայ, որ խառնուածքի պերճ բառերովը թաւալուն, զոր հաճոյք էր լսել ու մոռնալ։ Արամազդեան այդ շանթակծումին դէմ տիկինին արգիլուած էր որեւէ ընդմիջում, մինչեւ որ ասպարէզի պակասէն, անգործութեամբ տառապող անոր հոգեւորական խոյանքները ընէին իրենց ձեւակերպական մարդանքները, բանային դաշնաւոր փողերը անոր հազագին — մարդեր կան, որ ձայն կը ստեղծեն աչքէն կամ մատներէն — ու փոխադրէին ծերացած գրագէտը ուժի, հմայքի իր անմուրազ կրկներեւոյթին մէջ։ Ի՞նչ պէտք ունինք այն բաներուն, երբեմն, զորս ուրանալ դերասանեցինք, բայց որոնց աննուաճ կարօտը վառ ծխանի մը նման չկաղրեցաւ միայն մեր ներսը։ Պոռաւը կը շարժէ մեր հոգին, Հայհոյելը՝ կը մեծցնէ։

— Սկսւի։

Բացառութիւնն էր։

Կինը անցաւ շեմը։

Առջեւէն, քովերէն, հտեւէն անճշգիւի, բայց գո՛յ այն բանը, որ հովն է մեր հոգիին, եւր զայն կը տանինք խաչափայտի մը նը

ման: Վախնալու՜մ, թէ չուզելով նայելու: Իրմէն՝ ինքզինքը զսպե-  
լու, չպարսկելու ուխտէն տկարացում մը գիծաւորող: Դէմինէն՝ ըս-  
տասածը հաստատած ըլլալուն դարման բեկումով: Քանի՞ տարի է,  
որ անիկա կը կրէր այս դժոխքը: Գրագէտին հետ փախուստին ա-  
ռաջին շրջանը մինչեւ կ'երկնաւոր անոր առ տառապանքը, երբ, քանի  
մը տնտեսական տեսարաններէ յետոյ, աղջկան ու իր սիրահարին մէջ-  
տեղ, անիկա պարտաւորուեցաւ: Քաշել ձայնը՝ դէթ ատենի մը հա-  
մար, դանկուտած՝ խղճմտանքէն ալ անդին, գերազոյն ալքերն ի  
վար, մահացու սողունի մը խուլ սզոցին ներքեւ դանելով արմատն  
խկ իր գոյութեան: Որո՞շ: Բայց որքան պէտք ունինք, երբեմն,  
տարտամին: Որքան կ'ընկրկինք վճիռէն: Որո՞շ: Բայց ով ինչ գիտ-  
նար, յստա՛կ, մարդէ մը, որ յիշունի դուռներուն, յայտնապէս ան-  
կարող, «ամկնադնախոյս», ինքզինքը կը զգար գուարթ ու երիտասարդ,  
երբ մտնէր շունչին մէջ՝ «մատ մը» այդ աղջկան: Կը թափէին անոր  
բոլոր ժանգերը, թթուները անոր ձեւին դէմ, դաշնակին առջեւ, դը-  
շուրը զրած իր ափերուն ու զգեցած արուեստագէտի տնհուն պեր-  
ճա՛նքը: Որո՞շ: Տիկինը վարժեցուցեր էր զարհուրելի բառը իր աղ-  
ջիկին, որ առաջին տարին հանոյք կը դնէր դայն գործածելու: «Հա-  
րի՛կ», մարդը, որ փախցուցած էր իր մայրը: Ու անիկա մեծցեր էր  
շունչին ու շուքին մէջ՝ այդ հայրիկին, մինչեւ առ պատարուն փթթու-  
մը իր պարմանութեան: Որո՞շ: Շատ չէ հարցումը: Ե՛րբ տեսեր ենք  
կեանքին խաւարչուտ խորշերուն մէջ ծլող ու մարող միլիոնաւոր բը-  
ժնկումները հոգիէ հոգի, որպէսզի հաստատ տանք վճիռ: Տեսածնե՞-  
րը: Սկիզբները քիչ՝ որ ըլլար տարբեր աչքին վարժութիւններէն,  
մինչեւ յառնումը առաջին կասկածին: Առաջին կասկածը, որ դաժ-  
բարանն է երբեմն: Անկէ դէպի ստուգութիւն, յաճախ ոլո՛րք մը,  
անկրնադարձ մը: Կը քաշինք ու չէինք դիտեր: Դարձանք ու մե-  
ռաւ: Ու եկաւ տիկին Գոհարեանին համար ժամը, ուր անիկա դըր-  
ւեցաւ դէմ դէմի իր կեանքին գերազոյն վիշտին: Աշնան իրիկունն մը  
ստիկա: Բաներ կան, որ ըսուելու են երկու տողով, ան ալ լռելիայն:

Յետո՞յ:

Բայց այո՛,

Անիկա անկարող էր ճակատել դրագէտին, անոր սրտին ուղա-  
մանը սառնութեան վրայ պատրանք շունենալուն: Աղջի՞կը: Մարդե-  
րու կեանքը գիրքի հատոր մը չէ, որպէսզի շարագրենք մեր ուղա-  
ծին պէս, ուղածին նման անկէ վեր կամ վար եղողներուն, ու գիտ-  
ցէ՛ք, բոլոր օտարները, զուրոյն գիտողները ուրիշ բան չեղան:  
Լուսնի լոյս կար այդ աշնան իրիկունով: Թողուց, որ մեկին մեծա-  
տաղանդ զրապէտը իր «բանը» խօսելու հայ տիկիններու կողմէ սար-  
քաւած հանգէտի մը մէջ, ուր պիտի փառաբանէր մեր կիներուն ան-  
մահ սիրտը, անոնց ցեղային հսկայ (ազեղ) պարկեշտութիւնը, մեր  
սրբաւէրներուն աստուածամերձ գոբախտութիւնը ու խորանար վա-  
յելքներու վայելքին, որով մեր սիրտը այս տշխարհին մէջ պահ մը  
կ'երկնայնանայ, երբ իր փախուր ուրիշներու արցունքը վարդի, եր-  
ջանկութեան վերածէ: Ուրիշ ի՞նչ էին այդ համեստ տիկինները, երբ  
ձգած իրենց ընթացիկ պարզանքները կ'աշխատէին «յաւէտ ջարդին»  
ու դեղեցիկին՝ պողոտաներուն վրայ, ու երջանկութեան կանթեղը  
կը վառէին որբուհիներու խաւարչուտ հոգիներուն մէջ: ... Ով մեր  
լեզու՛ն. երբեմն ինչ գամ ես դուն միտած մեր կոկորդին:

Մայր ու աղջիկ ինկան գիրկ գրկի:

Ու ասիկա այսպէս, երկու տարիէ ի վեր:

Մանուղ ու մինիկ, չկրնալով մերժել աղջկան ի՞նչ որ չէր կըր-  
ցած մերժել իրեն, մեղքէն, կործանումէն աւելի տառապելով մա-  
նաւանդ աղջկան սպասող գերագոյն զառնութեան հաշտոյն — մար-  
գերը ճանչնալու անմխիթար դառնութեան — անիկա տունուեցաւ իր  
կակիծին մէջ, ինչպէս աշունքի մը ու հագուած անկէ: Ատկէ՝ դա-  
լուկ այն անձկութիւնը, որ կը փայլէր անոր ճակատին, տարօրէն  
բաց ու յստակ — երբեմն մեղքը մեզ կը գունատէ — իբր թէ այդ  
պայծառ նշխարին վրայ ինկած, սառած, մեռած չըլլար կնոջ մը  
կեանքին գերագոյն տաղանապը. էրիկը ձգելով սիրտին ետեւէն վա-  
զել ու տախտապարդ փառտէն վերջ, իր աղջիկէն ալ զարնուելու գը-  
ժոխագիր պատգամը: Մեր մէջ կենդանին ունի այս կարգի յարմա-  
րացումներ, միջավայրի ընտելացումներ: Բայց այս փափուկ տիկի-  
նի՞ն մէջ: ... Անոր այտերը ստուերուած էին թեթեւ ուստանաց-  
մամբ մը, որ մեղքին բիւրեղն էր ներսէն զարկած դուրս: Ու վիշ-  
տին, յուսահատութեան մանրասեղ բանումէն, անոր դէմքին վրայ  
պարզ, ընդհանրի այն միւս մեղամաղձութիւնը, որ երկարատեւ  
պայքարի (կիները դժուար կը մոռնան խղճմանքը), կրկնուած յուս-  
տախարութեանց ու վերջը չեղեցող յուսախարութեանց նուէրն է  
մեր մարմինին, երբ մեր ցաւը ուշուրեք-ուշուրեք կը ծածկէ մեր ներ-  
սին բոլոր խորանները ու ապակի կը դնէ մեր զգայարաններու ճամ-  
բաներուն ու կը դառնայ դուրս, կոտորած ու մութ առ գունաթափու-  
մով: Ճերմակ, բայց իզմիրեան ԲԱՐԻՆՈՎ, չէի մը դէպի դեղձայինը  
հոկած այդ երեսները դեռ կը վարանէին ընդունիլ տեսրութին առա-  
ջին ատմները: Յայտնի էր, որ հիմա զարնուած այս պատկերին ե-  
րիտասարդութիւնը եղած էր մէկը հոյալէն ու մարմարեայ գեղեց-  
կութիւններէն, արձակ ու նետուած առանց արդէլքի, որոնք երբեմն  
կը բուսին կիներու ձեւերուն մէջէն, դմբէթ կը յօրինեն, բայց կը  
մոռնան ստուերն ալ ձեւել ամպհովանիին՝ պառաւտութեան արջա-  
յութենէն, որ ամէն կրակի փայլին մէջ ծրարուած մոխիրն է այս  
սինդամ: Ի՞նչ սրտառուչ տրամութեամբ չփէր պիտի թեթեւակի իր  
ուշքերը, խաժ յատակի վրայ՝ թուխ, սեւորակ գոհարի կաթիլի մը  
հետ շփոթուելու չափ, պահելով խոհուն մաս մը հրապոյր, որ մեր  
երիտասարդութիւնը ձեւաւորեց ու ամէնէն հաւատարիմն է մեր բո-  
ւոր շնորհներէն: Ծերացած աչքերը դիակէն ալ խոր կը ճնշեն: Ա-  
նոնց հրապոյրը այն ատեն միայն մեզ լքէ պիտի, երբ մեր դէմքը  
դիակն իսկ չի կրնար դասուիլ հրաշայի այն երեսոյթին, որ մեր ե-  
րիտասարդութիւնն էր եղած:

— Կու գտն այսօր:

— Այո՞:

Ու թերի, վիրաւոր բան կար այս հաւատաւորին, հարցումին  
մէջ, նոր չէր, որ ղեկու գային: Քանի տարի է կու գային, բայց  
կ'երթային. ու մօտ էր օրը, երբ ալ «չերթային պիտի»:

— Ո՞րք տեսար:

— Կարեւորները:

Իրեն համար պարտադրած իր խոհանքի վարժութիւններ ալ  
մաս կը կաղմէին խառնուածքի: Այնքան քիչ կը բանար բերանը  
օրուան մէջ, որ անհրաժեշտն իսկ կը դժուարանար խօսելու: Եւ սո-



ռակային ասութեանց Հանդէպ իր նախախրութեան ենթարկուելով, այլ իր ճամբով ընդհանրացման երթալով՝ ինք մշտապէս կեղծ, մշտապէս սուտ իր ամէն նեարդներուն մէջ, քաջի սեռային spasmeի սուր բուլկներէն: Անշուշտ, նոր չէ ունայնութեան երգը երկրի երեսին: Բայց երբեմն, մեծ տենչերու պտոյտին մէջ կը մոռնանք կամ կը դադրինք լսելէ ժամանակին դարկը պատի ժամացոյցին: Ու կեանքը, ապահովաբար, մենէ չատերուն համար, մոռացման նման վայրկեաններու փրթած համբիշ մըն է: Երբեմն պիտի ծռինք հատիկները հաւաքելու: Շատ անգամ մեր քամակին ճակատագրին մեծ ոտքը մեզի պիտի չտայ տունն այսքանն ալ ընելու: Զկա՞ն մարդեր, որոնք չեն յիշեր համբիշին հասակն անգամ, այնքան չէ՞ն ապրած ու մահուան անկողինը մտան երէկ ծնած մանուկէն նման, առանց ցտաի: Այո՛, Բայց այդ բախտը քիչերունն է մենէ: Վա՛յ անոր, որ մոռնալ կը կեղծէ: Պիտի պատժուի: Վա՛յ անոր, որ կը պարծենայ իր խել կեղծիքովը, վասնզի սուտին վրէժխնդրութիւնը իրաւի փոխուելու անդաման տառապանքն է յաճախ:

Տիկին Արտեմիա Գոհարեան պիտի ըսէր, ամէն անգամ ըրածին նման.

- Զե՞ս խօսիր:
- Խօսած եմ:
- Զ՛ուզե՞ր:
- Նայեցաւ տրտում:
- Դուն ինքզի գիտես, ինձմէ ազէկ:
- Քուկդ է աղջիկը:
- Իրա՞ւ:

Շրջեց աչքերը, յետոյ երեսները, արագ, բայց ջախջախուած: Ի՞նչ էր աղջիկը, որ պառկելու համար կու դար իր անննակը, ու օրուան մնացեալ ժամերուն դուրսը, դասի, կամ գրագէտին քով, հետ՝ ընթերցումի, պտոյտի: Պարտկե՞ց, կըցա՞ւ, արցունքը թէ՛ միշտ, ահա՛ր ուղիւսն ուղղուած պահելով հանդերձ աչքերը՝ կը նայէր անկէ դուրս, ուրիշ տեղ մը, նե՛րսը: Ամէն օր, լռութիւնը կը հաշտուէր խօսակցութեան սա պայմանեալ գնացքին: Այսօ՞ր: Գրագէտը չէր կասկածեր, թէ յոգնած իր ուղիւսն վրայ թեթեւ քաղցրութիւն մը կը թրթռար, ծաւալուն ու օրտառու, որուն կը հետեւէր կինը աչքի տակով, անկարող ինքզինքը ատկէ արգիւելու, ինչպէս՝ չուզելով հանդերձ, մարդ կը կարդայ փաստերը իր խաբուելուն, բայց չի կըրնար չկարդալ:

Տիկին Գոհարեան, ամէն մենաւորի նման, զօրաւոր դիտողութիւններ ունէր: Ուրջան պզտիկ ըլլալ շրջանակը, այնքան ուժով տեսանելի են անոր վրայ փոքրագոյն ծաւերն անգամ: Գիտէր, թէ Սոնիային վրայ ամէն ակնարկ, իր բացակայութեանը, գրագէտը կ'ընէր ուրիշ, ու անոր բերնէն աղջկան անունը թռած ատեն հնչիւնը կ'ըլլար գոգար, ջերմ, գրեթէ սիրալիւր բխում, անպատասխանատու գեղեցկութեամբ մը: Մարդիկ իրենց ծածկել ուզած զգացումները պարտկելու ճիգին մէջ, կը կարծեն «գործած» ըլլալ, ու զննելով աչքերուն զսպանակին ու ուղիւսն ընտելածքին, որ կը մոռնան ձայնը, որ չերեւոյզ, ոչ՝ սեւեռելի, կը ձգուի բախտին: Աչքը կրնանք փակել, հեռացնել: Դէ՞քը՝ մատներով, թաշկինակով պզտուել, երբ կը փախնանք անով մատնուելէ: Բայց ձա՛յնը: Երգնած, խօսելու անտը-



բաժնագիր, գրադէտը պայծառացաւ, եղաւ «անստերիւր» ու «թափանցիկ», ինչպէս են մարդոց գիմակները ներսէն լուսաւոր լամբէ մը բոնուած: Ինչո՞ւ:

Տիկին Գոհարեան բաժնեց իր աչքերը սա պատկերէն: Նոյն ա-  
տեն ցաւի հետ շփոթուող այլութիւնն էր ըրաւ անոր դէմքը դե-  
ղին, օտարական՝ սա մարդուն ու սենեակին: Խոր ու չպարտկուող  
անոր հոգեյատակը պզտիկ այս նայուածքներուն անկարող էր գիմա-  
նալ: Գաղանիք պահելը կը յարգենք իրք նիւթական հերոսութիւն:  
Ինչպէ՞ս դատել հերոսութիւնը՝ զգացումներ պահելու: Տիկինը մօտ  
էր փռնակելու:

— Ի՞նչ եղաւ նորէն:

Տեսած էր սա այլայլուժը մեծատաղանդ արձակադիրը, որ  
կը յաւակներ իր պատմութեան քննարկ մէջ հոգեբանութիւն ըրած ըլ-  
լալ ու չէր անդրադառնար, ուրիշները տալու ատեն, որ կու տար  
ինքզինքը միայն. միակտուր՝ վայելքին, ինչպէս ցաւին դէմ. տաք՝  
բառի՝ ընդերքին աւելը ծծած, ինչպէս կնո՞ղ մը շրթները ծամած  
պահներուն:

— Ոչինչ:

Ու կծկեց անիկա շրթունքները նորէն:

Դէ՛մ դէ՛մ: Վախնալով խօսքէն, երբ ունէին ըսելու իրարու  
«աշխարհք» մը բան, իւրաքանչիւրը իր պարունակէն: Գիտէր, թէ  
այսօրուան համար անոր տունը ժամագրութեամբ էին շատեր:

— Տիրանը կու դալ կոր:

— Տիրանը ո՞վ է:

— Տիրան Տիրանեան. բանաստեղծ:

Տիկին Գոհարեան յիշեց աղնուական երիտասարդը, դադափա-  
րի բնկեր երեմնի, զոր լքած էր Պարզեւեան իրեն յատուկ վեհա-  
փառութեամբ, լքելով նոյն ատեն կուսակցութիւնը, որուն կը ծառա-  
յէին առջի երիտասարդութեան օրերէն: Պոլիս տեսնուած էին անոր  
վարած թերթին խմբագրատան մէջ: Համակրելի ու արտում: Տիկին-  
նը հաճոյքով լսեց լուրը: Անիկա տարտամօրէն նշմարել կարծեց օ-  
գուտը, զոր բանաստեղծին ներկայութիւնը պիտի ունենար Պարզեւ-  
եանին վրայ:

Պօսակցութիւնը կրկին կապուեցաւ: Կազ, փնտռուած քանի մը  
բառեր ոչինչ փոխեցին:

Սենեակին միակ աթոռը, թիկնաթոռը, փո՛ս՝ իր կաշեյատա-  
կէն, ծեր, ունպէտ առարկայի իր անդաճութենէն շատոնց պարպը-  
ւած, մաս կը կազմէր աշխատանքի խոր, «ներսէն» հողիին: Հաւա-  
տարիմ, հնօրեայ բարեկամ մը, Գոհարեաններու փարթամ հիւրասը-  
րահէն, զոր Պարզեւեանին պնդումովը գողցած էր դրեթէ անոր սի-  
րուհին ամուսնական յարկէն, իր փախուստի պահուն. այդ թիկնա-  
թոռը, անոր բնուան ներքեւ հառաչանք մը արձակեց, ինչպէս կը  
պատուիրեն արտայայտել վսեմ ոճի տեսարան 1880ի մեր գրադիտու-  
թեան զասագիրքերը, երբ իրերը պիտի խառնենք մարդկային յոյզե-  
րուն ու տնոնց «արտայայտման»: Պարզ, հին, ծեր այս ճիշդ անոնց  
գարձո՞ւց այն դիւերը, որուն մէջ ան առեր էր իր ծունկերուն նը-  
ւաղեալ մօտ տիկինը: Ո՞վ անգթութիւնը առարկաներուն, որոնք  
պիտի նային մեզի ու պիտի լսեն՝ պե՛րճ իրենց լեզուով մեզ լացը-  
նելու չափ յուզեցէ հաջ: Ոչ ոք՝ բացի գրադէտէն, արտօնուած էր

Հիմա նստիլ այդ թիկնաթոռին: Ով մեր տէ՛րը, երբ կ'ուրանանք ճեղ,  
կ'ընենք ատկկա մեզմէ վախճանուս:

Տիկինը անցաւ րազմոցին միւս ծայրը:

— Ժամը քանի՞ն:

— Շատ-շատ ժամ մը ետքը:

— Պատրաստութիւն:

— Թէ՛յ:

— Շաքար չունինք:

Ու չլարունակեց՝ դիտնալով դրազէտին զայրոյթը այդ զնու-  
նինքաներէն:

— Հետը կայ եղեր օտարուհի մը, ոտ'աւ:

— Այսի՞նք:

— Հանդա՛րա, Եղիպատո եկած է տղուն հետ, ու նպատակ ու-  
նի ռամբարիռնը այցելելու:

Տիկինին նայուածքը ինկաւ դէմի պարտէզին:

Հոն էր հիւանդ կինը, իր հովանոցին մէջ, ոտքերը թեթեւ մը  
դուրս բերեալ ծածկոցէն, հիւսիսի երկերնէն, դեռ քսանըհինգը  
լանցած, այդ օտարուհին — ոչ-ուս — խորունկ արդաւատանք  
կ'արթնցնէր այլապէս խոց, հիւժաւոր տիկին Գոհարեանի հոգիին  
մէջ: Բարեկամներ գրեթէ, կ'երթար անոր, որ կը խօսէր Արեւելքէն,  
Իզմիրի պարտէզներէն, անկուտ խաղողէն ու գոհար թուզերէն: Կը  
խօսէր Պոլսոյ ապարանքներէն, սահուի ու լոյսաթիւն Փրանսերէնով  
մը, սէօրեոս վարժարանէ մը սորվուած: Գիտէր, որ երիտասարդ  
կինը դժուար կը հանէր տարին, ինչպէս կը վճռէր շատախօս բժիշ-  
կը, որ հիւանդէն աւելի կը զրադէր Գոհարեաններով, հասկնալի հա-  
մակրութեամբ մը անոր «Փանայիա» (սոստուածամայր) աղջիկին:  
Մայր ու աղջիկ զմայլելի յունարէն կը խօսէին բոլոր իզմիրցիներ-  
ուն նման, որոնց մայրենի լեզուն կը թուի ըլլալ Հոմերոսի բար-  
բառը:

Աւելցած էին վարի պատկերին երկու պատիկներ, երկուքն ալ  
աղջիկ, հիւսիսեան ցեղերու յատուկ բացութեամբ մը: Տիրապետող  
խարտեան էր անոնց վրայ, մաղէ ու մոյնքէ, տարածուելով նոյ-  
նիսկ գէպի հողեկան արտայայտութիւն, այնքան լայն, մերկ էին ա-  
նոնց մեծ աչուկները: Կը խաղաի՞ն, մամային շունչէն հեռու,  
բայց տարօրէն գէպի հիւանդ արեւե-ուած այդ տրտմութիւնները,  
իւրը կամ պարզ արտայայտութեամբ, իրարու յառած, մեծի պէս խո-  
հուն, ու լեզուի տեղ խօսելով պնդութեան բան մը, զոր հասկնան պիտի  
հազար ցեղերէ բոլոր մայրերը:

— Ի՞նչ աղուոր են:

Թիկնաթոռը ձգող ու բազմոց անցնող Պարզեւեանին համար  
կիները միտ, ու փոքրերը՝ գոյն էին:

Իսլա ուր, ձեռք ձեռքի, կիսաթպիտ, «փոսկրեայ» այդ դեղնու-  
թիւնները այլուրութիւնն ունէին մետաքսէ նկարներու, ասեղնա-  
զործուած ածուխ մը խորքին ու կը թուէին պատէն վար առնուած  
ու դրուած պարտէզ, պտուղներ: Թուշային, կիսերանգ, անոնց  
մորթը ծամուած էր մահուան մօտ շունչէն:

— Ի՞նչ ալ տխուր:

Գրեթէ սրբե-ով աչքեր: Կը տեսնէ՞ր մահը, որ մօրմէն մտած  
էր այդէն սա հրեշտակներուն մէջ: Ամէն մայր ուրիշին պատիկը կը

տեսնէ իրենին ցոլքն: Երբ պատկէր հողին մէջը: Որո՞ւ՜ հոգեմար-  
բր եւ տարաբախտ գոյգին: Ո՞վ պիտի փակէր անոնց աշուկները  
աշխարհին առտէն:

— Կին էք վերջապէս:

— Հարկա՛ւ:

Ու առաջանքով կուլ տուաւ շարունակութիւնը նախադասու-  
թեան, որուն մէջ կը բանաձեւուէր լոյին մեղադրա՞նք մը «հայր չե-  
ղած» զրադէտին դէմ: Գիտութի՞ւն, հայր ըլլալը: Անշուշտ, անիկա  
չէր կրցած դեռ ըմբռնել զրադէտին երիտասարդութեան մեծ, ան-  
մոռանալի արկածը — ի՞նչ բան արկած չէր անոր համար — զժըն-  
դակ, մարդկային պարունակէն անգիտեղելի, խնամքով պահուած  
զրադէտին կողմէ, որ վերապահութիւնը կը դաւանէր առաջին տուր-  
բր մարդուն, վատին՝ ինչպէ՞ս լաւին դէմ: Բայց հասած տիկինին...:  
Այդ «արկած»ին համեմատ անիկա հայր ալ եղած էր:

Բայց,

այնքան վա՛տ՝

որ ուրացած էր դայն:

Տիկին Գոհարեան խղճմտանքին վրայ շունէր դառնութիւն մը  
տանքան ուժով, որքան ա՛յն՝ զոր զգաց, կոխէ մը ետք, եղբրակա՛ն  
առտու մը, երբ ա՛լ մեծցած աղջկանը պատճառով, որ խռովք կը  
ձգէր իր շուրջը, առանց ուղեկուն ու նպարաժանտին սպասաւորը,  
ինչպէ՞ս բեռնակիրները արձանի նման սառած կը զամէր իր անցքն  
առջեւ, ըրաւ անխելք մեղադրանքը, զովացման պէտքէ մը հրուած,  
պաշտպանելով անմեղութիւնը իր ձաղուկին մարդու մը դէմ, որ

— հայր չէր եղած:

Ըրած չըլլար:

Անիկա քայքայուած եղաւ, անվերականգնելի, իր «սիրեկա-  
նին» պատասխանէն:

Հա՛յր:

Եղած էր Սահակ Պարգեւեանը, իր իսկ խոստովանութեամբ:

— Զաւա՛կը:

— Աստուած պիտէ ուր է անիկա:

Պատասխան, նետուած անմարդկային ըսուելու շափ պարզ  
սոսթոմոսով մը:

Այդ րոպէին միտքն աիկին Գոհարեան զգաց, թէ ով ունէր իր  
զէմ, իր վրայ: Անիկա ամբողջ գիշերը լացաւ ոչ թէ ձգածին, կոթ-  
որեցուցածին մեծութիւնէն, այլ նման մարդու մը կարելիութենէն:  
Յետոյ, չէր կրնար մոռնալ անոր մէկ ուրիշ նախադասութիւնը,  
դարձեալ արք Սասունի գիտնա՛լքը՝ զաւակին շուրջը, երբ պատա-  
հարար հարցուցած էր անոր վրայ, մորթէն, տեսքէն, մաղերէն, մօր  
մը համար այնքան քեփուչ հետաքրքրութեամբ, որով կիները ստեղ-  
ծողորո՞ւթեան անհաս մթաթիւնը կը ծաղկեւորեն ու զատ սանդուխ  
մը կը կազմեն արարածներու դիմէն: Մայրը ոչ կիներ է, ոչ աղջիկ:

— Զէր նայա՞ծ:

Անմոռանալի պատասխան, առաջինէն աւելի խոր, յայտարար՝  
դայն արարեբրոյ հոգիէն:

Տիկին Արաւելի ա՛լ չունեցաւ համարձակութիւնը ուսանողու-  
հին հարցնելու, խնայելու համար նոր ճիւղութիւն մը արեւմտա-  
հայ մեծ արձակագիրին բերանէն:

Պարտէզին մէջ, պղտիկներէն մէկը զինքը նշմարելով, առանց տղաղակի, թաթերովը ըրաւ ծափիկ։ Այդ տարիքէն իսկ կան մարմիններ, որոնք թռչելուն բեռը պիտի բեռնան մատներուն, աչքերուն ու աւելի վերջը յօնքերովն։

Անջնջելի անցեալը կը պարտէր փիկինին աչքերուն առջեւ։ Այդ տեսիլքին մղումին աակն էր անիկա, երբ պաշին հետ արտաքնապէս կապ չներկայացող իր բառերը նետեց։

— Գիտե՞ս ինչ է մայր ըլլալը։

— Բարեբախտաբար ոչ։

Կարծես շարունակութիւնը ըլլար. այնքան անմէ անձ անցումը եղած էր արագ։

Լուսնը։ Ինչպէս կ'ընէր այնքան յաճախ, չգրգռելու համար հայրուն «գերմարդը», «բարիէն ու չարէն» անդիլի աստեղերը։ Անիկա կը պատժուէր զգացումներուն անտարբեքութեամբ համար, ինչպէս կը յիշէր լսած ըլլալ գրագէտին բառերէն, որոնք դերման մեծ ուրացողի մը գիրքէն թառած էին անոր շրթներուն։ Բայց իր ընկրկումը ոչինչով ազդեց զրագէտին արամադրութեան։ Աշխատանքին մէջ «կը տիրէր բարձր ճշունձ» գործածելու համար ծովային պատկեր մը։ Բան մը կը պատրաստուէր հեռուներէն։ Այս մթազնումներուն, հակադիր հոսանքներու իրերագրումին ատեն, անխորժ, նոյնիսկ իմպուլս տեսարաններուն վարագոյրը կը թուէր չարժուածի մտնել, հեռագրելով մորիկ, ուրական։ Փայլակներով խորհող զրագէտը զուր տեղը չէր ճարած որոտացող իր ոճը ու իր զանթերը բոցին հետ արիւն ալ ունէին, ինչպէս կը պատկերէր իր անգթութիւնը գրական իր հակառակորդները տապալած ատեն, «երկնային հուրին» նման ծծելով փոշառացիներուն լեարդերը մինչեւ, ու «ծախելով», աստուածաշնչական իմաստով։ Այս մարդարէական խառնութիւնը, վայրենութիւնը անիկա կը ցուցադրէր, գրականէն դուրս, կեանքի բոլոր մարդերուն վրայ։ Իր նայուածքը ամէնէն թունոտ, սպաննիչ ծաղրն ալ կը գերազանցէր, երբ շտկուէր ողորմեալներու վնասակիւն, այնքան վերէն։ Կայի՞ն ուրիշներ, չկայի՞ն. երբ կը զարնէր խօսքով. անդիմադրելի էր՝ ինչպէս հին օրերու բարանը։ Կիններու մարդին։ Վատ ու յո՛ւս։ Գիտէ՞ք անոր արհամարհանքը, իր տարօրինակութեանց մէջ, ին սրտին ահաւոր յորութիւնը յուսաւորող, կմախսագրող. ինքնատիպ քննանդաշտներ ունէր, կիներու հոգեբանութեանէն։ Ամէնէն կարեւորը աստեղ — չհաւատալն էր նման բանի մը գոյութեան։ Ու վէճ։ Ու բուռն։ Սրբազան, սառած բմբուսութիւն մը, որ անոր զրկալից պատանութեան ու նոյնքան զանազան առաջաւոր երիտասարդութեան ժառանգ մըն էր անոր մէջ, անիկա կը հերքէր անհերքելի փաստը. տիկին Գուհարեանին։ Կա՞ր աւելի պերճ, թշուառ օրինակ մը, քան զոյութիւնն իսկ այդ կնոջ, որ յօթարեր էր, ցուցմունքին տակը այդ ուրացուած կոյնակին — սրտին — ձրգել։ ամուսին, զաւակ, տուն, դիրք, միլիոնաւոր կիները գոհացնող օրինաւոր, հաստատուն, նախանձուած կեանքը, դնել ջար իր մայրական զգացումներուն, քանի որ կը վտանգէր մէկ հատիկ զաւակին ալ ապագան ու քրուի անոր, Պարզեւեանին ետեւէն, աստանդական, անկալուն, հետզհետէ անկումէ անկում թաւալող կենցաղի մը երկանաքարին կապելով մարդկային արժանապատուութիւն, երիտասարդութիւն, գեղեցկութիւն, մայրութիւն։ Սահակ Պարզեւեան այս նր-

ւերումը կը դատէր անոնի անդթութեամբ մը, դեռ պատահարին առաջին տարիէն, երբ սանկ ու նանկ զերասանուհիներու, կիսաշխարհիկ ամերիկուհիներու հետ դաշն խաբած ատեն՝ շունհցած իր զղջանարումը կը տարածէ բոլոր կիներուն: Ու չէր կեցած հոգ: Անի տնայնիկ, անիկա սաղաթիւն հեշտութեամբ տոյճ կնոջ երեսին էր տուած իր գաւառանութիւնը հանդէպ «օրինաւոր» ամուսինին, պատուական մարդ, մեծախարուստ (ինչ անկշտութիւն եղաւ իրը, երբ զրականութեան մէջ անդադար մտնումն ու անոր իշխումները ժողովէ, կեանքի մէջ անոր ստրուկը մնաց ու թուքը կոյ տալով նախեցաւ ունեւորին օրերուն) Էփենտի, առատածեռն ու խելացի, քողաքին մէջ յարգումէ բոլորէն: Որուն՝ չէր մեղքացած անվերադիր տիկինը: Ի՞նչ կ'ուզէին իրարմէ, զիրար այսպէս բզկտելու համար: Անշուշտ, երբ իրար սիրելու համար քով քովի դրուած մարմինները կուրս կը դառնան դէպի այս խորութիւնները, կը գիմաւորին այդ իսկ անխելութեամբ ռիթմէն անդիմը: Պարզեւեանը իմացական ժարովին վրայ զիշխանած իր բնազդներուն զոհացում տալով կը փրկէր կախն ու կը մոռնար կիներ: Տիկինը, շուարած, յետոյ մուսլիմ, յետոյ մօտ խելագարութեան: Առաջին այդ քախուսին անիկա տկարացաւ, ուշադրոյ ու մեռնէ: Յետոյ, խրատուած, մեծ պարսաւագիրը, տեսարանէն վախճն, բախումներու ընթացքին կը կեցնէր իր սառն, թունոտ վերլուծումը, պատշաճ սահմանին: Ան պարտաւոր էր յիշելու, ամէն ատեն, երբ խօսքի մէջները երթային տաքնալու, շաւրթներ տեղոյ անանուն տենդը, որուն յանգած անդրանիկ այդ ճաշկատումը անդրանիկ իր յարութեան ու արկիւնին կորանքին, մահուան ուսմանայի մը կախնով անոր քայքայուած ու վարկէն բեկուած գոյութեան վրայ: Տիկին Գոհարեան ազատեցաւ, վառնդի «կը հատարար իր սիրտին»: Այս զգացումը երբեմն կը գործէ նման հրաշքեր: Կեանքին դառնայ յետոյ, արտասուանքից, արեւելեան գերուհի մը այդ ինկած իր կուրքին պատուանդանէն, անիկա պաղատեցաւ անոր շփոթայ մահը, ամէնէն իրաւ, մօտ բանը մէր աշխարհին: Երդուրն ուղի զայն իր ամէնէն նուիրական բանին վրայ — մայր էր անիկա ու Պարզեւեանին հեռաւոր գուա՛կը ունէր նկատի, բախ իրեն ուրիշ ամէն բան, բնեւ իրեն ամէն բան, թքնել երեսին, առնել աչքին տակ, ու ծեծել, ու վարուել հետը աւելի գէշ, քան սեռուհիներու հետ ամերիկեան պաղարններուն: Այո՛: Բայց խնայել իրեն այդ բաժակը:

Կայարանէն, բաւական մօտ, զանգակ:

Երկաթուղին:

Ճամբորդներ, խայտաճամուկ զանազանութեամբ, որ Արեւելի կարգ մը քաղաքներուն դիմագիծը կը շինէ:

Պարզեւեան, նեղուած, շունչի կարօտ ձեւով մը կը գննէր ժարդերը: Տիկին Գոհարեան, արմուկը պատուհանի chasséին, հետեւեալով բազմութեան հոսանքին, որ կը տկարանայ քիչ-քիչ: Թանձր ծուխը վայրաշարժին ու ճամբորդներուն փոշին քիչ մը պղտորեցին հանդարտ ալրումը պարապին, զոր կը կերտաւորէին արմաւենիները, շրջուած հովանոցները կախած կապոյտն ի վար: Մնացին աւազուտ ճամբու հզօրն: Երկու մուրացիկ ու հիւսնող տղեկ մը, որ կը սպասէր կէսօրէն ի վեր ամէն գնացքի, զոգալով ստքի ու, յուսահատ փնտրածը չգտնելէ՝ կը կծկտէր ցանկորմին: Ի՞նչ տիւր է երբեմն կեանքը:

Կիներէն փախած հոտի կտորներ, ուրիշ բաներու հետ խառն սնցան պատուհանէն: Օրը մօտ էր տարածամեկու ու տրամաշար լան՝ մը կը պարաստուէր փոռելու դեղնաւուն գիւղին վրայ, որ, առանց կարկաւի ամէն փողոցամուտի նոր կը սկսէր: Ու ամէն խաճաճման կէտերուն, եւ քաղիթուսի մը պարարտ շուքը «կը բրդանար» մայնչութենէն: Փրագէտը ամէն այցելուի հաղորդ կ'ընէր տեսողական այս պատկերը, ուրիշ կ'իջնէր խօսելու աւազներու Ոգիէն, անյարիւր, նենգ, որ մարդոց ջիւղերուն հետ զայարազին կը հիւսուէր ու հեթաթին խորհրդանիշ սողունին նման կ'օձնդինէր զանոնք: Անոր կարծիքով աշխարհի միայն ուրիշ ոչ մէկ տեղ Ոգիւն (ան կը հասկընար բռնութիւնը ուրմիւն) այսքան յարձակողական, անպատասխանատու, «երբ» էր, որքան փառաւորներու երկիրը: Չորքած ամերիկոնիները «կրակ կ'առնէին» ոչ իրենց կրակներէն: Մասնաւոր համոք մը կը պատմէր իր վարկածը լուսաւորող հեթաթիւր, որուն համեմատ Նոյնեան տապանը այս մարդերուն միայն լողազան ատենը թիչ էր մնացեր ընկողմէն: Կարունակեալ անասուններու անորակիյի խռովքէն, իրար բզկտելու շափ: Աստուած, բարի ժպիտով, ազատհոգութեան էր ինքնիրմէ ելած ծերունին, նահապետ Նոյը — տապանը կ'անցնէր Եդիպոսի միայն:

— Քանի՞ն քրէն կայ նորէն:

Հակառակ պահպոյցին, անկա չէր սորվեր զնայքներուն ժամերը, շնամենու միայն ծերերուն, որոնք իրենց սիրական ու կարեւոր գրադումներէն մէկը կը նկատեն առ գիտութիւնը ու զոյն կը ծախեն աղօթելուներուն: Սահակ Պարգիւեան երիտասարդ էր տակաւին: Ատկէ զատ՝ անոր ուղեղը չէր կրնար բռնաւարտել փոքուն բաներով:

— Կէս ժամ վերջը:

— Աղէ՛կ: Գային ու լմնար:

Կիներ նայեալ մեղմ ու շրջեց աչքերը գէպի պարտէզ:

— Եկողները:

— Անշուշտ:

Սահակ Պարգիւեան յօժարութիւն էր յայտնած ընդունելու կէս պայտօնական աղօթութիւնը Արթուրի Գասպարեանի, որ տարիներէ ի վեր մշտապէս մեթուած թեկնածուն էր Սոնա Գուհարեանի: Մեծագուն պատնասը այս մերժումին, հասարակաց հաւատումով, անունն ու թիթը կը մնային առ զպատուականք երիտասարդին, որ ընտանեկան մեծ դժբախտութեամբ մը մտած էր կեանքին մէջ ու սրահանկ, ինքզինքը ստանձած հօրը մահէն ետքը ինքնօրնութեամբ հասած դիրքի, ընկեր ու տնօրէն նորահաստատ ծխախոտի դրոճաբունի մը մէջ: Սահակ Պարգիւեան մկրտած էր տնունը, դայն վերածե՛ռ! Արտակի, բաւոյ չէր յաջողած մկրտել: Եթէ, որ անոր ոչ միայն մոռնալ կը դիպուէր, դայն ընկուով յայն ու տափակ տառածութիւն մը, տառանգ ծամածուռ գիծերու եւ աչքի մաղնիսի: Մեծատաղանդ արձակագիրը կը սպասէր նոյնպէս Սփյանտիտ Փայասի վարի: Մինչաւ Մարտին, որ, ասպարէզի բերումով, մասնագէտ էր դարձած իւրանիւր ու արտեր որսաւու, խաշեկտը (պիտի հասկնաք աւելի ուշ) աշխարհի յորս ծաղկեալ: Անկա ժամագրուած էր այս ժամուն համար: Հետն ունէր բերելիք հայազգի իշխան Պօղոս Արծրունին, հեղեղահոյ հարուստ մանաւան մը, միւրեւանէր ու այրի՝ Սոնայի՞ն: Ի հար-

կէ : Պատիկ միջադէպ մը, զոր պատմեր էր տիկինն, գրադէտը ընդ-  
մէջ արեւելահայ վիպողին եւ Արծրունի իշխանին, բաւական նիւթ  
էր տուած խօսքի : Արեւելահայ վիպասունը մերժեր էր այդ ծերունո-  
թեան իր գոյրեկանն աղջիկը, Ռիթան, «թքնելով նրա փողերին» :

— «Ախր, ի՞նչ արժուած է փողը», — պոռացեր էր անոր երե-  
սին ու անցած անդին, առնելու համար լորտային ճաշացուցակը  
ձեռք, ի հաշիւ . . . աղջիկն :

— Ան իր տունը կը տանի :

— Ո՞վ :

— Մարանը :

— Ինչո՞ւ :

— Դուն կը տեսնես :

Տիկին Գոհարեան, Եգիպտոս իյնալէն յետոյ կը ճանչնար մար-  
դկը : Հայազգի իշխան մը : Սոնային բաժնաւոր : Չէր կարող ըլլալ :  
Ձէր կրնար, բուն իսկ գրադէտին պատճառով : Անիկա անցաւ վրա-  
յէն սեւ այն ամբաստանութեան, որով դիմաւորուած էր թատերա-  
դրին մերժումը : Ու խորհեցաւ միւս իրողութեան : — Աղջիկ էր պա-  
կոս : Մինաս Մարանին տունը քանի՞-քանի՞ հատ :

Բայց, հակառակ իրարու հանդէպ յատակ այս անվստահու-  
թեան, անոնք, «այդ ու կին» սահեցան դիւրաւ . ոչ հիմա՝ այլ շորս-  
հինգ օրէ ի վեր, բոլոր միւս առարկութեանց վրայէն, որոնք սովոր  
էին բուսնիլ, ոգնիլ փուշերու նման, ուրիշ ամէն թեկնածուի հա-  
մար : Խնդրոյ նիւթ չեղաւ տարիքը միլիոնատէրին : Գուցէ թաքուն  
համաճանրութիւն մը դիւրեւ լուռ ըրաւ այդ կէտին ալ վրայ, ինչ-  
պէս եղեր էր ատիկա ինքնաբերաբար միւս սեւ կէտին : Իւրաքան-  
չիւրը «տունին մեղքէն» հանելով արդարացում մը այս զանցումին  
մէջ : «Փորթ» մշտակարօտ արդունաւորը, Սահակ Պարզեւեան երազ  
էր լինած, համեստուկ ու պարզ : Ունենա՞ր հախթ մը, իր հրամա-  
նին, բացուէր ցամաքէն : Ու այդ պուպրիկ բանը օվկիանոսին վրայ  
պտըտցնէր ձանձրոյթը նոր օրերու Պայրենին : Անիկա ծրագրած էր  
կերտել մեծպոյն գործը այդպէս ծփանալու, բնագէջ հերկի եւ երկ-  
րի», նոր Եւրոպայի նման, մեր ողբերգութեան ճշմարտութեան քեր-  
թուածը : Հեքիաթ : Երա՞զ : Կեանքը պէտք ունի այս աղերսին, ոչ  
թէ չհոտելու, այլ կանգուն մնալու համար : Տիկին Գոհարեանը :  
Կ'ուզէր ու կ'ուզէր մէկ հատիկ բան : — Իր աղջիկը գո՞ւրս առ տու-  
նէն :

— Իրիկունն՝ Տիրանեանը :

— Անգա Մերովնա՞ :

Երկու անուններու մերձաւորութիւնը խրոչեցուց զինքը : Ա-  
նոնք, այդ անունները քով քովի էին քառորդ դար ալ առաջ անու-  
րերին : Անգա՞ : Անուշտ : Պիտի ճանչնանք : Բայց Մերովնա՞ն : Ո՞վ  
դիտէ ինչ մաշած դքսուհի մըն էր այս իշխանական (Միլ ըսել է իշ-  
խան, սլաւերէն) մականունին մէջ վարչամակուած պառաւութիւնը :  
Երկու տարի է անիկա «կիները» պառաւ կ'առնէր առաջին բխումով,  
իր զգայարանըներուն վրայ : Կա՞պը՝ Տիրանեանին ու այդ պառաւու-  
թեանց մէջտեղը : Անիկա յիշեց իր երիտասարդութեան դքսուհիներն  
ու մարքիզուհիները : Նոյն գիծէն՝ բնական՝ միւս մտածումը, որուն  
համեմատ տեւէ կնոջ անունին դէմ այրին մէջ առաջին զարթնումը  
սեռն է միշտ : Լեղուլըցաւ անոր հոգին : Հեծեր էր անոր ժիր ուղեղին

վրայ պատկերը քառասունն վեր պատանուհի մը, որ, քանորհինգ տարի առաջ, զինքը զծո՛ցը առածն ատենն կը ծեծէր ուժգին, հարստը մէկ ֆրա՛նք, «կատղեցնելու» համար երիտասարդի անոր վարարողութիւնը, փոխադարձ ծեծուելու մօտիկ հեշտանքէն դաշկացած։

— Կ'երթանք կաղինո։

Ինչպէս կ'ընէին այնքան անգամներ, որքա՛նք քաղքէն բարեկամներ, Սոնային զարնուածները, Մինա Մարանը, Արտակ Գասպարեանը, Երեսփոխաններ (Թեմականի անդամներ), խմբագիրներ, մեծ հանգէսներու նախօրին, կու գային վարձել անոր լեզուն ու զփակել ժանգերը անոր կոկորդին, զարեմուրի եւ ուխտի ճոխ սեղաններով, Պատի՛ւ կ'ընէր զրազէտը, աչո՛ւ էշէ՛ր բարձրացնելով իրեն սեղանակից բնելու աստիճանին։ Անիկա այդ առիթներուն մեծ էր եւ հրապուրիչ։

— Թէ՛յ։

— Հարկաւ։

Եղաւ լռութիւն, անձկոտ ու երկար։ Պատին ժամը կը քայլէր ու չէր երթար։ Փողոցէն նուագի ճիչ մը։ Արեւ ու չըլիւն՝ միջոցին. որ կը յուզուի չեղած հովիկէն, կապոյտը աւրելով ծառերուն շըրջադիծէն։

— Սոնա՞ն։

— Կը հագնենս մեղրադոյն զգեստը։

Յետոյ՝ աեց։ Միտքին ցաթեր էր Աստուծոյ ժպիտը, Երբ կը սրտապնդէր զայն կողմ Նահապետը։ Չունեցա՞ն բսելիք։

Եղած էր այն խաղաղ, շիւղով խել չվէտուած աշրու՛մը, որ Եղիպտոսի արեւինն է օրուան աչո՛ւ պահուն։ Ու եղաւ նոյն ատենն ա՛նոր Երակներէն վար բարակ այն կրակը, որ մարելու մօտ բաներուն կը վիճակուի։ Այս շիջումին դէմ անիկա ինչո՞ւ կը վրդովուէր։ Ուրկէ ո՞ր սա պատկերները, Երբ աւերակ այդ կի՛նն էր գէ՛մինը, որմէ գրեթէ հանդած էր լրիւ սեռին մատարանը, անվերադարձ, կամովի կուրացումով մը։ Հանգիստի այնքան կարօտ այդ կնիկին մէջ բացուէ՞ր էր գեղեցիկ, առանց աշուրեցի այն հոգեցայտը, որ սեռին լատաները կ'ողողէ ու կը մարէ, առաջնորդելով սիրտը ուրիշ խաղաղութեան, հեռանկարի — իր զաւկին մէջ հաւաքուելու, անոր վրայ բիւրեղանալու, ինքզինքը այդ թարմութեան հրաշքով բաւարարելու պարզ, բայց մտեմ համակերպութիւնը։ Առաջին ակնարկով այս հանդու՛մը ճանաչելի կը դառնայ կնո՛ւ մը պատկերէն։ Անոր սկիզբը չէ լահէկանը։ Եղած են մայրեր, որոնք իրենց աղջիկներուն չեն գիշած նոյնիսկ իրենց պոռնկութիւնները։ Բայց ատոնք հազուադէպ բացառութիւններ են։ Տիկին Գոհարեան յազմած էր։ Սահակ Պարզեւեա՞նը։ Այրը քանի հեռանայ սեռին վառարանէն, այնքան աւելի զգայուն կը դառնայ, ու անզիտելով իր տկարացումը, պիտի պատէ ինքզինքը կցկոտուր ձայներով։ Ատկէ՛ անոր խեղճ, երբեմն եղիւրակուն, յաճախ ծիծաղելի վազքը զէպի փնջուած երազները պարմանութեան։ Տղու նման, կարօտով ու անձուկով կը սպասէր Սոնային, զոր կը սիրէր անխառն, հայրականէն ալ վեր սիրով մը, ինչպէս կը խոստովանէր բոլորին, ու կը հաւատա՛ր ալ, իր սրտին համումնեւրուն վրայ, որքան յստակ իր նայուածքը անգիտարար թէ կամովի խեղաթիւրելով։ Իրողութիւն էր, անիկա յաջողած էր պահել օրերո-



դին դէժ տեսակ մը խանդաղատանք, զրեթէ հայրական, տարիններու նրկար թեւի մը վրայ, առանց փորձուելու իր զգազանէն, զոր մուշտակած կը պահէր իր ներսը: Հետզհետէ, պատանութենէն երիտաւարդութիւն անցքին մէջ, օրիորդ Գոհարեանէն երեւան էր եկած Քանդուղական պատկեր մը: Ձաւակ չունեցող հօ՛ր մը շուրջը: Պատկերը՝ տնոր մօրը, զեղչուած ամուսնական կեանքին հինգ-տասը տարուայ հաստութիւնը ու հագած՝ անդրանիկ շղարչը, որով ուղեցինք քողաւոր տեսնել մեր բոլոր սիրածները, երբ անոնց հինգած մարմինները ծալել-նետելու նստանք: Եղան օրեր, մշուշի, մութի, հոգեկան պատրանքի օգնութեամբ խորհրդաւոր, որոնց մէջ անիկա առաւ այդ աղջիկը իր դիրկը, բայց պահեց ինքզինքը, սրբելով աւերերը, վանելու համար պատկերը իր հոգիէն: Յաջորդող արտմասթեան մէջ անիկա կը տեսնէր թշուառ կիներ, որ աղջկան տեսիլքովն էր մտած հաւանաբար կեանքին մէջ եւ զոր ջախջախէր էր իր զգացունին: Թէ՛ ժանիքներովը, Թէ՛ անգթութեամբ:

— Բայց տ՛ւր մնաց:

— Ուրեմ վիտի գայ:

Ինչ տարօրինակ են մարդոց սիրտերը: Գրադէտը չէր ճշտած ենթական: Թագուն զգուշութիւն մը ասեմէ մը ի վեր կը հսկէր աւուր բառերուն ու կը վարանէր անոր անունը տալ, անդրադարձած լլաւով, որ վերջին տարին իր բերնին վրայ զրեթէ ուրիշ բառ գրեւար կը կենար: Նեղուեցաւ, որ տնոր մայրը այսքան ծածուկ լարեւուն իջնալ: Գիտէր: Բայց չհակառակեցաւ:

— Ինչո՞ւ:

Ո՛վ իմարութիւնը մեր հարցումներուն: Ու կուրութիւնը՝ երբ թիթեռնիկի նման կը դառնանք լոյսին շուրջը, գիտնալով կրակը, անկարող բացուելու անկէ ու... վերջապէս բռնկելով: Անոր հարցումը թիթեռնիկն էր հեթաթիւն:

— Ինք աղպէս ուղեց:

Ու լոեց: Վասնզի խոնաւցան աչքերը:

Թ. ՕՇԱԿԱՆ

(Շար. 2)

## ԿԵՌԱՍԵՆԻՆ...

Դեռ կը ճիւղէր...

Արագիւններ

Աչքերուս մէջ իրենց զապը բռնածելու

Հայելիներ կ'ընթերցէի,

Ուր մահչ ու ազդիկներ

Կ'երգէին

Իր միօրեայ ծագիկն համար արեւ հայցող

Կեռասնիկն երգը խոռով:

Ես զիս նաեւ չցայ

Անմահիկնի երազին մէջ անունը արթուն:

Մեր ցրտահար շրթներուն

Իր խոստումները պահած՝

Կեռասնիկն

Տերեւ-տերեւ կը ծագկէր...



Մըին ծառերու ստուերին կ'առչած՝

Մեծք կը փախչէի անյայտ դժմեքով,

Միշտ խուսափելով օրերուն լուծէն:

Մեր աչքերուն մէջ արեւ կար պահուած:

Յետմիջօրէին,

Քաղաքի կնճռոտ մայրերը դէմքին՝

Մարդ մը վաչկատուն,

Հեռու մանկութեան իր պատուհանէն

Դեռ կը փնտրէր

Արեւածաղը

Ու չպզծուած պատուա մը երկիւթ,

Ուր քոչուններու երամը գռնատ,

Դաշտերու անթաղ խրտուիլակներէն

Ընդմիջաւ հալածուած՝

Մեզի կ'ուզեկցէր...

ՓԱՆՈՍ ԶԵՐԱՆԵԱՆ



Ինչպե՞ս կան  
շարժու՞մ

**ՄԵԾԱՐԱՆՔ՝ ՀԱՅ ԳՐԱԳԷՏՆԵՐՈՒ**

Յ. Կարապետյան «Արթուրաբա», Ժ. Ամթա-  
նանի «Կենսամբ գեղեցիկ է», Ա. Արթուրյեի «Գեղ-  
նամ Ժողով», և Լուսինե Մանթեղյանի «Երեմիան»  
համարների շահութաթվան մեծածախքով և հայ  
դրադեյտը ըստ արժանւոյն մեծարելու նպատա-  
կով, անցնույ Նոյնի բերքի, Նին Երաքի Համադ-  
այսիքի գրական յանձնարարութեց կողմակիցրպան  
է յատուկ գինեման մը:

Անցեալ տարուան ընթացքին լոյս տեսած յիշեալ գործերու նուիրութեամբ այս Հանդեսութիւնը տեղի ունեցած է Կիրակի, 22 Նոյեմբեր 1981ին, Հայ Կեդրոնի քրտնին մէջ:

Համազգային ատենապետությանը՝ Նորիկ Զեղովսիսին բացելու հակերթ թափելու նպատակով հարձակումների օրունակ հանդիմանալը՝ Վերահսկող Գործակալությանը, Արցախի վրթի անդամներին՝ Վենեստին Թեգեան-Փասեանին, որ սեղծ զինեթով ներկայացուցանում է Յ. Կարապետյան մարտի ու զորավորների զրահակները վերաբերումներով բնութագրող է ահա արված հրահանգները յայտնաբերված:

Յաւորդք խօսք առնողը եղան է Անասիկ Գուսաղեան, որ զլիաւարարութիւն անդրադարձան է Ա. Արփինէի դօրենքը թիմացնող ազգային ուղիին, պարզութեան եւ հազարապէս շնորհին:

Այսպես, հալոթ օւնեցած է հրօրհրդ գնկուցա-  
բերը՝ Նորիկ Մանվանեան, որ սրամառութեամբ  
համեմատած բարբառային իր արտայայտութեամբ  
Ներհայադուցած է լուսինի Մինիքեանը:

Օրուսան շորորորդ հեղինակն ու անոր գործը հանրութեան ծանօթացնելու համար, Արիս Կե-  
ւակէ, արագ, բայց բնորոշ սեւեռումներով, անդ-  
րադիւրածնէ է թ. Աթթարեանի կենսերին եւ գոր-  
ծին:

Մեծարժանի գրագէտներն ու անոնց զործերը  
ներկայացնող էջերներու բաժինէն հաջ. Համ-  
բիւ Ղազարեան, Անի: Սարգստարեան, Հենրիկ

Պատասխանելու Թերզյու Ոսկերիչեան ընթերցումները կատարած են պրինսեօնի կազմակերպման ծրագրանդ ցուած Հասարակերէն:

Ընթերցանութենեբուն յախրաւս է զգար-  
ուեստական թափն ժլ, որիկ ետք նախիկ թեւ-  
սկիւան ծանրացած է նորայն պատաստանելով  
սփռուած զրոհանութիւնը աշխուժացնելու  
հաջցին, իբրեւ ընտան օւնենալով Ժ. ԱՐՔԻՐ-  
ԵԱՆԻ զըզուտած գեղեցկութիւնը պիտի է փրկել  
գաւազնիկն իւրը:

Միևեռ փակ իրավահավթեքն ձևեկող այս ե-  
րկրէն իմ, իսոց տառն է որտաւն խախտաւ՝  
Միտոս Թեղեկան, որ հայ ապարդիւն  
470մանէջ ճշեկն լիտոյ, չլիտուրարաբ չե-  
կան է ընթերցարկութեան կարեւորութիւնը,  
ընդգծելով, որ ի՞նչ հայ ժողովուրդը շարունա-  
կէ հետեւի իր բարակութեան՝ այն տառն միայն  
կրնայ ստաւալող զղարեան եւ ժաշտութիւնը:  
Թարգմարէ կանգն էր վարկու իրականութիւն:

Այդ ժամանակին լոյսին տակ՝ Միհայ Թէօ-  
փօլեան շնորհած է ժաղկոթին վերադառնալու,  
առաւել եւս հազմակերպուելու ու հաւաքական  
ուժ զուգնալու անհրաժեշտութիւնը եւ, արդ,  
ճշդած Համապայիին վիճակում դերք:

Գրենթան-հանդիպումին փակման ժամացը կա-  
տարանի և Մեծադպ արքեպիսկոպոս Անհան, որ  
արտախաչմանն ժողահարութիւններուն եւ կողմն  
արքայապաշտպան ընդգրկման և հայ ըստկողմի կեն-  
ստեան առիշտ աշխուստն եւ թեր ստգայն  
պարտաւորութիւններուն տէր կապողներու հրա-  
ման յաւանդել:

Յաջորդ էջերուն կու տեսնը ժեհարուած հա-  
տորհեալուն անգրագաւորող մեր աշխատակիցնե-  
րուն յօղուածնիքը և թնորը հատուածներ իւր-  
դոյց առարկայ զիջքերէն:

### 9. ԿԱՐԱՊԵՆՑԻ ՄԻՋՆԱՐԱՐԸ

Յարդ՝ չորրորդ եւ հաւանաբար Յ. Կարապենցի ամէնէն կարեւոր գործն է «Միջնարարը», որ լոյս տեսաւ անցեալ տարեւրջանին, Նիւ Եորքի մէջ:

Եթէ նկատի չունենանք քառի մը գլուխները, վէպի մը զանազան եւ երբեմն ամբողջացնող երեսները կրնան ներկայացնել հոս տեղ գտած 15 պատմութեանքները:

Երբ այս դիտողութիւնէն կը մօտենանք «Միջնարարին» տիպաբաններն ու տաղանդները աւելի հասկնալի ու ամբողջական ձեւ կը ստանան եւ կը լրացնեն գիրար: Այս լայն սահմանումով՝ վէպին հերոսը յիսուսնոց անձ մըն է, նիւթական յաջողութեան տիրացած, ասպարէզին մէջ յաջող, որ յանկարծ սպառողական ընկերութեան մը շրջանակէն ներս իր մէջ մտցնում աննիւթական, ենթակայական կամ դադարաւորական մշտումներու կարելի կը զգայ, եւ կամ՝ օտարացում մը կը զգայ իր շրջապատէն:

Ահա «Աթալայայի Մարեանը», որ «... քիւսակաւ անպատկառութեան հասնելուց յետոյ գտել էր, որ աւելի անապահով է, քան երբեք: Ձանձրացող եկել էր քաղ առ քայլ, գաղտնագողի, նստելով նրա շնչի վրայ: Սկսել էր կասկածել: Կանգնում էր խաչմերուկի ամկիւնում եւ չգիտէր ո՛ր գնալ: Ձգում էր գլուխը նընշումը: Իսկ ամենատեսլալին: Սկսել էր համակերպուել, միամիտ օրերի մէջ քաղելով իր կրքերն ու տնկերը: Մարեանն ալ իսկ չէր ընկալում: Մանրամասնութիւններ չկային» (էջ 49):

Ուրիշ տեղ մը, Կարապենցի հերոսը պիտի խորհրդածէ. «... Ո՛րք ենք գընում: Այնքան գրադուած եմ վագելով, որ մոռացել եմ նպատակակէտս: Ես հիմա չգիտեմ, քե՛ւ այս խելագար վագրը յանում ինչի՞նչ է: Արդեօք ա՛յս է կեանքը: Այդպէ՛ս պիտի լինէր: Թե՛ որեւէ տեղ շեղուել եմք բնական հումքից եւ ընկել մեքենայի երախը: Մենք հիմա փողոցներում տեսնեալ հագարաւոր հագինք եմք,



տեսնեալ հագարաւոր անխաղաղ ու անհանգրում հագինք» («Անտառում», էջ 68):

Առանձնութեան եւ անհաղորդութեան այս հոգեվիճակին վերլուծումը բաւական բարդ կացութիւն մը երեւան կը բերէ եւ դժուար է զայն պարզացնել: Անոր մէջ դէր ունին Կարապենցի հերոսը՝ իր խառնուածքով կամ անցեալով, շրջապատը, քաղաքակրթութիւնը եւ, մասնաւորաբար, ամէնուր զգացումը բրտութիւնը:

Կարապենցի հերոսը ստեղծագործական աշխատանքի հետ կապուած կամ արուեստագէտ մարդ է — ընդհանրապէս ճարտարապետ, որ կառուցումի հետ կապ ունի (ինչպէս «Հաղորդութիւն» պատմութեան մէջ՝ Ադամեանը, «Անտառում»ի մեռնող հերոսը, եւ այլն), «Իդեալիստ» մէջ՝ նկարիչ, «Կրկնընկալ»ին մէջ՝ լրագրող:

Կրնայ ըլլալ, որ այս տիպարը, իր զգայուն խառնուածքին պատճառաւ, աւելի ուժգնօրէն կը զգայ շրջապատին ու քաղաքակրթութեան ճնշումը իր վրայ, իսկ աւելի ուշ՝ կ'ապրի անհաղորդութեան, անձկութեան եւ առանձնութեան փորձառութիւնները: Կացութիւն մը, սուր հեշտութիւն, ասպարէզի իրադրոժման համար մղուած հեւասպառ պայքարէ մը ետք՝ նիւթական բարօրութեան կը հասնի եւ, նոյն այդ պատճառաւ, կը դատապարտուի ամուլութեան: Ան կը զգայ, թէ մէկ մասնիկը դարձած է այն քաղաքակրթութեան-ընկերութեան, որուն դէմ կը պայքարի: Եւ կարծէք, գիտակցուած արարչով մը, դէպի իր մահը կ'երթայ...

Հասնել յաճախ ազգային պատկանելիութիւնը կը միջամտէ, սակայն ոչ տունդատեան հակադրութիւն առումով:

«Եւ ես խաղաղութեամբ զտէր ազգայնագրութեան անուն պատմութեան մէջ կարելի է հետեւիլ այս կացութեան որոշ դիտարկում: Արան նիւ Երբէք Էքզ փողոցին մէջ է եւ իրեն համար կը ստեղծուի պահ մը, որ կարծէք կ'երթայ մինչեւ 25 տարի առաջ, կարծէք կը փորձէ գտնել կորսնցուցած աշխարհն ու հետեւը իր հասուն պատանութեան: Յանկարծ դիմացը կը տեսնէ երեք սեւամորթ դատարկապորտներ, որոնք քիչ ետք կը կողոպտեն ու կը գաշունահարեն զինք: Մնացեալը ծեծ կերած, արիւնլուայ եւ ուշաթափ մարդու մը գիտակցութեան հոսանքն է: Սեւամորթ տղաքը Արային կը յիշեցնեն Պարսկաստանի մէջ իր պատանութեան մղած կռիւները եւ, Պարսկաստանէն նիւ Երբէք, կը տարուբերի անցեալի ու ներկայի կապը, որ կը վերածուի իր եւ հօր կապին: Յարաբերութիւնը կը դժուր բաւական նուրբ ձեւով:

«... Վերադառնալ սկզբնաւորութեամբ, սկսել սկզբից, երբ իր հայրը ոգի էր, երբ ամէն ինչ կայուն էր, մնայուն, գրեթէ յաւիտեանական: Այդուհանդերձ իմքն ու իր հայրը անժամօքմեր մնացին» (էջ 35-36):

Հօրմէն օտարացումը՝ իր անցեալին հետ օտարացում մը կը մատնէ: Պարսկաստանը, որ հօր, մանկութեան եւ պատանութեան հետ կ'առնընչուի, այդ կատարական հետ կ'առնընչուի, այդ կատարական հետ կ'առնընչուի, այդ կատարական հետ կ'առնընչուի:

տանութեան հետ կ'առնընչուի, այդ կատարական հետ հաստատուն աշխարհն է, իր յստակ մթնոլորտով եւ տարիքի հետ աղբիւս ունեցող ձգտումներով ու աշխուժութեամբ: Նոր Աշխարհը, Ամերիկան, իր ապրելակերպով, մթնոլորտով, քաղաքակրթութեամբ եւ ներթափան արժէքներով իր մէջ կ'առնէ միջին տարիքին հասնող տիպարը, որ, ճիշդ է, հօր պէս յոգնած է քաղաքներէն, սակայն հօր պէս կ'առնէ իմաստ տուող անցեալ-խարխալ մը չէ ունեցած, իսկ այս շրջապատը, իր սոսիալականութեամբ ու բնութագրով, տարբեր եւ ակէտ մը չի բերեր իրեն հետ: Ինչպէս կը տեսնենք, մենք մեզ, բրնձահատարը, կը գտնենք Կարապետի տիպարութեան հարցերուն մէջ:

Սոսիալական զիջումները նիւ Երբէքն է, Մանհատեր, հակառակ անոր, որ յաճախ ա'երկեկեան ալլ քաղաքներուն մէջ եւս մենք մեզ կը գտնենք: Այս աստիճանի վրայ շրջապատը (եւ մթնոլորտը) իր բոլոր երեսներով եւ, մասնաւորապէս, իր բոլոր երեսներով է ամէնուրեք:

Այսպիսով, նիւ Երբէքն է (որովհետեւ երկու եզրերն ալ ներկայ են այնտեղ), կը գտնուի քաղաքակրթութեան մը դիմաց, որ կարծէք անանկացած է, ուղղութիւնը կորսնցուցած եւ բեռնաւորուած անձկութեամբ ու բրտութեամբ:

Քաղաքակրթութեան այս անհնկութիւնը Կարապետի հերոսին վրայ կը ձգէ ունի տպաւորութիւնը, թէ յայտնութեան նստեցնել, սոսիալական դէմ յանդիման կը գտնուի: Ընդէն է, որ ասպարէզի յոյսը տեղ մը հատիկի պէս կը նետուի միշտ, սակայն, բնորոշութեամբ մթնոլորտը կը մնայ ընդհանրապէս մուսայ: «Երբեքմեր» աշխարհական պատմութեան մէջ, որմէ նուեւ հասարակ իր անունը ստացած է, ահա կը տեսնենք աշխարհ մը, որ գուրս եկած է հիւճական բախումէ մը: Ընդէն է, որ Յոյհան Սեբաստիանի խաչուած որդին, որ եղբայրութեան մասին խօսած է եւ գտնուած մանուկը աւելի փայլուն ապագայի մը յոյսը կը ներշնչեն, որ հաւանաբար ամէն ինչ սկիզբէն պիտի սկսի:

ռակային այս մէկը չի թափառ ներկայի անկարելի կացութիւնը:

«Այսօր մի մարդ սպանեցիմ այգում», «Եւ եւս խաղաղութեամբ...», «Ո՞վ ասաց, թէ քաղաքները չեն մեռնում», «Անտառում», «Հիմզ ևողի Կործնադրում» պատմութեան մէջ եւ քիչ մը ամէն տեղ կը հանդիպինք բոսնիական յապտակութեան մը:

«Այսօր մի մարդ սպանեցիմ այգում» պատմութեան էջերուն կանկաթեան ֆիլմերը յիշեցնող նկարագրութեան մը մէջ կը տեսնենք մարդ մը, որ ամենայն պաշարներով հագնուած, շէնքերէն դիտող հանդիսականներուն դիմաց, կին մը կը սպաննէ: Պատմութեան զլխաւոր տիպարը, որ ականատես եղած է դէպքին, Նոյն. պէս ոչինչ բնած է փրկելու համար զայն եւ, իր գիտակցութեան մէջ, դէպքին պատկերը, իր ֆիզիքական մանրամասնութիւններով, հետզհետէ կը ծաւալէ, տակաւ առնչուելով իր անձնական հարցերուն — առօրեայ աշխատանքին մէջ ապրած ամբարշտին, տիկնոջ հետ հարգապատկան թաղակալութեան, որոնք կ'անդրադառնան իր բոլոր հակադրականութիւններուն վրայ:

Անշուշտ զժողովրդի վերջումը պատճառները այս համատարած վայրագութեան կամ բնկերութիւնը յատկանշող բնութեան: Կրնայ ըլլալ, որ այս մէկը ամերիկեան մթնոլորտին հետ աղերս ունի եւ կամ կը բխի հաղորդակցութեան այն պակասէն, որ անհատներու միջեւ կ'երկարի: Որովհետեւ, երբ անհատը անտարբեր է ուրիշի մը կացութեամբ, եւ կամ՝ օտարացած է ընկերութենէն, այլևս անհասկնալի չի դառնար իր կիրարկած բոսնիականը:

Ուրիշ ազգակներ ալ կան անշուշտ: «Անտառում» պատմութեան հերոսը ճարտարագետ է եւ մինչ կը գեղերի անտառին մէջ, ինքզինք անուղղակիօրէն յանդաւոր կը զգայ բնութեան աղաւաղման նկատմամբ: Վերջի վերջոյ, իր շինած կառոյցներով ինք մասնակից է քաղաքային այն կենցաղի ստեղծման, բնութենէն հեռացման, որուն զոհերն ենք բոլորս...: Եւ մինչ հերոսը պատմութեան վերջաւոր

րութեան կը մտածէ այնպիսի բնակարաններու մասին, ուր կարելի է մարդը աւելի մօտեցնել բնութեան՝ զոհը կը դառնայ այն անհեթեթ ու կոյր բոսնիական, որ կը տարածուի ամբողջ ընկերութեան վրայ: Ոգրերգականօրէն վայրագութիւնն ու մահը կը հարուածեն մարդուն գիտակցութեան պահուն, երբ կը խորհի հակառակ ուղղութեամբ նախաձեռնութիւններ առնել:

Այլ երեւոյթ մը, որ ընթերցողին ուշադրութենէն չի վրիպի՝ փոթորիկներու, հակառակորդական պահերու եւ անակնկալօրէն յայտնուող կիներու ներկայութիւնն է «Միջնաբերդ» պատմութեան մէջ: Որեւոր մը, որ անհասկընալի չէ, որովհետեւ կարապետներ տիրանալով յաճախ տանտնականներով մոռցուած (թաղուած) ձգտումներ ունին, որոնք կուտակուելով պոռթկումի կը սպասեն:

Ահա «Ամառը» պատմութեան հերոսը՝ Արմանդ Արմանդեանը, որ կ'իջնէ Ամերիկայի մէկ կողմացած շրջանը, հետո՛ւ Մանհայթն եւ ամերիկեան քաղաքակրթութեան ինքզինք հեռէն, ձկնորս ծերէ՛ւ: Ռոբերթսոնի խմբագրանքը՝ Հոն է, որ յանկարծ կը յայտնուի Դարիանի Գարծէ՛ք միշտ ճանչցած են իրար: Գիշերը կատարի փոթորիկ է եւ, ծովի ջուրերը բարձրանալով՝ կը հասնին մինչեւ ամբարտակը, ուր կը քալեն Արմանդն ու Դարիան: Բարձրացող ալիքներուն դիմաց Արմանդը պիտի խորհրդածէ:

«Ծովը կլանում էր Երանց: Հետզհետէ սեղմում էր օդակը՝ մէկ անգամ ընդ՝ միշտ խնդրելու մը: Նրանք գիտէին այդ եւ սպասում էին: Հասել էր ճշմարտութեամբ պահը եւ այլեւս վերադարձ չէր: (...): Պատահականը դարձել էր մաթեմատիկական: Մի տեսակ տես ծանրագոյնութիւն: Պատահականութիւն: Արմանդին թուաց, որ իր ամբողջ կեանքում այս կղզին էր որոնել՝ եռնալիւս իր անկախութիւնը այն քաղաք կապամեծերից, որոնք գերի էին իր էութիւնը: Եւ հիմա, երբ հասել է, մահը այնքան էլ անաւոր չի թուում: Մի քայլ: Արիւնքեան լոկ մի քնիւյ: Ահա ամբողջութիւնը: Ամբողջ եւ

դելուքիմը: Արմանդ Արմանդեան: Մի  
նշանահատ: Անդէմ, անուրազիծ մի  
կեանք, որ չի եղել: Ահա ամբողջ Բ...ծ  
իրականութիւնը: Ուրիշ քան կա՞յ...»  
(էջ 89):

Առտեղ յատակ պոթորիւմ մը կայ  
մարդու առօրեայ կացութեան ու կենցա-  
ղին գէժ, որ թոյլ չի տար կեանքէն ու  
մահէն վախճող սովորական անհատին իր  
ներքին ուժականութիւններն ու ձգտում-  
ները պայթեցնել:

Նման կատաղի փոթորիկ մը կայ նաև  
«Աքալայա»-ի մէջ: Կարծէք նոյն վայրին  
մէջ կը գտնուի՞նք, ինչ որ շատ ալ զար-  
մանալի չէ՞ («Աքալայա»-ի, «Ահաբ»-ի,  
«Գոնեակ»-ի եւ նոյնիսկ որոշ չափով «Ան-  
տառում» պատմուածքի ոչ-քաղաքային  
միջավայրերը կամ շրջապատը յատակ նը-  
մանութիւն մը կամ ներքին կապ մը ու-  
նին): Ահա Սարեանը, որ կը հանգիտի-  
րի՞ մը անբոյժ, կէս-խելագար ծերուկին,  
որ կ'առաջնորդէ գինը մինչև Աթալայա:  
Ուստեղ եւս կը հանդիպին մեծ փոթորի-  
կի մը, ուր ծերուկը դուրս կու գայ՝  
թանդուած դանդաղատան զօղանշող դան-  
դերը դատրեղնելու: Ահա փոթորիկէն  
դուրս եկած Սարեանը, որ կրնար նաեւ  
Որմանդեան կոչուի՞ր՝ կը մտածէ:

«Առայժմ ես լոյսի՛ պէտք ունեմ:  
(...) Եւ ուզում եմ մէկ վարկեմ լոյսի  
մէջ ապրել, օռպէսի իմաստաւորուած  
յիմի ետեմ: Եւ այս բոլորը ո՛ր թէ մշա-  
կութի իմս եղանակաւ, այլ առաքինու-  
թիւնների համար, այլ յաջող ինքնագի-  
տակցութեամբ, օրվէսի նոր վերադառ-  
նում ուստի, կարողանամ հակադրուող  
ասել, թէ ես այնտեղ էի, մարդ էի» (էջ  
57):

Նախադասութեան վերջին բառերը՝  
«եւ այնտեղ էի, մարդ էի» հաւանաբար  
ամէն խօսքէ՛ կամ մտածումէ՛ անելի կը  
բաղադրեն Սարեաններու կամ Որմանդ-  
եան դրդապատճառներն ու հոգեմիճա-  
կը: Այդ համատարած բրտութեան, ըս-  
տառող եւ ամբողջող կենցաղին ու ան-  
հեթեթութեան մէջ՝ հրամայականը  
պոռթկալու անհրաժեշտութիւնը կը դառ-  
նայ, ստեղծուած առիթին, պահին մէջ՝  
հոն՝ ըլլալու, ինքզինք իբրեւ մարդ փա-  
-

տելու բուարարութիւնը:

Ճիշդ այս ապօտոմբ, չարմարող  
կեդուածքը կը փնտռէ Սիւսի Դարբին-  
եան, որ սիրելով հանգերձ իր ամուսինը՝  
Վահէն, որ ժամանակին երազներ ունե-  
ցած է անկարելիին հասնելու, սակայն  
այլիւս բնդունած է շրջապատի ու հասա-  
րակութեան պարտադրանքները, յարմա-  
րած ու կողիացած է: Միլիւն կը զգայ,  
որ Վահէն այնեւ ո՛չ թէ իրեն, այլ հա-  
սարակութեան կը պատկանի. կորսնցու-  
ցած է իր ինքնութիւնը:

Անշուշտ կացութիւնը փարատմաւ,  
տարականոնային է որոշ չափով: Ի՞նչ  
համեմատութեամբ կարելի է ձգտումներն  
ու ինքնութիւնը պահել նման ընկե-  
րութեան մը մէջ: Վահէն կը յարմարի,  
սակայն հարց է նաեւ, թէ կարելի՞ է ա-  
մէն վայրկեան ընկերութեան դիմաց բո-  
լորապէս կեցուածքով ապրել: Վերջ ի վեր-  
ջոյ, շատ աւ տարբեր բան մը չի թեւա-  
դրեն Վիեթնամէն վերադարձած Ռէյմոն-  
դը՝ Սիւսի բարեկամը («Ուշացած ալ-  
բատրաք»):

Այս եւ հասարակ միւս տալանայնորեն  
ունեմ չի բերեր Կարապէնց եւ անի-  
մաստ պիտի բլլայ՝ հեղինակէ մը լուծում-  
ներ ակնկալու: Հայ մարդու տալանայնե-  
րուն ծիրին մէջ, այս առումով հետա-  
դարձական է «Մարգարիտ»-ը: Մարգա-  
րիտ այն հայուհին է, որ քոթ՝ Միւզիին  
հոն ամերիկեան միջավայրին ու բնիկ-  
րութեան չի յարմարի: Այս տարբեր,  
չարմարող կացութիւնը մինչեւ ո՛ր  
կրնայ շարունակուի: Մարգարիտի ա-  
ռանձնութիւնը, կենդանի կեանք մը բո-  
տեղեւոյ անկարելիութիւնը, մինչև  
սոնետայնութեան կ'առաջնորդէ գինը:  
Ճիշդ է, որ պատմուածքի վերջաւորու-  
թեան, լողարանին մէջ, Մարգարիտի յո-  
գանքը մկրտութեան, վերստին ծնելու,  
ընդունւած մարմնին վերադառնալու խոր-  
հրդանշական իմաստ մը ունի, սակայն,  
այդ բոլորով հանգերձ, եւ բոլորէն ան-  
դին՝ դժուար է Մարգարիտի նոր կեան-  
քը, ամերիկեանի ու հայկականի պատ-  
մանցումը պատկերացնել...

Այս է բնդանուր շրջագիծը «Միջ-  
նարար»-ին:

Ինչպէս կը տեսնենք՝ Կարապետի հերոսը խորհրդածող մարդն է։ Այս պատճառով ալ զխաւորարար խորհրդածութեան կամ գիտակցութեան հոսանքի մը մէջ կը զարգանան կացութիւնները։ Աւանդական սուսմով պատմուածքի գիւղացար փնտռելը սխալ է հոն եւ կը կարծենք, թէ գլխաւորարար նման ամբողջութեան մը ընդմէջէն աւելի յատակ ու հասկնալի կը դառնան Կարապետի տիպարներն ու տաղանդները։ Այս գիծը հաստատելով հանդերձ, կ'աւելցնենք, որ այս իրողութիւնը «Միջնարար»ի պատմըւածքներուն համար միաժամանակ թէ՛ առաւելութիւն է եւ թէ խոցելի յատկութիւն։ Որովհետեւ այդ գէպքերն ու կացութիւնները յաճախ շատ նման են իրարու...

Ուրիշ իրականութիւն մը, որ կ'ուղենք արձանագրել՝ Կարապետի մատնած տկարութիւնն է ընդհանրացումներու հանդէպ։ Մասնաւոր, նոյնիսկ սովորական կացութիւններու, մանրամասնութիւններու փոխարէն՝ ամբողջական կեանքի, խոր ձգտումներու կամ երազներու մասին ընդհանրացումները բան մը կը պահպանեն կացութիւններու եւ կերպարներու ուժղանութենէն, ուժականութենէն եւ տառնմայակութենէն, շատ յաճախ հաստատումները դարձնելով յրապային։ Այս իմաստով, նկատելի է թանձր զոյներու, հայփրպայներու կամ չափազանցութիւններու գործածութիւնը։ Ամէն

պարագայի, այս մէկը կ'ընայ տեսակէտի հարց ըլլալ նաեւ։ Օրինակ, «Նա յիշեց Բաղաբը, ժխարմ ու մեքենաների ծախք եւ զարմացաւ, թէ ինչպէս է կայսրացի ղիմանալ Բաղաբակը քաղաքում այս առիթի տեսիլով։ Այս, մարդկութիւնը դառնալ ինքնասպանութիւն է գործում։ Հետաքրքիր է իմանալ, պարտնմեր, թէ ո՞ր եմք գնում (...) Արդեօք ա՞յս է կեանքը։ Այսպէ՞ս պիտի լինէր», եւայլն (էջ 68)։

Նման ընդհանրացումներ մեզի կըրնան խոցելի թուիլ, սակայն ուրիշներու համար՝ կ'ընայ ոճի հարց նկատուիլ նաեւ։

Հաւանաբար պատմուածքներուն առջինն ուշադրաւ երեսը՝ այլաբանութեան եւ ֆիզիքականօրէն շատ շօշափելի իրականութիւններու միախառնումն է, որ մանկութեան կամ յետադարձ ակնարկներու, գիտակցութեան հոսանքին ընդմէջէն եկած պատկերներու ու մտածումներու հետ թելադրականութիւն կը ստեղծէ եւ խօսքի թարմութիւն կը բերէ։ Այս շիւթը նշմարելի է մասնաւոր հասոգրի առաջին վեց եւ քանի մը այլ պատմուածքներուն մէջ։ Նոյնիսկ երբ հեղինակին գլխաւորութիւնն ու բռնիքը (մեքենա՞ծը) այդքան յատակ կամ ճշգրիտ չէ՝ աշխտեղ թելադրականութիւնը ուժեղ կը մնայ։

Ճիշդ այս թելադրականութիւնն է, որ հետաքրքրական կը դարձնէ «Միջնարար»ի պատմուածքները։

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ



## Թ. ԿԱՐԱՊԵՆՑ

## Եւ եւս խաղաղութեան գտէր աղաչեսցու

Գլուխը իբր շէր, գլուխը հանել, փոխարէն կապարէ մի գունդ էին դըրել: Արան ճիւղ գործ դրեց, ձերբազատեց թեւը, կիսադէմը յենեց ժայթին: Շնչեց աղջամուղջի պաղը, նրա աչքերը որոնեցին դիմացի շինութեան լուսամուտները, ապա ուղղահայեաց գծերից վեր, մի պատառ երկինքը, ուր պըսպըղում էր Արուսեակը: Մոլորակի լոյսը նրան յիշեցրեց իր կեանքի չժընւած առաւօտները: Ազատ ձեռքը տարաւ կողին, շօշափեց գաղջ, լարծուն աւրինը եւ յիշեց, որ սեփական տեղ յունի աշխարհի վրայ, որ յազնել է քաղաքներից, իր հայրն էլ յազնել էր քաղաքներից, սակայն նա գոնէ մի ապուշէն ունէր, նա կամաւոր էր եղել Հայկական Բանակում, Հանրապետութիւն կերտել, իսկ ի՞նքը: Ինքը մերժել է բոլոր հանրապետութիւնները, որովհետեւ բոլոր հանրապետութիւններում էլ խորթ է մնացել, երկրորդական քաղաքացի: Յաղթանակի Կամարից երկարող շատաւիղներից մէկի վրայ ահագին բազմութիւն է հաւաքուել մի ինչ-որ անյայտ թատրոնի առջեւ: Հայ մշակութիւն փառասուն է: Այսպէս թէ աշխարհ, Փարիզի մի արտացոլումն է: Ու մանք սպասեակների են նմանում, ումանց վրայ Ներսիսյան ու մի աղբիւրնութիւն չի թողել: Ֆրանսերէն են խօսում, Ֆրանսացի չեն, հայերէն են խօսում, հայ չեն, տեղացու պէս են հագուած, տեղացի չեն: Միջնադարին հասարակութիւնը խռնուում է կից դահլիճում եւ սկսում է ուտել: Ա՛հ, այդ հայերը որչա՛փ են ուտում: Բեմի վրայ Ֆրանսուզին իր սպասարութիւններն է պատմում Սոփիստիկան Հայաստանից եւ ժողովուրդը խանդավառ ծափահարում է, կարծես ուզում է մաս կազմել հեռուստ իրականութեան, ապա շարժանկար, դործարան, դպրոց, պողոտայ ու հայերի լուրջ դէմքեր, Մարտիրոս Սարգսան իր աշխատանքներում, Վիկտոր Համբարձումեանի ահեղ երեսփին իր խցիկում: Երկու հարիւր տարուց յետոյ էլ հայր խորթ պիտի մնայ Ֆրանսիայում, ինչպէս ինքը խորթ է մի բուն Ֆրանսահայերի մէջ: Ինչ լաւ է ինչեւ Փարիզում ու թախտի, որովհետեւ զեղեցկութիւնը թախտի է թերում, սակայն ինչպէ՞ս յարաբերել հայերի հետ, երբ յարաբերութեան եզրերը արդէն իսկ բթացել են, այսպէս ինչպէ՞ս բացատրել իր ահուհի մեծութիւնը հայութեամբ չեղուն Փարիզեան այդ քահանայ: Ամէն պարագայի, ամբարտաւան է Արեւմուտքը: Ամէն պարագայի... Oh merde...

Արան Հիմա թիկունքը տուել էր պատին, եւ հայեացքում ծովեր էին գոյացել: Նրա գէմքը երկարել էր, այստեղները ցցուել: Նրան թւում էր, թէ իր ոտքերը անհաս զուգահեռականներ են, տարածուելով, հասնելով մինչեւ անհունի մէջը: Միայն թէ կարողանար մի գլանիկ վառել: Ժամանակը իրաժարուել էր: Նա ամուր կառչել էր սլաքին, որպէսզի վայր չընկնի երկրապնդից: Սակայն իր վրայ խոնարհած այս մարդիկ ինչու են մնջախաղի անցել, կարծես տասնեակներով Չարի Չափիներն լինեն, խոշոր, սեւ, վե-

Հերոս աշքեր, իսկ ամէնից ծիծաղելին Այուլֆ Հիթ երն է՝ շարունակ խած-  
նելով բխի ծայրը, ինչո՞ւ շարունակ Դախաու, Բուխենվալդ, Աուշից,  
Բիրկենաու, Թրերլինկա, Բարի Եար եւ երբեք Տէր-էլ-Ձօր, Էրդրում, Շա-  
պին Գարաւիսար, Քարրեբր, Սերաստիա ու Տրապիդոն, Սամսոն, Բիթլիս,  
Մարդին, Մուշ, Մալաթիա, Մոփաֆենայ Կիլիկիա, Իզմիթ, Պարտիզակ,  
Մարաշ, Կոնեա, Ուրֆա, ամբողջ Արեւմտեան Հայաստանը, պոռնի՛կ աշ-  
խարհ, պոռնկացած մարդկութիւն, ո՛չ էմէրալդա, Պորտուգալիայի դուս-  
տըր, այս գիշեր ես այնքան վիշտ ունեմ, որ չեմ կարող լսել քո թուի  
մարմնի կանչը, թէ՛կուզ որքան աստղեր թափուեն Լիսաբոնի վրայ, իմ ա-  
նո՛ւնը, ի՞նչ է իմ անունը, ես չգիտեմ իմ անունը, Բեթհովէն է իմ անու-  
նը, այո՛, այդ իմ անունը, մի՞թէ այդ չէ ապացուցում իմ ինքնութեան  
թուղթը: Ըամբայ տուէ՛ք Շիլլերին, սակայն ինչո՞ւ է նա սպիտակ հագել,  
չիմի՞ թէ Հիւանդապահ է դարձել: Լուսթիւն, թող երգի՛ բանաստեղծը,  
թող երգեն բոլոր բանաստեղծները, որպէսզի խաղաղութիւն լինի աշխար-  
հում, Հիւանդատար այդ սպիտակ ինքնաշարժը ի՞նչ գործ ունի բեմի վրայ,  
Հեռացէ՛ք ոտերկաններ, սրագէղի խինդ ու երջանկութեամբ լեցուեն աշխար-  
հի փողոցները:

#### ODE AN DIE FREUDE

Արան չէր կարողանում ընկալել եղելութիւնը, այնքան որ անբրական  
էր եղելութիւնը: Արիւնք լեարդացել էր նրա կողի ու ալ սրունքի վրայ: Ճա-  
շէր զգում, միայն անասելի ծանրութիւն ու կիզիչ կարօտը իր զաւակների:  
Մարաւ, Ծարաւ, անյազ ծարաւ, կարծես մի ակնթարթում ցամաքել էին ոմ-  
կանոսները, մնացել էր աշխարհի կմախքը, ծխեկալած, ամայի: Նա չէր  
յիշում պուշրոտ ռիկացի մի կնոջ անհասկանալի լեզուն, սպա մի այլ ան-  
ցողի կարեկից վերաբերմունքը, ինչպէս չէր յիշում վաղ առաւօտեան չոր-  
ծի շտապ մի խումբ աշխատաւորների քնադդական հեռաքրքրութիւնը աղէտի  
նկատմամբ: Թատրոն էր: Ինքը թէ՛ դերակատար էր թէ հանդիսատես: Եր-  
բեմն ասուպի պէս փայլատակում էր նրա միտքը, այդ վայրկեաններին նը-  
րան համակում էր մայթի վրայ մահանալու սուր տազնապը: Շտապ օգնու-  
թեան կտաք արգէն հասել եւ սառն իրարանցում էր սկսուել: Ահագանդը  
յանկարծ ճեղքեց Մանհաթանի արմերը, ճիշդ բարձրացաւ, մի պահ կախուեց  
երկնաքերների բարձրաբերձ տատմանից ու շառաչով թափուեց ցած՝ բխրա-  
ւոր բեկորների ցանկում չորս դին: Ընդհանուր քարայումից գոյացած երգի  
ալիքը, ծփաց, ընդարձակուեց եւ հազարաւոր ջութակների աղեղները քերե-  
ցին ամպերի թեւերը:

Շտապունեց արեւելքը: Բացուեց արշալոյսը: Թաւ ջութակները փա-  
րեցին միմեանց եւ արեւի առաջին հոռադայթների հետ փողատարները դէպի  
Լիկինք բարձրացրին իրենց շէփոնները: Հոսեցին գետերը, ալեկոծուեցին  
ծովերը, քամիները կոծաչ ծապաւէնով պարուրեցին ցամաքամասերը: Մարդ-  
կային մի ձայն աւետեց կեանքի սկիզբը, նրան միացան այլ ձայներ, այլ փո-  
ղոցներ, այլ պոզուտներ, Մանհաթանի, Նիւ Եորքը, ամբողջ Ամերիկան,  
երգը տալածուեց, Հարաւային Ամերիկայից հասաւ Եւրոպա, Աֆրիկա, Ա-  
սիա, Աւստրալիա, բեռնները՝ դառնալով համամարդկային համերգ, ձօն  
երջանկութեան ու ուրախութեան...

ՅԱՅՈՒՔ ԿԱՐԱՊԵՆՃ

## ՊՈԿՈՒԱԾ ԾԱՌԵՐՈՒՆ ՏԱՐԵՐԷ

Երբ Նեոքը անտառը կը զարնէ և շանթերու փոխարէն, այս անգամ, մարդկային ձեռքեր կը զրկէ հոն, որպէսզի հիմնայնական կացինահարուի, սղոցուի, հարթիչ զլաններ տափարակ մակերեսի վերածեն զայն, իսկ բեռնատար մեքենաներ խիճ եւ աղիւս լեցնեն կենդանութեան այդ փերշնշարանին վրայ, անցորդը, հին անտառի ծայրամասերուն պարտեռ աստեղ, երբեմն կը հանդիպի արմատախիլ սրկուած ծառերու, որոնք իրենց պատմութիւնը կը պատմեն:

Անհետ կորսուած բաներու Թախիծր փոխանցող աղբի պատումները յաճախ զուրկ են սուգի աւանդական մարտահրուէրներէն: Հոն, իրենց ճակատագրին ձգուած, պանդաղօրէն մահացող, կարեւորն յափ չնշին խոփքով, նուազագոյն տրեւութեամբ, սրկուած ծառերը յամբօրէն կը տառապեն վերջնականութեան մը, որուն հետք սփռուած չի կրնար ըլլալ ցայտող շատրուաններու կենտրոնացած ջրփոխումը, որովհետեւ արմատը կենարար հողին մէջ չէ ալիւս եւ հողին ընդերքին կազմուող աւիշը այդպէս յամալէտս կը վատնուի:

Ա. Արփինէի այս երրորդ հատորին իւրաքանչիւր էջը ահա այս Թախիծր վարակուած է: Ուրիշի աչքերով դիտուած՝ այդ շատրուանները, յատկապէս երբ դուռնազեղ մեծ ոչխարու փայլին տակ կը ճառագայեն, գեղեցիկ են անշուտ եւ երախտագէտ ըլլալու շատ պատճառներուն շարքէն: Շատ, շատեր, սակայն, Վեննի ծառերը եմք այդ փայլամութեան ու երախտագէտ՝ ձեր մանկանքում, բայց մեր մէջ ձայն պապակ մը, որ ամենամոխս սեղաններուն ամենաբնական ըմպելիներն իսկ դոյզմ յափով չկրցան յագեցնել: Մեր համարմէք օրէ օր կը եալի, մեր կարոտախտը մեզ կը քաշէ ու դարման չի գտնուիր այստեղ կամ այնտեղ» (էջ 38):



Առանց արմատի չկարենալ ապրելու այս շարագուշակ յուսալքումը իր հետ կը բերէ անիծապարտութեան մը զգացումը: Առաջին պատմութեան իսկ, «Պոկուած Ծառեր», մենք կը հանդիպինք ծերունի գոյգի մը, որոնց Թախիծր արմաղ երկայնքին ցանուած ծառերէն միայն այն երկուքը, որ իրենց տան առջեւ ցանուած են, կը խամրին: Այս արմատները ահագին է, որովհետեւ իրենց զուտակն ալ օտար ամուսնութիւն կնքելով կը խամրի եւ իրեն հետ կը խամրենք ապագայի ալ միակ յարբ, որ ծերերը իրենց սիրտերուն խորը կը պահէին:

Տխրութիւնը կը յամենայն ու հեռուէն եկող լուրերու եւ արմատախիլ նոր ծառերու ստուերը կը յաճի խաղաղ ապօրեայի մը վերեւ: ... Բայց, ինչպէ՞ս էր մացնել, քմրեցնել հեռուներէն եկող ցըմ-ցող լուրերը: Կարելի՞ էր միթէ գէթ մա-

մանակաւորացէս մտնալ ինչ որ տեղի էր ունեցեր ինչ՞ որ այնքան եռում է եղած կեանքը, հայութեամբ բարախում, մեզի համար յոյս ու յոյս, ինչպէս հայրենիք» (էջ 100) :

Բնական է, այս անգամ, իրանահի զ'սրբորուն արձագանգը կը լսուի հատուր'ն է թերէն եւ ասիկա կու գայ բարդացողն, որ հոգեւորացնեալ արդէն իսկ մաշկեցնող հոգի ունենալ, որոնց յոյսը եւ յոյսը, պարբերաբար, աւելի կը նուազի :

«Դ՛նէ ապահով ապագայի մը յայտը ըլլաւ... Սգայիմք մեր կորուստները, քայլ ետք ետք հետադարձ զինուած՝ սեր ու մտայն ալ մզմաւանդին յայտը յայտը արեւոտ ազուր օրերու հետեւկալը ունեւանիմք վերջնականապէս» (էջ 100) :

Եւ թէեւ ամբողջ հատորը այս արեւու թեւեւութեամբ է, կարեւոր չէ յուզիչ, բայց նաեւ սիրտ տաքցնող երեւոյթներու նկարագրութիւնը անտեսել : «Ապաշաւ» անուն պատմութեամբը ամբողջութեամբ օրինակն է : Զարդէն վերապրած ժողովուրդի հայրերն ուր մէկը չէ ապրած ապահով երդիքի մը եւ կուշտ փորի մը կարօտը : Յոյսէ փ անոնցմէ մէկը ըլլաւ լոյս, իր ամբողջ կեանքի երկայնքին առատաձեւն եւ միտք կենդիւն՝ Ազնիւին՝ շատութեանց ընդդէմացած է : Հիմա, որ Ազնիւը շատոնց մեռած է եւ գաւազը հեռուները տեղ մը հայութենէ կտրուած, կը զգայ, թէ տարիներու ընթացքին դիմացած գումարները ի դուր եղած են : Պէտք է զանոնք օգտագործելի դարձնել : Եւ ահա, երբ արդէն ժառուան մօտ է, Ազնիւին անունով զանոնք կը նուիրէ ազգանքէն դուրսի մը :

Այստեղ, արդէն, արդարութեան եւ յաղթանակին շնորհը կը հնչէ բոլոր տեսակի ապահովութիւններու եւ խաղաղ, բարօր կեանքի փորձութիւններուն դիմաց : Որովհետեւ, Եղեռնէն տեսարաններ, անկաստան փկալութիւններ, ամէն վայրկեան աչքերու ներկայացող դիմանքներ, կ'մտնենք եւ արեւելի յաճախանքն ու ձայնները բոլոր մթնոլորտներուն, հեծեծանքներուն եւ հանդիմանքներուն՝ թարմ են : Եւ վրէժի հորիզոններն

բուն կանչը բերականորէ աւելի զօրաւոր է, քան մարիկէն փախուստ տալու, ապաստան գտնելու բնազդային ձգտումը :

«— Հորիզոն... հորիզոն լոյսը... յոյսը... — շնորհակալ :

«— Լոյս... խաւար է ամէն կողմ, դարձիք ու նայէ՛ սա շողշողում աշխարհիմ, ուր կը տանիս Քեզ : լոյսի շարժումն է հոն եւ յայտն ազրիւր : Ինչո՞ւ կը վարանիս... :

«— Ձեռք լսեք կամէ՛ք... կամէ՛ք, արուստ պէտք է երթալ, արուստ պէտք է հմազանգիւ...» (էջ 38) :

Շարունակութիւնը. անպայման յաղթանակ. կամ յաղթանակի երազին ընկերակցութեամբ՝ կեանք. այլապէս, կեանքը իմաստ ունենալէ կը դադարէ եւ այդ ճամբուն վրայ պէտք է վայրագ ըլլալ, անզիջող, անքաղաքակիրթ, ճիշդ Քաղանձագիտի աշխատանքին պէս, զոր «Ճգնաթիւն» գիրքէն կը մէջբերէ Ա. Արփինէ, իր մտորումներուն մէջ :

«Իմ Աստուածոս ամենաաւելի չէ, Ան լեցում է անգրութեամբ, վայրագ արդարութեամբ. ամենազօրեւ ինքնորէ յաւագոյնը : Ձի կարեկցիւր, մարդերու եւ անասուններու համար հոգ չ'ընեն, եւ ոչ ալ՝ առաքինութիւններու եւ զաղափարներու : Աստուծոյ բոլորը կը սիրէ վայրկեանի մը համար, երբ զայն գտնենք կը խորտակէ՝ անխնայապէս ու կ'անցնեն» (էջ 147) :

Անպարտին այսպիսի վրէժի զգուշութեան մը կը կանչէ ահաւասիկ Ա. Արփինէ բոլոր ան հոգիները, որոնք օտարութեան ու այլասերութիւններուն վրայ օրէ օր կը ծաշին : Փայտապակումներ, բնական է, կան : Յիշեն հանճար կը ճառագայթէ յոյսերու տեղում մը եւ ինքնագիտակցութեան կը մղէ երէցն ու երիտասարդն հաւատառապէս : Բայց պէտք է աւելի խորանայ, ուղիւ, պրպտել, ինքնաճանաչութիւն գաղաթնակարէն հասնել : Այս պարագային, Ա. Արփինէ դարձեալ Քաղանձագիտի կը դիմէ :

«Յիշե՛ք հանդէպ կատարած ծառայութեան ընթացքին, առաջին պարտականութիւնը է մերայնարիւնք մէջ գտալ

բալոր ճախահայրերդ: Երկրորդ պարտականութիւնդ է իրենց խոյանքը յուսաւորել եւ շարունակել իրենց գործը: Երրորդ պարտականութիւնդ է յանձնել գաւկիղ՝ քեզ գերագանցելու մեծ պատգամը» (էջ 146):

✱

Ա. Արփինէի պատմութիւններու այս երրորդ հատորը կ'ընթանայ յաջող եւ ոչ յաջող պատմութիւններու յաջորդականութեամբ: Իւրաքանչիւր պատմութիւն եւ տին՝ անոր յօրինման թուականը կրնա՝ որոշ օգտագործելու ունենալ աւելուած համար, թէ որոշը 1973էն (վերջին հատորին հրատարակման թուականէն) ի վեր իբրեւ գրողական արուեստի նուաճում ի՞նչ յատկութիւններն արժանադրած է:

Այս 155 էջ հաւուող հատորին առաջին (60) էջերը խառն արամադրութեամբ կարգադրելու ետք, ընթերցողը անակեղալի կու գայ «Սիրամ ու Հերան» պատմութեան կարգադրումը եւ այնուհետեւ, փոքր ընդամենը միջուկներով, քաջ առ քաջ, արդէն իսկ երկար ճամբայ կտրած գրողական հիւսիսը յայտնութիւնը կ'ընէ: «Յակոբի սէրը» եւս հոգեւոր անակեղալ մը ըլլալէ ետք, «Երեւանի» պատմութեան Ա. Արփինէն վերջնականապէս կը հաստատէ ապրող պատմութեան շարքին:

Կրահամ Կրինէն մէջբերում մը, «Գիրքերէս ոչ մէկը այնքան լաւ է, որքան պիտի ուզէի որ ըլլար» (էջ 101), որոշ կու տայ այն համեստ զսպանումները, որով Ա. Արփինէ կը մօտենայ իր

գրականութեան: Ինքնաքննադատութեան եւ ինքզինք առողջ կերպով դատելու յանձնալ խոստովանութիւնը աւելի յստակ կը դարձնէ, թէ Ա. Արփինէ, ի վերջոյ, ինչո՞ւ կը գրէ, երբ իր հերոսներէն մէկուն բերնով կ'ըսէ.

«Հարկաւ, կտրելի չէ ակնկալել, որ ամէն ընթերցող հաւասարապէս ըմբռնուի իմ կամ տեւ գրողի գործը: Մարդիկ իրենց մաշակով, պատրաստութեամբ, հասկացողութեամբ կը տարբերին իրարմէ: Իմ կարծիքով՝ լաւագոյն գրողը ա՛ն է, որ իր գործով կը յաջողի գեղարուեստական վայելք կամ գեղացում պարգեւել առանկագոյն անմիջապէս, որոնց մէջ գրեմը իմ անշուշտ ամէն կտրելի ընթերցողներ: Ես առանկապար կը գրեմ զանգրտածներուն համար. եւ եթէ պատահի, որ մեր դժուարահամները կարգան եւ ոչ մէկ ամէն տեսնեն ա՛յլ գրութիւններուն մէջ՝ կը խորհիմ. որ պատահող պէտք է փրկուին... իրենք իրենց մէջ...» (էջ 100-101):

Վերջինը ոսկի խօսք է բո՛ւր օգիւտ-խաւսներուն համար: Այս գործին մէջ արժէք չեն տեսներ եւ անոր խոռվքը չեն տպւոր միայն անոնք, որ «Յեղիդ հանգէպ հատարած ծառայութեանը ընթացքին, ստացին պարտականութիւնդ է մերաշխարհիդ մէջ զգալ քաջար ճախահայրերդ» իմաստութեան չեն անսար: Ձեռն անսար եւ, պատահող իրենք իրենց մէջ փնտռելու պարագային, կը նկատեն, որ այլասերած են արդէն եւ առաջին պարտականութենէն ետք երկրորդ ու երրորդ պարտականութիւններն ալ ոչ մէկ արժէք ունին իրենց համար:

Ն. ԴԻՄԱՔՍԵԱՆ

## Ա. Ա Ր Փ Ի Ն Է

## պոկուած ծ'ա'ն եր

Ո՛վ կրնար ըսել, թէ մարդկային սա աւերակը, որ ինքն էր՝ ժամանակին եղեր էր Անդրանիկի ամենաքաջ զինուորներէն։

Հին օրե՛րը... Այդ հին օրերու հերոսական դրուագներով իմաստաւորուեր, հարստացեր էր իր կեանքը։

Կը վերապրէր անվախ առիւծներու նման իրենց յառաջխաղացքը, հերոսական մարտնչութիւնները, յաղթանակներու ոտնդնած խանդավառութիւնը, եւ կամ՝ այդ արիւնոտ ճամբուն վրայ ինկող սրտակից ընկերներու վրէժի գոհացումը խթանող մորմոքը։

— Միախառն թողիւր, թողիւր ըսիք, թողուցի, ի՛նչ օգուտ ըրաւ։ Մատներս համրիշ։ Կը փնտռեն հիմա, ո՛ւր է կորեր, ո՛ւր է կորեր, — գանգաւորացաւ ծերունին։

— Գործածած չունէիր, տեղ մը դրեր եմ, միտքս չէ. դուխ չէ միացեր, օր մը չէ օր մը ձեռքս կ'անցնի հարկաւ...

Հին օրե՛րը... Աչքերը կը փակէր ու հոն, իր առջեւ էր Անդրանիկը, իր խօսուն դէմքով, կրակոտ աչքերով, որոնող հայտացք հեռուն, ռազմադաշտերուն, թշնամիի դիրքերուն։

Ձայն միշտ ալ կը տեսնէր իր ձիուն քամակին։ Ատրիներէն նուէր ըստացած ազնուացեղ Նժդդի թամբին։ Երկուքն ալ անդուսպ եւ ցափկոտ։ Առաջ խոյանալու, ամէն պատուար քանդելու, հարուածելու, յաղթելու հզօր մղումով օժտուած։

Փաշա՛ն... Հեքիաթային հերոս, երկինքներէն իջած ռազմագէտ։ Թշնամիին իսկ հիացման արժանացած վրիժառուն, որուն ոչ մէկ զնդակ կը դպչէր։

— Ասլանը... Եղիս, ի՛նչ խելացի հայրմըն էր Ասլանը... Անդրանիկին աչքին լոյսը։ Վա՛յ էր եկեր, թէ որ ժամանակին հող շտանէին, խոտն ու դարին ուշացնէին։

Կիներ չպատասխանեց։ Քանի՛-քանի՛ անգամներ լսած էր այդ բոլորը։ — Էսօր էգուց ի վեր ֆահալ աղջկայ պէս կը դործես. էնքան խօսքերը, խրատները մէկ անկանէդ մտան, միւսէն ելան։ Քու սիրտ իմինէս լաւ չի՝ դիտես. դու քեզ չես մտածեր, ընծի մտածէ...

Իրաւունք ուներ ամուսինը։ Բայց տուն էր, մարբել կ'ուզէր։ Ինք չընէր՝ ո՛վ պիտի ընէր, խեղճ Աստղի՛կը... Գոնէ մօտ ըլլար... Գործէն յոգնած կ'երթար տուն. հազար հոգ ու դրադում։ Յաճախ կը հեռաձայնէր, կը գոչւայնէր, կը յիշեցնէր։

«Մա՛, չըլլայ որ յոգնիս. փափան ալ, դուն ալ, գեղերը առնելու չըմտնաք»։

Ձարմանալիօրէն անհանգարտ էր։ Սովորականէն տարբեր վիճակ մը։ Երբ մօտեցաւ պատուհանին ու ականարկը ինկու դիմացի մայթին՝ դադրեցաւ շնչելէ։ Կարծես մէկը սիրտն էր, որ պոկեց։

Անշարժացած դիտեց։ Կուրծքին տակ ու փողոցին մէջ ինկած սպարապէն, շար նախազգացումի մը առթած խռովէն՝ մնաց հոն քարացած, ար-

ձանաղած: Ակայի՛ն ծառերը...

Որքա՛ն արագ անցեր էին տարիները: Անո՛ւշ տարիները:

Աղջիկն ու աղան փոքր էին տակաին, երբ փոխադրուեցան այդ շրջանը: Մի րեցին յարկաբաժինը, օրեցին փողոցը, օրեցին մանաւանդ թմբիկայն խուրը, աղուոր ծառը դիմացի մայթին: Անոր հարուստ սաղարթներուն կանանչովը կը պայծառանար իրենց հողին, ու ամէն զարնան՝ զնփուէին հետ, փոքր ծաղիկներուն բոյրովը կը յազնար օդը:

Օր մը, տղաքը դպրոցէն գրեթէ լալով եկան տուն: Գործնա գծախոտութիւն մը, մահ մըն էր պատահած:

Ակար ծառը...: Կտրեր էին այդ փարթամ, աղուոր ծառը: Ծառքեր էին զանգատները: Սաղարթները ետեւի շէնքին լոյսը, արեւը կը խափանէին ու տերեւներէն թրթուրներ կը թափէին:

Անցան տարիները: Տղաքը մեծցան, ամուսնացան, զաւակներու տէր դարձան ու իրենց՝ ծերացան...

Թոռներով հրճուեցան, ջերմացան, ինչպէս նաեւ նոր ցաւերու տէր դարձան:

Ընկերութիւնը Հայկը հեռաւոր նահանգ մը գրկեց. Ատղիկը՝ երեք տնչափաճատ զաւակներով՝ այրիացաւ: Առաջինին կարօտովը ու երկրորդին վիշտովը տապալակացան:

Առաւօտ մը, փողոցին մէջ եռուղեռ ինկաւ: Գործաւորներ փողոց դործիքներու ժողովով լեցուցին միջոցը: Մայթերուն վրայ մօտ քսան ոտք հեռաւորութեամբ քառակուսիներ քացին ու պզտիկ ծառեր տնկեցին: Այր ու կին ու բարեկամացան: Կանանչի ծառաւ իրենց աչքերը մանկական հրճուանքով փայլեցան:

Դէմ առ դէմ նստած՝ երկար ժամանակ խօսեցան հին օրերէն, հին յիշատակներէն, հին օրհնութիւններէն: Հայրենի արտերու, աղբիւրներու, արօտաւայրերու, հայրենի լեռներու, կարկաչուն աղբիւրներու հազար եւ մէկ բարեբեմէն: Ու երբ կրկին նայեցան վտիտ բուններով նոր տնկուած մատղաշ ծառերուն՝ արցունք կար իրենց աչքերուն:

— Այդ կողմին իմա է, մաթ կողմին՝ քուկդ, — ըսաւ ամուսինը՝ տըրամադրութիւն փոխելու նպատակով ու ինչպէս:

Նորութիւն մը ունէին հիմա: Ակնկալութիւն մը: Ամէն առտու, փոփոխութիւն մը տեսնելու յոյսով կը մօտենային պատուանին:

Առաւօտ մըն ալ, լերկ ճիւղերուն վրայ շարուած հաղիւ նկատելի պըտուկներ երեւցան, որոնք օրէ օր ունեցան, տաք հովերու զգուանքէն պայթեցան, բացուեցան:

— Եղիս, տե՛ս, իմի՛նիս մօրճերը քու ծառէդ էւե՛լ են, — կը կատակէր ամուսինը:

Առատ անձրեւէ մը ետք, նորատունկ ծառերը բոլոր ծաղկեցան, բայց իրենց զորդեգրածո՝ այդ երկուքը սաղարթներով նուազ հարուստ եղան ու տարուէ տարի փոխանակ միւսներուն նման ունճանալու՝ տխրող մնացին:

— Էդ դէմի շէնքի լակոսները հանդիսա չեն ի տաք, շտուին, էդկէ է, — ըսաւ ծերունին՝ ակներեւ վրդովումով:

Անցնող տարիներուն հետ ֆիզիքայէն ինկան մանուածո իրենք, ու իրենց հետ՝ այդ երկու ծառերը տխուր երեւոյթ ստացան:

Պիտի չորնան, մաածեց կինը սրտի սեղմումով ու, իրապէս, յաջորդ զարնան այլեւս չծաղկեցան անոնք:

Բ. ԱՐՓԻՆԷ


(Հատուած)

## Ժ. ԱԹԹԱՐԵԱՆԻ «ԿԵԱՆՔԸ ԳԵՂԵՑԻԿ Է» ՀԱՏՈՐԸ

«Կեանքը գեղեցիկ է» խորագրեալ պատմութեան հատորը առաջին գիրքն է արձակագիր Ժիրայր Աթթարեանի: 1981ի ընթացքին Համազգայինի «Վահէ Սէթեան» տպարանէն լոյս տեսած վերոյիշեալ գործը, 133 էջերու տարածքին, կը խմբէ 9 պատմութեան, — «Այս քանկազին... քշմամբ», «Աստուած քարեկամ չուցի», «Արդարութիւն կ'ուզեմ», «Խոտ», «Պոյ փրէնտ», «Արձակուրդի պատմութիւն», «Ժպտացող մարդը», «Կեանքը գեղեցիկ է», «Եւր Տարուայ պատմութիւն»:

Եթէ պահ մը զանց ընենք Աթթարեանի պատանի հերոսները (Իսո, Փասթաւ, Փիէոս, Անի), որոնց մանկական թափուցիկ եւ յուզումնալից ուշադրանքը դոյն եւ դիմ կը ստանան «Աստուած քարեկամ չուցի», «Արդարութիւն կ'ուզեմ» եւ «Խոտ» պատմութեան մէջ, կրեանք անվարան ըսել, որ արձակագրին հերոսները երիտասարդ տիպարներ են, կամ աւելի ճիշդ բնութագրումով մը՝ մանուկ-երիտասարդներ:

Փաստօրէն, «Կեանքը գեղեցիկ է» հատորին նոյնիսկ ամենակարծր հերոսը, այս կամ այն համեմատութեամբ, իր հոգիին մէջ վառ կը պահէ մանուկ մը: Բարի, զարմացնող, տեսլահար, խոհալսող պաշտ, սրամիտ եւ առհասարակ ըմբոստ ոյս հերոսներուն համար, իրենց դոյնութեան իմաստը կը կայանայ կեանքի ընթացքը թունաւորող երեւոյթներուն եւ իրենց պարտադրուած կացութիւններուն դէմ ծառանալու մարտաւարութիւնը: Կարծես թէ անոնք կ'ապրին ու կը պայքարին իրենցմէ խլուած մանուկը



մաս առ մաս ձեռք բերելու նպատակով՝ իրենց հետ այս պայքարի օղակին մէջ առնելով նաեւ նոյնինքն հեղինակը:

Խորքին մէջ, իրենց ապրումներով ու տաղանայներով՝ անոնք կը գրաւեն արձակագիր Աթթարեանի ջգային ողջ դրութիւնն ու յուզաշխարհը: Աթթարեան կը դաշնակցի իր հերոսներուն հետ, կը մտանքանայ հոգեկան եղբայրութիւն մը հաստատելու աստիճան եւ կը դառնայ անոնց ազնիւ տաղանայներուն ու մարտնչութեան գրօշակիրը, անշուշտ, ստեղծագործական մակարդակի վրայ:

Այս ըսել չէ երբեք, որ ան բարոյութեան արձակագիր մըն է: Ընդհակառակն, Ժիրայր Աթթարեանի պատմութեանը ամբողջովին հեռու են արուեստին դառ-



տիրակալական դերեր եւ կոչում վերադրող դրաւէտներու մօտեցումներէն, հակառակ իրենց լուռ թելադրանքներուն եւ ընթերցողը համակողջ կերպ ու լաւատես շունչին:

Աթթարեանի պատմութենէն մէջ, կրկնենք, հեղինակի մը եւ իր հերոսներուն մէջեւ հեռաւորութիւն զբոյժիւն չունի, զէպօքերն ու տիպարները հեռուէն դիտող եւ ըստ այնմ զերգորշուող աչք մը չէ իր տիպարներուն հետ հոգեպէս հղթարացած արձակազիրը, բայց միեւնոյն ատեն պէտք է հաստատել, որ այս ներքին միութիւնը հիմնովին հեռու կը մնայ տիպարներուն նկարագիրն ու հոգեբանութիւնը ազատող մտերմութենէն կամ հեղինակային միջամտութիւններէն: Աւելի՛ն. Աթթարեանի արձակին գլխաւոր յաւանդներէն մէկը հանդիսացող այս անմիջականութիւնը կը դառնայ հերոսներուն հոգեբանութիւնն ու խառնուածքային գիծերը ցցուն դարձնող լինակից, այսինքն՝ տոնոց ամբողջական դիմագործի յատկացման մասնակցող հիմնական ազդակ մը:

Այս պարագան իր ամէնէն պերճաբան հասկնալիքներն կը հասնի մանաւանդ՝ երբ Աթթարեանի մանուկ թէ երիտասարդ հերոսները կը բռնուին կեանքի տխուր կացութիւններու եւ հոգեկան ճնշիչ վիճակներու կեկուող ուռկանին մէջ: Յաւարը կը սկսի թանձրանալ տիպարներու նահանջող հոգիներուն, պահ մը կը կարծես, որ անոնք արդէն հաշտուած են իրենց պարտադրուած կացութեան հետ, բայց, յանկարծ, «կը տեսնե՞ս եկմա, հասկցա՞ր եկմա: Զէի՞ր ըսած բնգի, որ Աստուած քարեկալ չունի», կը պոսթկայ պատանի Փասքալը՝ Աստուծոյ եւ կեանքը տնօրինող ուժերուն դէմ պայթած ըմբոստութեան մը վերածելով իր անմեղ պատրանքաւորութիւնը: Մինչ արձակազրին հասուն հերոսները, այլ պատմութեան շրջան, ինչպէս՝ «Պոյ Գրեմա», Այս թանկագին... Բշնամիմ» եւ հոգեբանական նմանօրինակ հիւսուածք ունեցող ուրիշ ստեղծումներու մէջ, կը դատապարտուին հետզհետէ համակերպող արարածներ

դառնալու ճակատագրին, որովհետեւ անոնք երբեք չեն անդադառնար, որ «ժամանակը իրենց քարերարը չէ, իրենց հաշտումը չ'աշխատիր»:

Այսպիսի կացութիւններու դիմաց՝ Աթթարեան կը տարուի ստեղծումի խաղէն, կը դիտորդուի իր խիստ ստեղծած հերոսներուն դէմ, ինչ որ իր պատմութեան մէջ կը հարստացնէ ջիզով դրուած լեզուի մը դառն ու վարակիչ վերնութեամբ, յուզականութեամբ եւ բնական խորհրդածութիւններով:

Եւ «Ինչո՞ւ արդեօք գիտցած չըլլալիմ, որ ժամանակը երբեք ետին չի նայիր աւ, մա՛նաւանդ՝ անգամ մը որ քաւայեցաւ, անգամ մը որ յարգեցաւ խղիւձեր կեանքէն, աշխու երբեք ձեռք չի ծնկար» հաստատելէ ետք, ան առաւել կը խորանայ կեանքին պարտադրած դժուր կացութեան մէջ, ինք կը դառնայ աներեւոյթ գլխաւոր հերոսը պատմութեան եւ կը խորհրդածէ դառնօրէն. «Էլա է, աւրեմ, որ գիտակցիմ ամէնէն, որ գիտակցիմ նաեւ ես, որ կռուիլ պէտք է, պայքարիլ պէտք է ժամանակ ըստած այդ վատութեան դէմ»:

«... Պէ՛տք է բռնել, պէ՛տք է բռնել անգամ մը ժամանակ կոչուած այդ ամենակուր երեւիմ կոկորդիս, պէ՛տք է բռնել, ցնցել զինք, քօքաւել աւտով մը: Պէ՛տք է բռնել, անցարժեքն զինք դէմք, անդամաւատ բնիլ զինք իր ժամերէն, վայրկեաններէն ու րօպէմներէն: Պէ՛տք է բռնել ու գամել տնոր»:

«Գամել զինք, ա՛յնպէս մը գամել, որ այլեւս չկարենայ աւազիմ պէտքարշուել, որ այլեւս չկարենայ դէմը եկած ամէն ինչ կռիւլստել, անցնիլ անհոգ, անտարբեր...» (էջ 15):

Այս թանկագին... Բշնամիմ» պատմութեան մէջ վերի տողերը եթէ ամբողջական ջերմութեամբ մը կը վարակեն պատմութեան շրջան, որ վերջին բառին ընթերցումէն ետք կը շարունակէ արձագանգել տիպարին հետ քայլ պահած ընթերցողին մտքին մէջ, այլ պատմութեան մէջ կը փակուին յուզական դանդաղ

շիջումով կամ անակնկալ ձևով:

Պատմութեամբ անսպասելի վախճանով փակելու լատգոյն նմոյշներն են հատորին յաջողագոյն երկու ստեղծումները, — «Պօլ ֆրէնտ» եւ «Կեանքը գեղեցիկ է»: Հոս, Աթթարեան ի յայտ կը բերէ գրութիւնը ակնկալութեամբ իր վախճանէն փրկուող գրագէտի հմտութիւն, որուն շնորհիւ, ընթացիկ եւ անշահեկան աւարտի մը փոխարէն՝ պատմութեամբ իր լրումին կը հասնի անսպասելի պայթումին ուժակաւնութեամբ:

Աւստասարակ զուարթաբուն դառնութեամբ մը գրուած Աթթարեանի պատմութեամբ լեզուները, այսպէսով, կը հասնին աւարտուն վախճանի մը՝ միաժամանակ իրենց հետ բերելով գրութիւններու աշխոյժ ընթացքէն բխած հարազատ թելադրականութիւնը:

Հիշատակ, սրամիտ ու ջերմ է ժիրայր Աթթարեանի լեզուն: Ինչպէս ըսինք՝ ան դաշնակիցն է իր իսկ ստեղծած տիպարներուն, որոնք ներքին կենսունակութիւն մը կը մատենեն, նոյնիսկ երբ կը զատապարտուին իրենց էութիւնը ճշդօրէն հոգեմիտակներու: Պարզ եւ ազնիւ պարտաւորներ են անոնք: Գրեթէ բոլորն ալ կ'առաջնորդուին մէկ եւ սրբազան ցանկութենէ մը, այսինքն՝ բոնել ժամացոյց

կոչուած զգեստին դարձիքնին «անիծեալ ընակիչներ»ուն կոկորդէն, ժամանակին կոկորդէն, թօթուկ զինք անգամ մը, ու՛նպէս մը գամել — ինչպէս պիտի գըրէր Աթթարեան — որ «մեր ունեցած կամ ունենալիք բոլոր բաներուն ամէնէն խաբուսիկը, ամէնէն դաւադիրը եւ ամէնէն քանկարժէքը վերջ տայ իր «ստորին քահանայութեան» եւ «այլեւ չկարենայ գէտնել կեանքը անոր հետ» անցնել անհագ, անտարբեր»՝ իր ետին ձգելով «նայաւորապէս անարակիւի լուծիմ տակ ինկած ու անոնց անարգ, անասնային վերաբերումէն մահացու վերքեր ըստացած» պարտեալներ կամ «մեծայաջող, մեծատաղանդ փերեզակներ»:

Միջավայրն ու շրջապատը քանի մը նախադասութիւններով պատկերող, էականը ընդհանուրէն անջատող եւ պատմութեամբ լեզուն շոտող կշռոյթը կենդանի ու զուարթաբուն երկաթասութիւններով առաւել լարուած պահող արձակագիր մըն է ժիրայր Աթթարեան, որուն «Այս քանկագիր... քշնամիմ», «Աստուած քարեմարդը» եւ «Կեանքը գեղեցիկ է» անուն կամ չունի», «Պօլ ֆրէնտ», «Ժողովարդ ստեղծումներուն հետ հաղորդուելէ ետք, հատորը կը փակենք ջերմ տպաւորութեամբ մը:

Ս. ԿԻՐԱՅՈՍԵԱՆ

## Ժ. ԱՓԹԱՐԵԱՆ

## Նոր տարուայ պատմութիւնը

Բայց տիկին Անժէլ այդ բաները հասկնալէ հետո՛ւ է, այդ բաները չի գիտեր: Ի՛ր բաները ունի ան, ի՛ր հարցերով տարուած է: Հարցեր, սակայն, որոնք անմիա հետ կապ ունենայ կը թուին:

— Հաւատացէ՛ք, Աստուած զրկեց ձեզ, — կը յամառի ըսել ան, — որքան վախճայ, որ չէիք դար այս գիշեր...

— Բայց տիկին, խնդրեմ...

Ջզայնութիւնս կը զսպեմ: Մա՛նսականդ՝ որ Մօրիսին դէմ ինքզինքս յանցաւոր կը դգամ: Մօրիսը, որ քաշած բերած եմ հետս եւ որ հիմա աւելի տրտում, աւելի շուար դէմս կը տեսնեմ:

Եւ մինչդեռ ես, զիս աշտեղ սուշնորդսդ աստուածները ստատնայէն ունիլի դէշ կը սկսիմ տեսնել, մինչ ես իրենց հետ կծու լիդի խօսակցութեան բռնուած եմ:

— Աստուած զրկեց ձեզ, — կը կրկնէ միշտ տիկին Անժէլ, — գիտէ՛ք, այս օրը պղտիկներու համար է, օրերէ ի վեր Կաղանդ Պապա կը սպասեն...: Այսօր քրոջս տղան պիտի դար մեզի, վերջին պահուն հիւանդացիք է...: Խեղճ պղտիկներս, գիտնայիք միայն ինչպէ՛ս, ինչպէ՛ս կը սպասեն: Որքա՛ն տեսնէ ի վեր այսօրուան կը սպասեն...

Եւ ձայնին տալով սրտառուշ շեշտ մը.

— Կը խնդրեմ, պարոն Պերճ, — կ'աւելցնէ տիկին Անժէլ, — դուք եւ զէք այս գիշեր պղտիկներու Կաղանդ Պապան, դուք հաղուեցէ՛ք այս գիշեր, կը խնդրեմ, կը խնդրեմ...: Հաղուեանիւր ներսը պատրաստ են...

Այսպէս ուրեմն, Կաղանդ Պապա: Անշուշտ, հապա՞, Կաղանդի օր, Կաղանդ Պապա: Ինչպէ՞ս չէի անդրադարձած, ինչպէ՞ս չէի կռահած...

Բայց ի՞նչ համարձակութիւն...: Ե՞ս, Կաղանդ Պապա՞...

— Շատ կը ցուիմ, տիկին, — կ'ըսեմ բրտութեամբ, — այդ բանը չ'ըլլար...: Ես չեմ ըլլար Կաղանդ Պապա, չեմ ըլլար...

— Բայց պարոն Պերճ, պղտիկներս, — կը թախանձէ տիկինը, — նա՛մակ զրած էին իրեն, ինքն ալ խոստացած էր դալ. կը հասկնա՞ք...

Եւ աւելի սրտակեղեք ձայնով մը.

— Պղտիկներուն մեղք է, պարոն Պերճ, — կը շարունակէ ան, — հաւատացէ՛ք, մեղք կ'ըլլայ...

Ես կը մնամ անդրդուելի: Վստահ եմ, որ պղտիկներուն մեղք կ'ըլլայ միայն այն ատեն, երբ ես Կաղանդ Պապա ըլլամ, երբ ինծի պէս Կաղանդ Պապա ունենան: Նուազագոյն հաւատք մը, պղտիկ համարում մը նոյնիսկ եւ թէ ունին տակաւին այդ ողորմելի մարդուկին հանգէպ, ա՛յդ ալ յաւիտեանս կը կորսուի, ա՛յդ ալ կը վախնամ, որ յաւիտեանս կորոնցնեն:

Ես կը մերժեմ բացարձակ կերպով: Ինձմով չ'ըլլար ո՛չ Կաղանդ, ոչ ալ Կաղանդ Պապա:

Տիկին Անժէլ յուսահատիլ չի գիտեր սակայն: Համոզուելէ ետք, որ ուշիւս ինձմէ յոյս չկայ, ճարտար ռազմավարութեամբ մը, իր ամբողջ հրեմանին դէպի Մօրիսը կ'ուղղէ: Ազաչանքի, Թախանձանքի նոր ու հուժկու դրոշմըն է, որ այս անգամ Մօրիսին վրայ կը խուժէ:

...Քոստոմները... Սպասուժը... Պատիկները... Պատիկները...

Անկասկած, որ այս բոլորին գիմարելը դիւրին չէ: Մանաւանդ Մօրիսին համար:

Քեզը չկրցաւ մերժել. նայեցաւ ինծի, նայեցաւ տիկնոջ, կարծես օգնութիւն հայցէր: Եւ, ի վերջոյ, կամակորոյս եւ կամազուրկ օքսիմոքի մը նման, գլուխը շարժեց ի նշան հաւանութեան:

Իր որսին տիրացած է՞ք Կաղանդի մը պէս, տիկին Անժէլ անապարեց մեզ երկուքս իր ողջ չրել: Մտանք մեկուսի սենեակի մը մէջ, ուր եւ մեր ընկերը, կուսակցական ինկած անմեղ զոհի մը նման՝ Կաղանդ Պապա հագցուցինք:

Իրենք իրեն ճերմակ, երկայն մօրուք մը, հագցուցինք մուսակներ, կարմիր հագուստ ու գլուխ: Բայց այս ամբողջ ծպտումին տակ մնաց մեր չորս Մօրիսը, կորաքամակ, բնկնուած...

Եւ, վերջապէս, փողով ու թմբուկով, ազմուկով ու իրարանցումով, չտպալտներ տանելու պէս, երգելով ու պարելով՝ խումբ մը մարդիկ մեզ առաջնորդեցին սրահ:

Հսկայ ծառ մը կար, անկիւնը լարուած: Յայտնի էր, որ տիկին Անժէլ ոչ մէկ բան խնայած էր, ոչինչ մոռցած էր՝ իր պատիկներուն Կաղանդի ծառը փայլուն, աւազարու, շլացուցիչ բնելու համար:

Ամբոխ մը մարդ կայ սրահին մէջ հաւաքուած, անծանօթ, անհաղորդ ամբոխ մը: Ծառին տակը կծկուած են չորս փոքրիկներ ու սարսափահար կը գիտեն այս ներս խուժող արտասովոր ու արտառոց արարածը:

Եւ անաւասիկ, որ Կաղանդ Պապան քաշեցին մէջտեղ: Քաշեցին, քաշեցին, օտիպեցին, որ պարէ...

— Ելէք, տղա՛ք, ելէք, պատիկներ, երգեցէք «Կաղանդ Պապա», — կր պնդէին ամէն կողմէ:

— Այս ի՞նչ տեսակ Կաղանդ Պապա է, — պոռաց մէկը ներկաներէն, — ի՞նչ անճարակ Կաղանդ Պապա...

Եւ իրապէս, որքա՛ն ձախորդ, որքա՛ն ձախաւեր Կաղանդ Պապա մը դարձաւ յանկարծ Մօրիս: Որքա՛ն տիրեցաւ, որքա՛ն ռմբեցաւ, երբ պատիկները իր առջեւը բերուեցան... Կարծես յանկարծ պարպուեցաւ ինքնիրմէ: Կարծես յանկարծ բացակայ դարձաւ:

— Նուէրները, նուէրները, — սկսան կրկնել չորս կողմէն, կարծես մամ առաջ ազատուիլ ուզէին այս անբաղձալի մարդէն:

Ինք անտարբեր շուրջի իրարանցումին, փոքրիկներուն կրտսերը իր մօտը պահեց: Նստեցուց զայն ծուռկին վրայ ու գործովանքով սկսաւ պատիկին գլուխը շոյել...

Եւ երբ նուէրը կը յանձնէր անոր՝

— Մամա՛, մամա՛, — պոռաց յանկարծ պատիկը, — մամա՛, եկուր տես, մեր Կաղանդ Պապան կու լայ...

(Հատուած)

ժ. ԱԹԹԱՐԵԱՆ

## ԼՈՒՍԻԿ ՄԵԼԻՔԵԱՆԻ «ԹԵՎՐԱՆ»Ը

Անցեալ տարի Միացեալ Նահանգներու մէջ «Անի» հրատարակատան կողմէ լոյս բնծայուեցաւ իրանահայ գրագիտուհի՝ Լուսիկ Մելիքեանի «Թեւրան» խորագրով գործը, որ կը բովանդակէ մամուլի էջերուն նրումած հեղինակին արձակ թէլափածոյ գրութիւնները:

Գլխի ին արձակ բաժինը կը ներկայանայ հետեւեալ տասը պատմութիւններէն եւ որոտկերներէն. — «Սիրոյ ցումբան էր իմ քննածը», «Սուտը», «Առաջին յոյս», «Գնաց-փու», «Տեքնաքափ», «Մի նոպայ», «Ինքն ինքն», «Բեմ աւ կուլիս», «Չորս սնիր», Էւ «Օրիշալ Աննա»:

Յիշեալ գրութիւնները կը բերեն յուշագրական մէկ վիպագրութիւնը իրանահայ կիտիւնի քաղաքած տնտեսական թէլ հասարական փորձառութեամբ մը քնորոշ այլազան պահերու, զգացերու, յոյսերու եւ տոտորանութեան վիճակներու: Անվերադարձ տէլն մէկ յուշ կեանքի վերակոչելու այս իրողութիւնը կը դառնայ առաւել բացայայտ հեղինակին իսկ հարցադրած հետեւեալ խորհրդածութեամբ. «Յուշեր... յուշեր... Ի՞նչ եմ մեր օրերը, եթէ ոչ յիշատակների շարաններ» (էջ 76):

Այդ յիշատակներու զգացական հուշեր խոհական որոշ երանդներով դրսեւորելու իր առաջադրանքին մէջ ան կը վերկայակոչէ ամէնէն անշան պատահարն իսկ անհեթեթ հնարամտութեամբ, արտայայտելով իր մանրապատում «յայզներ»ը, առանց երբեք հետեւելու կառուցալին կանխորոշ ծրարիւրի մը, որուն գործուն թելադրականութեամբ գործը պիտի չյայտնարելէր այլապէս ոգեկոչման պահերու լոյս եւ անկապակից շարաններ:

Աւելի՛ն, ո՛չ միայն յղացքի, այլեւ՝ յորինման եղանակի պծով իսկ, տուեալ նիւթ մը համապատասխան որակով, հրնարքով եւ ինքնատպութեամբ պատկերացնելու հիմնական տուեալները կը պակսին հեղինակին:

Այս պատճառաւ, իր պատմութեան



լը, որքան աւ փորձեն ընթերցողին գիտակցութեան յուշել կեանքէն բխած որոշ զգայնութիւններ, այսուհանդերձ, անոնք կը պարզեն խօսքի ջրատիչ տարածումով նկարագրապաշտ էջեր:

Օրինակ, Լուսիկ Մելիքեան, կեանքի իրականութիւնը սուտի եւ կեղծիքի վերայ հիմնուած ըլլալու ողբերգական վիճակը պատկերացնելու իր հիգին մէջ, պատական ընթացիկ հարցի մը շուրջ լըրագրային համառօտ տեղեկագիր մը կը փոխանցէ կարծէք («Սուտը»):

Մանկութեան քաղցրայոյզ պահերը, որոնք ապահովաբար պիտի նպաստաւորէին տնխառն յուզականութեան մը կեղրոնամիւզ յղացքով՝ հեղինակին գրչին տակ դարձած են մանկական նուազ շահական ապրումներու օրագրային հանդիսութիւն մը («Առաջին յոյսեր»):

Լուսիկ Մելիքեանի կերպարած հերոսները չեն ներկայանար իւրայատուկ

նկարագրով: Հեղինակն է, որ առաւելաբար մուտք կը դործէ վերյուշ առ վերյուշ, մինչեւ իսկ տեղ-տեղ չափազանցութեան հասնող իր միջամտութեամբ: Իր հերոսները կը մնան լոկ կրաւորական ներկայութիւն մը, փոխանակ խորհրդանշելով Արդարութեան ձայնին, խաթարուած բարքերու դիմաց՝ բարոյական վեհ մարտերը քննելու եւ պատերազմի պատճառաւ արտագաղթի փորձութեան մատնուած ծննդավայրի կարօտին:

Լուսիկ Մելիքեան կը նկարագրէ աւելի, քան կը կերպարէ, կը տեղեկագորէ աւելի, քան կը թելադրէ եւ կը վերջիչէ աւելի, քան ճշմարտութեան մը կը վերածէ կորուսեալ ամէն մէկ ապրում:

Այս պատճառաւ, «Թեհրան»-ի հերոսները իրենց տարածք կերպարով կ'ապրին տնտեսական ճակատագիրը քրիթ-դի շորութեամբ հասնող միտք կազմուած-քովս այն օրիորդ իմաստին, որուն «ծրնողները նրան գնել էին որսիլ քերականութեան» ուր նա գրուած էր որպէս կարտունի մարդասիրտներ եւ որը ծառայում է յաճախորդների զգեստները փորձելու ետևար» («Առաջին յոյզեր», էջ 51):

Այսպէս, հասարակ մէջ յայտնաբերւող ամէն մէկ հերոս հարազատ վերաբերութիւնն է կարծէք վերոյիշեալ մարդասիրտներին, որ կը ծառայէ հեղինակին յիշատակներուն մաշուած «զգեստները» փորձելու համար:

«Թեհրան» դործի չափածոյ գրութիւններու բաժինը կ'ընդգրկէ հետեւեալ տասը բանաստեղծութիւնները: «Վախ», «Գլխացու», «Նուէր բալոր երեխաներին», «Մեծք, դու եւ ես», «Մի փոքրիկ աղջիկ», «Հայ երգչին», «Ամմրեւտութեան», «Եսման ընկերացի», «Իմ քննիչ», «Եսման ընկերացի» եւ «Մեր գաղութներին»:

Պարագայական առիթներով գրուած յիշեալ գրութիւններուն առանձնապէս ժողովրդները եթէ կը դրսևորեն հապաքաւորապէս զգացում մը եւ եթէ կը բխին տոնք երեխաներու հանդէպ Լուսիկ Մելիքեանի տաճար մայրագործ խանդավառութեամբ, կամ գրչակիցներուն նկատմամբ իր մարդկայնական ապրումներէն, գինով ընկերով մը հանդէպ ցուցաբերած իր ցուէն եւ կամ քսաներորդ դարու դըլխացու պատճառող մեքենայացած կեանքէն, այսուհանդերձ, տաղաչափեալ այդ զեղումները չեն բարձրացած այն որակին, ուր խորքն ու ձեւը գիրար կ'ամբողջացնեն ոգիի եւ շունչի համապատասխան ներդաշնակութեամբ:

Հակառակ համեմատաբար երկարամեայ գրական շրջանէ մը ստացած իր լայն փորձառութեան, Լուսիկ յայտնապէս չէ բացուած ներկայ դարու գրական պահանջներուն եւ քայլ չէ պահած իմացական նոր ըմբռնումներու եւ շարժումներու հետ: Այս իրողութիւնը կը հաստատուի «Իմ քննիչ» և «Եսման ընկերացի» քաղուած հետեւեալ մէջբերումով:—

«Իմ քննիչ» լաւ է լինել  
Մշուշի հետ մէջ,  
Ծառերի հետ բաց  
Ու... քայլելու միջոց  
Առանց մպտակ  
Այս արահետով...» (էջ 241):

Լուսիկ Մելիքեանի «Թեհրան» հատորը գրական ստեղծագործութիւն մը ըլլալէ աւելի՝ կը մնայ անսկզբ լեզուով գրուած յուշագրական մէկ պատկերացումը հեղինակին մանկական ապրումներուն, մարդկային տնչերուն եւ ընկերային անարգարութեանց դէմ իր ընդդիմութիւնը:

Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Լ. Մ Ե Լ Ի Փ Ե Ա Ն

առաջին յոյզեր

Ամիսներ յետոյ Ժիրէկն ինձ գրեց, որ Լալիկը ոչ մի կերպ միտքաւել չէր կարողացել եւ իրեն խաբուած էր դառնում:

Խենթ աղջիկ, միթէ՞ դերադասելի չէր, որ դեռ չըմբռնեմ իր սէրը, ես հեռանում էի իրենից՝ ամբողջ մէկ կեանք չմոռանալու եւ իրեն յաւէտ սիրելու համար:

Նրա յուսանկարը կախուած էր իմ սենեակում եւ այնուհետ, շնայած բազմաթիւ կանայք դերակատար պիտի լինէին իմ կեանքում, սակայն ինձ միմեկուան էր միշտ յիշել իմ առաջին յոյզերի սեւ աղջկան: Յիշել ու սիրել...

Միթէ աւելի խոհեմ չէր, որ ես գնացել էի առանց մերջին միաս քարեի:

— Վեթէ ինձ սիրէր, չէր գնայ:

Գրուած էին ընկերներու այն հեւքա աղջկայ խօսքերը եւ ես յիշում էի մեր մտնկութեան պահը:

— Հինգու՞ ես մտածում մեծ-մեծ գործերի մասին: Այնքան ուրիշներ կան այդ քաներն անելու համար...: Իս ու դու ծնունդ ենք ստանալովս մի փոքրիկ տնակ ունենալու, յետոյ մի օրորոց ու վարդազոյն...:

Եւ նա համոզուած էր, որ ես «Այդ ուրիշներից» մէկը լինել չէի կարող, որովհետեւ ինքն այդպէս էր երազում:

Վե՞ս կ'ունենամ մի փոքրիկ տնակ...:

Լալիկը մնում էր իմ ներաշխարհում, եւ այդ աստուածացումն այնքան էր պանծացնում սեւ աղջկան, որ նա դառնում էր անհասանելի, յաւերժ ու անբջիռ, ճիշդ իմ մամայի նման:

Հեռուից եկող նրա տրտունջներն ամոքում էին ինձ եւ ես դարձնում էի իր խակ տրամաբանութեան վրայ: Նա ինձ բնաւ չէր գրում եւ եթէ հանդիպէր, գուցէ չխօսէր իսկ: Ինձ չէր հետաքրքրում իր բնաւորութիւնը, բաւ էր, որ իմ զարոցի ճամբի փոքրիկ Լալիկը գրաւել էր իր արժանի տեղը իմ խոհերի տետրում:

Բաւ է, որ նա կախարդել էր ինձ ու իր ներկայութեամբ հաշիւ էր տալիս եւ կարողանում էր յիշողութեան մէջ սեպել վերջույններ:

Չեմ խօսում պայմանական սէրերի մասին, որոնց մէջ ուղեղն է աւելի աշխատում, քան զգացումները: Նման առեւտրական մտքեր չկային իմ առաջին յոյզերում եւ այդ տարի աւելնով աշխատում էի դասերիս վրայ:

Քննութիւնների ընթացքում փոխադասութեան քննիչը «Ո՛ւր է Աստուան» հարցն էր տուել մեզ:

Ես նստած էի տասնեակ ուսանողների մէջ, ընդարձակ սրահի դեղին աթոռի վրայ, առջեւս դրուած էր Ռուսոյի կապտագոյն քարէ արձանը եւ չուրջիս ուսանողները գիտեմք մտածում էին պատասխանի մասին: Փարիզ...

Ոչ մի ծպուտ չէր յաւում. միայն երբեմն մէկը թուղթ էր պատուած կամ միւսի գրիչն էր վայր ընկնում: Էլ ուրիշ ոչինչ:

Պատահաններից դուրս ելելուց էին մայիսեան առողջ տներէներ, ա-

բոնք ծառերին թառած՝ երբեմն խոսվում էին ու քամու հոսանքի հետ օրորում կամակորորէն։

«Ի՞նչ է Աստծոյ դադափարը»։ Հարցը ցցուել էր թղթիս անբռնկեան վրայ։ Ժամը պիտի լրանար եւ դեռ ես ոչ մի բառ չէի գրել։

Տարբեր գիտութիւններից անպիւր արած շատ մտքեր կային իմ մէջ, բայց գիտէի, որ առջ ելանուի բոլոր միւսներն էլ նոյն կրկնուած դարձուածքներն էին գրում։

Յիշում էի տատկիկս խօսքերը եւ ծիծաղելու ցանկութիւն ունեցայ։ Քննութեան այդ սրահում նստած, որտեղ պիտի որոշուէր ամբողջ մէկ տարւոյ աշխատանքիս արդիւնքը՝ ես տեսայ նորից իմ բոլոր փառքիմ հայեացքներին շարանը։

Ես յիշեցի Ժիրիկի դմելին, որը վերադարձնելուց յետոյ անշափ իմ հողին թեթեւութիւն էր զգացել։ Փնտռեցի դադափիքը իմ անհուն սիրոյ՝ այն մեռած մայրիկիս համար... Չէ՞ որ նա միշտ բարի էր եղել. ահա պատահաւ, որ ես ընաւ չէի հիասթափուում իրեն երազելուց։

Յետոյ յիշեցի շոր աղջկան։

Թերեւս նա այնքան էլ ատեւ չէր, բայց իր խօսքերի, համբոյրների ու շարժումների մէջ կար կեղծութեան կնիքը, գոնէ ինձ համար, եւ նա միւսում էր անհամակերէ ու տղեղ, շնայած, որ իր գէմքը բաւական համաշափ գծեր ունէր։

Ես վերադարձնեի այն հմայեցող գիշերը, երբ Լալիկին գրկած՝ աղբաւում էի շուտել, յանձնուել ինձ՝ երբ իր համակ էութիւնն այդ էր բղաւում, երբ սիրան ինձ էր նուիրել իր բոլոր թաւանջները...

Այդ վայրկեանը վեհ էր, եւ մաքուր, եւ գեղեցիկ։ Երբ Լալիկը կըրկեց՝

— Ո՛ւ, ո՛ւ...

Ես զգում էի, որ Աստուած հեռանում էր մեր մօտից եւ սեւ աղջիկը ստում էր։

Նայեցի թերթին եւ մի շարք փառաբեր գրելուց յետոյ նշածս պատասխանն ընդգծեցի։

— «Աստուած կամ գեղեցկութիւն հոմանիշներ չեն»։

Իմ առաջին յոյգերը օգնել էին ինձ շահելու համար այդ տարրուայ համալսարանի մրցանակը։

Յանձնեցի թուղթս ու երբ դուրս էի գալիս սրահից, զգացի, որ այդտեղ ահա, մինչեւ այդ ժամը ես ապրելու էի իմ ապրումների առաջին շրջանը։

Առաջին յոյգերս լրացել էին եւ նրանց յաջորդող բոլոր հեւքերը պիտի կրկնութիւններ լինէին այնուս։

Իջայ համալսարանի բակը։

Այնտեղ ուսանողները հոլովում էին Սարթըր, Գէօթէ, Ռաբլէ եւ այլ անունները, որոնցից ոչ ո՛րէն էլ կար իմ քննութեան թղթի վրայ, որոնցից ոչ մէկի անունը կարիք չէի ունեցել յիշելու...

Գրել էի միայն մի կարճ նախադասութիւն եւ ինձ ձեռքադատել բոլոր աշխարհահռչակ մասնագէտներից։

Մօրս ընաւ շտեմայ։

Նա մահացել էր, ապահարզանից յետոյ...

Իրեն վեր տնից դուրս էին արել...

(Հատում)

ԼՈՒՍԻԿ



## Ս. ՊԱՐՍՈՒՄԵԱՆ-ՏԱՏՈՅԵԱՆ

### ԳՈՑԱԲԱՆԱԿԱՆ ՏԱԳՆԱԳԸ ԿԱՄ ՀԱՅԿԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԸ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ ԵԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Լիբանանահայ նկարիչներու վաստակը տեղական գեղարուեստական ճանապարհով եւ առհասարակ մամուլին կողմէ դիտուած է իբրեւ մեկուսի երեւոյթ, կամ դուցէ՜ ուղղութիւն, որ յստակ կերպով կը զատորոշուի լիբանանեան նկարչութեան ընդհանուր հիւստածէն: Նկարիչներու գործերուն մէջ ցուցարարուած իւրայատկութիւնները, ըստ տեղացի ճանապարհի մը, այնպիսի տարրեր են, որոնք յարատեւօրէն պատճառած են միեւնոյն «սխալները» բոլորին ալ մօտ:

Իրաւացիօրէն ընդգծուած ողբերգականութիւնը, ընդհանուր փառք-քիզմը նկատուած է ազգային նկարագրին բնորոշիչ գոյնը: Նոյն շրջանակին մէջ բաղադրուած է նաեւ նկարիչներուն արհեստագիտական-թեքնիք գերադասութիւնը, այսինքն՝ իբրեւ ազգային յատկանիշ: Նշուած է նաեւ, որ իր պատկանած գաղութին նման, լիբանանահայ նկարչութիւնը կը կրէ «սոյաւ-խարհեան» բնոյթ:

Պարզ է, որ այս կարծիքներուն ընդլայնումը կամ արժեւորումը չէ մեր մտահոգութիւնը: Անոնց թւումին գլխաւոր նպատակը ընթերցողին հայթայթել է ցարդ կատարուած հազուադէպ ճանապարհեանց ամէնէն կարեւոր դիմերը:

Լիբանանահայ նկարչութեան ճանարկումին եւ ընդհանրապէս որեւէ գեղագիտական յուրջ աշխատանքի պարագային, էականը պատմական եւ այլ ճեւղական առանձնալատկութիւնները մէկանդող ու բացաւորող գրնազանցական» սկզբունքներու վերբերումն է: Անհրաժեշտ է հասնիլ տուեալ ընկերութեան մարդուն (որ այս պարագային արուեստագէտն է), անոր մասնաւոր կացութեան եւ ատկէ ծագում առնող տաղանդներուն: Գեղարուեստական արտադրութիւնը ինքնին նպատակ մը չէ, ոչ ալ՝ ինքնաբաւ գոյութիւն մը, այլ՝ որոշ պայմաններու եւ իրադրութեանց ուղղակի արտայայտութիւնը, արդիւնքը:

Սակայն անցնելէ առաջ բուն նիւթին, պէտք է վերցնել այս նկարչութեան նուազ կարեւոր, բայց ուշագրաւ երեւոյթներէն մէկը՝ կրկնութիւններու եւ միօրինակութեանց բաղմութիւնը: Իւրաքանչիւր նկարիչի գործերուն մէջ համադրումի, գոյներու եւ նիւթերու այնքան նմանութիւններ կան, որ որեւէ ցուցանանդէսէ սակաւաթիւ պատասաններ միայն կրնան կառչիլ դիտողին յիշողութեան: Գեղարուեստական իր զարգացման իւրաքանչիւր հանդիւրանին մէջ, նկարիչը կարծէք օպտուած է տուեալ շրջանին յատուկ ներ-

չնչումին առթած զաղափարներուն բոլոր կարելի արտայայտական կերպերը: Գործերը, ուրեմն, յաճախ կը զանազանուին, ըստ իրենց պատկանած հանգրուանին ձեւական մասնայատկութեանց եւ ոչ թէ իւրաքանչիւրը ըստ իր ինքնուրոյն ուժին:

Հայերը Լիբանանի մէջ, ինչպէս Մփիւռքի շատ մը կեդրոններուն՝ մեծ մասամբ հղած են արհեստագործներ. նկարիչները, իրենց կարգին, ցուցարեւած են նոյն արհեստագիտական հակումները, որոնց անհրաժեշտօրէն կ'ընկերանան աշխատանքի բծախնդրութիւնը, յարատեւութիւնը եւ արտադրութեանց քանակին, թիւին տրուած կարեւորութիւնը:

Լիբանանահայ նկարիչներու մեծամասնութեան գործերը թեքնիք տեսակէտէ զրեթէ անխոցելի են: Ձեւական տարրերը կ'օգտագործուին առաւելագոյն ուժգնութեամբ: Սակայն արհեստագործական այս եռանդը, աշխատանքի անդուլ թափը մղած է բոլորը նոյնատեսակ նիւթերու մեծաքանակ, բայց բարձրորակ արտադրութեան: Նկարչութեան արհեստագիտական կողմը աստիճանաբար ստացած է առաջնակարգ տեղ, վերածուած գործօն, մը: Վրէժ տարրի Մանօթ գէմքերէն շատերուն գեղարուեստական կեանքը եղած է ոճային կատարելագործումի process, ոչ թէ՝ մարդու կացութեան եւ առհասարակ իրականութեան աւելի խոր հասկացողութիւնները խտացնելու աշխատանք:

Նկարիչներուն անհատապաշտ կեցութեանը արգելած են հաւաքական գործունէութեան, մտաւորական-գեղարուեստական շարժումներու կարելիութիւնը: Իւրաքանչիւրը պայքարած է ի խնդիր սեփական համարախն ստորապնդումին:

Կիրակոսեանի, Կիւմէրի, Կիւմի, Առատուրի, Թորոսեանի, Նորիկեանի եւ ուրիշներու գործերը ձեւականօրէն այնքան կատարելալ են, որ երբեմն մեքենականօրէն արտադրուած ըլլալու տպաւորութիւնը կը թողուն: Նոյնօրինակ գործերու թիւը սակայն, ու վերադարձը՝ հասարակութեան ցուցանողէսէ ցուցանողէս, շարունակ, զանոնք վերածած են «տեսնուած» բաներու: Պահպանողական աշխարհահայեացքի հրամայականին ենթակայ, նկարիչները զգուշացած են հիմնական նորութիւններու ձեռնարկելէ, առնուազն՝ ոճային դեմքի վրայ: Արհեստագիտական աւանդութեան հաւատարմի՝ հետու մնացած են անորոշ արդիւնքով արկածախնդրութիւններէ, որովհետեւ չեն ուզած վատնել կամ վտանգել մինչ այդ վաստակած համբաւը՝ իրենց պարկեշտ արհեստագործի «խնայողութիւն»:

Յամենայնդէպս, ինքնակրկնումն ու Քանակաւորութիւնը երեւոյթներ են, որոնք աւելի բան կը մատնանչեն իրանանահայ ընկերութեան տընտեսական պայմաններուն, քան թէ՝ այս նկարչութեան մասին:

Լիբանանահայ կերպարուեստը (գուցէ նաեւ՝ բոլոր արուեստները) ընտելագործ ու անոր իւրայատկութիւնները բացատրող «քննադանցական» սկզբունքը այս պարագի մարդուն մտածողութեան յատուկ գոյարանական (ontological) հանգոյցն է՝ այսինքն՝ ինքնութեան տալանալը, պատկանելիութեան շփոթը: Անիկա անհատին իմացական ու հոգեկան զտիւնմանն է, թէ ինչպիսի՞ իրականութեանց — անցեալ, ներկայ եւ ապագայ — առընչուած պէտք է տեսնէ ինքզինքը, ո՛ւր պէտք է նետէ իր անկայուն գոյութեան խորիւնները, կամ թէ՝ ինչո՞վ պէտք է պայմանաւորուին իր աշխարհահայեացքը, համապատասխան գործունէութիւնն ու, նոյն գծով՝ արուեստը:

Յրէց եւ թիջին սերունդին համար ազգային ողբերգութեան վիթխարի

ղանդուածը եղած է ծփուն կզղի մը ու ամբեր հայթայթած սփիւռքահայ դու-  
յութեան: Քարխոխները նետուած են այդ ամբերուն: Այս անցեալը միաժա-  
մանակ իր մէջ պարունակած է սպառնալիք եւ անհատական գոյութեան իմաս-  
տը: Այդ իրականութեան միայն ինքզինքը առնչած է հայ մարդը, անոր  
սկսականած, հոն դասած նաեւ իր աշխարհահայեացքին տարրերը, ընկերա-  
րանական սկզբունքները:

Եթէ այդ սերունդներուն համար ստեղծագործական աշխատանքը ե-  
ղած է ապրումնային արտայայտելու, անարդարութեան դէմ բողոքե-  
լու միջոց, ապա արուեստի ճամբով փորձ՝ մեղմողնելու գաղափարները  
նորագրիւտ դրականութիւններով, նոյնը չէ եղած պարագան զոնէ տասնամ-  
եակ մը ետք (զաղթերէն) այս երկիրներուն մէջ ծնած սերունդներուն հա-  
մար: Աստիճակաբար նետած են նախորդ սերունդին, ծնողներուն կողմէ ապ-  
րումնային բողոքութեան շօքին տակ: Իսկ քառասունականներէն ետք՝ աղէտը  
ստեղծանքաւոր վերածուած է ընդհանուր եւ վերացական, մարդկային տա-  
ռապանքի գերակայութեան գիտակցութեան մը: Միունդով եւ զաղագրին  
դաստիարակութեամբ, իւրութանչիւր անհատ փորձած է զարգացնել իր ան-  
հատականութիւնը այդ զործակցութեան ծիրէն ներս, ա՛յդ իրականութեան  
տեսողաշարին դիմաց: Ուրեմն, յաճախ հեղինակներու, կերպարուեստագէտ-  
ներու եւ ուրիշներու կեանքի փոխադրութիւնը ծագում առած է անցեալէ  
մը, եւ ուղղուած՝ դէպի անսահմանելի, իտէալական ապագայի մը:

Հիշանանահայ նկարիչներուն մօտ պատմողական-նկարագրական նիւ-  
թերու նախընտրութիւնը շփոթուած է «երազայտ» տրամագրութիւններու  
հետ: Սակայն այն «զգայերը», որոնց շուրջ հիւստած են նիւթերը, արտա-  
սովորական են, ենթակայական, երբեմն ալ առասպելական: Հիշանանահայ  
նկարչութիւնը արդարօրէն կարեւի է կոչել այլաշխարհեան, կամ՝ թերեւս,  
սքառելայ արուեստը: Հոն տեղի, միջոցի ստորոգութիւնը բացակայ է, իսկ  
ժամանակը ներքին ու յետագարձ գիտակցութիւն մըն է եւ ոչ թէ՛ իրերու  
յաջորդականութեան կապուած եւ նիւթին անհրաժեշտութեանց ենթակայ  
զոգացում մը, տարր մը: Պատահարներն ու կացութիւնները կառուցուած են  
նկարչական, ոչ-իրողական հեռանկարութիւններով: Նոյն պատմութիւններն  
են, որ կը կրկնուին տարբեր եւ յաւելալ մանրամասնութիւններով, որով-  
հետեւ չեն փոխուիր անոնց ներշնչումի աղբիւրները:

Ժամանակակից իրանահայ նկարիչները մեծամասնութեամբ ծը-  
նունդներն են 1925-ի 1945-ի միջեւ երկարող երկու տասնամեակին: Բոլորին  
այ մօտ, իրենց իսկ վկայութեամբ, եւ անշուշտ՝ գործերուն, ներկայ է պատ-  
կանելիութեան այս տապնապը, կամ սեփական ինքնութեան ու գոյութեան  
կապուած անյաղթահարելի անորոշութիւնը: Այս շփոթը վերածուած է ահա-  
ւոր մթնոլորտի մը, թուժի մը, որ իր ձգողականութիւնը կը հասցնէ մտա-  
ծումի եւ ստեղծագործութեան ամէնէն պայծառ պահներուն իսկ:

Գոյարանական այս տապնապը իր դրոշմը դրած է հայ նկարիչներու  
անհատականութեան եւ անշուշտ գործին վրայ ու անով ալ յատկանշուած է  
իրենց արուեստը: Ահա այս դրոշմը տեղացիներուն եւ մեր մօտ շփոթուած է  
հայկականութեան հետ:

Հիշանանահայ նկարիչներէն ամէնէն տարեցին՝ Գիւլի գործը մարմ-  
նաւորումն է յիշուած խնդիրներուն, զրեթէ ամէնէն ծայրայեղ, բայց հա-  
րազատ օրինակը: Գաղթէն վերապրած առաջին մանուկներէն՝ Գիւլ ինքզին-  
քը ճանչցած ու հասակ նետած է այս երկիրներուն մէջ, բայց մնացած է մեծ  
բացական անկէ, հիւանդութիւն եւ նիւթաշարժին անցողաբանութիւնը: 1918-ին ծը-

Նոս՝ երեխան ոչինչ կրնար բերի իրեն հետ, բացի անողոր յիշողութիւններէ, որոնցմէ ձերբազատուի դուցէ անկարելի էր: Սակայն այդ փորձառութիւնները հետագային շինանիւթը կազմած են իր անհատականութեան, շաղախ ունենալով՝ վիպասաշատակուն-վերացական ընդհանուր հասկացողութիւններ: Նիւթական, անմիջական իրականութիւնը մնացած է արտաքին, խորթ մարդ, խորշնի՝ իր քո որ տարբերով: Կիւ վի նահանջը, ընկերվումը դէպի անիրական այս գոյութեան շարժուն աւազները, յստակ հետեւանքն է իր սերունդին անկարողութեան կտր դժկամութեան, գտնելու նոր իրականութեան մը յարմարելու կարե իութիւնները, առանց երբեք խզուելու սեփական արմատներէն:

1926ին Երուսաղէմ ծնած Կիրակոսեանի պարագային, ազգային-ընկերային անկայուն գոյութիւնը ունեցած է այլ հետեւանքներ: Եղեռնը իրեն անցած է ոչ թէ իբրեւ ուղղակիօրէն ապրում աղէտ, այլ՝ իբրեւ անմիջական աւանդ: Կիրակոսեան գտնութիւնները փոխարինած է մարդկային սիրոյ քերթութեամբ, արտայայտուած՝ Կիսա-կրօնական խանդաղատանքով մը տառապող մարդկութեան հանդէպ տոհմասարակ: Այսպիսի մեկնակէտերէ զարգացած է Կիրակոսեանի հիւմանիզմը, որ հակառակ զպուրճ-համուռեան՝ իր շրջանին արձանագրուած յաջողութեան, հետագային մնաց վերացական եւ կայուն կեցուածք: Կիրակոսեան չէ զարգացուցած իր սկզբնական ըմբռնումները, անիկա պարզապէս ապրում է միեւնոյն գաղափարներուն արտայայտական տարբերակները: Այս processին մէջ բիւրեղացած է իր ուճը, բայց տուժած՝ իր արուեստը, իբրեւ դատողութիւն մը մարդկային կացութեան մասին: Քաղցրադաս զոյութեան մը պատկանելիութիւնը հաղիւթէ կարենայ համոզիչ կեանքի փիլիսոփայութիւն մը պարզեւել լիբանանահայ արուեստին, բայց վստահարար անոր տուած է պայծառ գոյներ:

Նոյն սերունդէն, Կիւլաէրի (ծնած՝ Պէյրութ, 1926ին) անհանդարտ, անկայուն նկարչութիւնը ինքնութեան որոնումի այս տաղանապին այլ զբաւուորումներէն է: Երբ գոյութեան եւ արուեստի նպատակը, իր արտայայտութեամբ՝ «վսեմին փնտռումը» կ'ըլլայ, սրտմտութեան առանցքը կը փոխանցուի անիրական, գրեթէ թատերական իռլալի մը:

Հանգրուանէ հանգրուան, ոճէ ոճ Թորոսեանի (ծնած՝ Պէյրութ, 1933ին) անցումը, շատերու համար անբացատրելի՝ կը լուսարանուի Նոյն այս գոյաբանական խոշորոտին ներկայութեամբ՝ իր ալ սերունդին բաժին ինկած: Թորոսեանի խորհրդապաշտ-զգայապաշտ հակումները, աստիճանական ընկերվումը դէպի ծայրայեղ վերացապաշտութիւն, ապա՝ վերադարձը հայրենի բնակարաններով, արդիւնք են ապրում տաղանապինու:

Աւելի երիտասարդ սերունդին կարգ մը անդամներուն համար, օրինակ, Նորիկեանի (ծնած՝ Պէյրութ, 1943ին) ազգային պատկանելիութիւնը ներկայացուած է մամիկներու արտանմանիկ պատմութիւններու ոճով եւ խորքով: Նորիկեանի եւ նմաններուն գործերը սնուժական վերարտադրութիւններն են հայրենի եւ ամուսիններ կորսնցուցած իզուական տկար խմբակներու ապրումներուն: Կարգ մը երկրորդական տաղանդներու համար այսպիսի նիւթեր օգտագործուած են իբրեւ պատրաստի դրամագլուխներ՝ «ազգային» եւ մարդկային արուեստ մը մշակելու:

Նոյն սերունդէն, բայց շատ աւելի բանաստեղծական եւ ինքնատիպ նրկարարի տէր Նկարիչ, Ասատուր (ծնած՝ Պէյրութ, 1943ին) խորապէս ապրած է տաղանապէս, մերժած՝ գոյութեան այս կէտը, բայց փոխանակ իր արուեստովը գործօն պաշար մղելու, ձերբազատուելու այդ կացութիւնէն:

Ասատուր խոյս տուած է գէպի ինքնապարագիր աքորաւայր մը, գերերա-  
պաշտութեան խողան վայրերը, ու հոն ալ զոհաբերած՝ իր տաղանդը:

Երբ հայ մարդուն յատուկ զգացականութիւնն ու բացուածութիւնը դէ-  
պի մարդկային տառապանքը կ'օգտագործուին աւելի իրապաշտ աշխարհա-  
հայեացքի մը շրջանակին մէջ, անոնք արուեստի գործին կը հայթայթեն ան-  
փոխարինելի առուելութիւններ: Ուշիբրանանահայ կարգ մը նկարիչներ յա-  
ջողած են այս պծով: Է. Շահինի, Ժանսէմի, Գ. Շիլթեանի, Յ. Յակոբեանի  
գործերը համամարդկային, կոթողային մակարդակի հասցուցած են պարզ,  
նոյնիսկ տոհմիկ զարգացման, եկած իրենց սեղմազգային աւանդութիւն-  
ներէն: Այս նկարիչները անհրաժեշտօրէն կազմակերպուած կամ կազմապար-  
ւած փոխադրանք չեն. ընդհակառակն, անոնց գեղարուեստական բմբուխա-  
ները յաճախ շնորհման ու ներքին հակասութիւններ կը պարունակեն, բայց  
իրենց արուեստին մէջ յաղթահարուած է ամուլ ողբերգականութիւնը, որ  
շատ մը լիբանանահայ նկարիչներու ձախողութեան պատճառը կը հանդի-  
սանայ:

Վերը յիշուած նկարիչները եւ անշուշտ ուրիշներ ալ՝ Ա. Կորեքի, Օ-  
րազեանի, Շարթի նման, իրենց ինքնութիւնը դիտած են տուեալ միջավայ-  
րին ծիրէն ներս, կեցած անոր հողին վրայ եւ անոր մարդոցը մէջ. այդ մի-  
ջավայրին տարրերը միշտ ներկայ են անոնց գործերուն մէջ, պահած՝ իրենց  
մասնաշաղկապութիւնները, բայց միաժամանակ՝ հարստացած նոր, ինչո՞ւ չէ,  
խորապէս հայկական իմաստներով, կիրքերով:

Որքան ալ հեռաւոր հորիզոններու ձգտին Յակոբեանի քննկարները,  
որքան ալ անտանելի առանձնութիւն առաջարկէն Շիլթեանի գործերը, կամ՝  
աւաւոր թշուառութիւն՝ Ժանսէմի, Օրազեանի տիպարները, այս նկարիչները  
կը մնան հաւատարիմ իրենց մեկնակէտերուն, այսինքն՝ իրական մարդոց  
եւ ինքիւրներուն, եւ այս կապն է իրականութեան հետ, որ կ'արդարացնէ  
իւրաքանչիւրին ճարտանքները գէպի ամէնէն հեռաւոր ոլորտները:

Լիբանանեան իրականութիւնը, միջավայրը, նոյնիսկ բնութիւնը բա-  
ցակայ են լիբանանահայ նկարչութենէն. բազմաթիւ նկարիչներ յաճախ  
կրկնած են, թէ իրենց գոյնէրը լիբանանեան են, լո՛յսը այս երկրինն է, նոյ-  
նը կարելի է ըսել բոլոր միջերկրականեան երկրներուն մասին. շատ ընդ-  
հանուր, անիւթ է այդ փաստը, եթէ գոյութիւն ունի: Ամէնէն էականը՝ լի-  
բանանահայը ի՞նչը բացակայ է իր արուեստէն, որ կարծէք ծագում առած է  
թէն իրմէ, բայց անցած՝ տարբեր մակարդակի մը, վերջապէս՝ խզուելու  
համար ամբողջ իրականութենէն: Երկրին մէջ վերջին տարիներու ծանրակը-  
շիւ գէպերը եւ անոնց ուղղակի ազդեցութիւնը այս ընկերութեան վրայ,  
ոչ մէկ արձագանգ գտան նկարիչներուն մօտ, թէեւ եղան մակերեսային  
զտուրքեր», այսինքն՝ ձեւական մանր փոփոխութիւններ:

Լիբանանահայ նկարչութեան քնական զարգացումին գէժ գրուած խո-  
չընդոտը միշտ ալ եղած է իրականութեան հետ իր յարաբերութեան խեղա-  
թիւրումը: Միայն սզգային ողբերգութեան մը պատկանելիութիւնը, անոր  
միայն կապուելու եւ ենթակայացնելու արուեստները, չրջած է արուեստի  
բոլոր կենսական խնդիրները: Նկարիչները աստիճանաբար հեռացած են ա-  
մէն յանձնառու կեցութեան, իսկ Ամական թուականներէն ետք, լիբանանեան  
սոստիսական բարգաւաճումին ուղղակի դուգահեւ, արդիապաշտ ուղղութիւն-  
ները արգարացուցած են նկարիչներուն ձեւապաշտական հակումները:

Լիբանանահայ նկարչութեան անհող ու անդիմադիմ մարդիկը — ա-  
ւելի ճիշդ՝ կիները, որովհետեւ իրական տիպարները մեծամասնութիւնը կը

կազմեն — կը շարունակեն հանգէս պալ միեւնոյն գտարազներովն, նոյն զպատկերներովն: Աւհասարակ թոյրը տարրերը կորոնցուցած են գոյութեան իրաւունքները, որովհետեւ վերածուած են արտայայտչամիջոցներու, դրուած՝ դերազանցապէս ձեւական նկատողութեանց ի խնդիր:

Որպէսզի ձեւականացած այս ողորդականութիւնը, լաւագոյն պարագային՝ հիմանիդմը, որեւէ բովանդակութիւն ստանայ, եւ լիբանանահայ նկարչութիւնն ալ, իր կարգին, հարստանայ համաժարկային արժէքներով, նկարչները, առնուազն հրիտաօթողները, պէտք է ընեն կտրուկ տնկիւնաւարժ մը դէպի իրենց ապրա՛ծ իրականութիւնը: Պէտք է յստակացնեն ազգային եւ ահատական ինքնութեան կապուած հարցերը, որովհետեւ առանց զարգացած աշխարհահայեացքի եւ համապատասխան գեղագիտական սկզբունքներու ձեւաւորումին, ամէնէն վաւերական տաղանդներն անգամ կը յոնգին ձեւապաշտութեան:

ՍԵՂԱ ՊԱՐՍՈՒՄԵԱՆ—ՏԱՏՈՅԵԱՆ

Լ. Մ Կ Ր Տ Ձ Ե Ա Ն

# ՊԱՐՈՅՐ ՀԱՅԿԱԶՆԸ ԻՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑՆԵՐԻ ՈԼՈՐՏՈՒՄ

Գ.

Պարոյր Հայկազնը ապրել է և գործել է իրեն բաժին ընկած ժամանակաշրջանում և շփուել իր շարքային կամ նշանաւոր ժամանակակիցների հետ: Արդ, առաւել աւել ընկած ժամանակակիցներին յիշելը եւս որոշակի լոյս կարող է սփռել հայաստանցի հոեւորի գործունէութեան այս կամ այն կողմի վրայ, օգնել պատկերը լրացնելուն:

Աչքի ընկած ժամանակակիցներից ումանք այս կամ այն չափով ակննատեսի գրաւոր վկայութիւն են թողել հոեւորի մասին, իսկ ոմանք էլ կարեւոր դեր խաղացել նրա կեանքում՝ իբրեւ ուսուցիչ, աւակերտ, մրցակից, եւայլն: Այդ ամէնը նկատի առնելով, այստեղ արժէ ներկայացնել նաեւ Վրդ դարի մի շարք անուանի անձանց, գոնէ հարեւանեթօրէն և սոսկ ընդհանուր գծերով, ըստ արամագրելի առկայ աղբիւրների:

Պարոյր Հայկազնի առաջին ուսուցիչն էր Ուշականոս Անտիոքցին, որը գործել է Յրդ դարի վերջին և Վրդ դարի սկզբին, վախճանուել է մօտ 330 թուականին: Մնուել է Ասկարունում, նախ ուսուցչութեամբ զբաղուել Շմեսայում, ապա՝ Անտիոքում, որտեղ նրան յաջորդեց Ջենոր Շմեսացին: Ժամանակի աղբիւրներում նրան վերագրուած երկերը՝ ճառեր, եւայլն, կորել են: Պահպանուել է Դիմոսթենէսի որոշ երկերի կցուած մի մեկնաբանական ներածութիւն, որը ներան է վերագրւում, թէեւ այդ գրոյթը նաեւ վիճարկւում է: Նրա նշանաւոր աշակերտների թուին են պատկանում նախ

Պրոյերեսիոս-Պարոյրը, ապա՝ Լիբանիոսը:

Այնուհետեւ Աթէնքում Պարոյրը ուսումը շարունակեց Յուլիանոս Կապադովկացու կամ Կեսարացու մօտ, որը վախճանուել է 340ին՝ իր տունը նուիրելով Պարոյրին: Ինչպէս յայտնի է, Պարոյրը ժառանգեց, այսինքն՝ ընտրութեան ճանապարհով հաստատուեց, նաեւ նրա պաշտօնը հոեւորական բարձրագոյն դպրոցում: Բոլոր դէպքերում Յուլիանոսի ճամեանանաւոր աշակերտը համարւում է յատկապէս Պրոյերեսիոսը, իսկ ապա՝ Դիոփանոս Արարը, Հեփեսոսիոնը, Եպիփանոս Ասորին (Պետրաղին), Տուսկիանոսը:

Յուլիանոսի հոեւորական դպրոցի կազակցութեամբ, տեղին է յիշատակել հետեւեալ իրողութիւնը: Այն ժամանակ որոշ բախումներ կային ուսանողութեան և բնակչութեան միջեւ: Դա որոշ չափով կապուած էր եւ կրօնական նախախրութիւնների հետ (հեթանոսութեան ու քրիստոնէութեան): Եւ ահա Յուլիանոս Կեսարացու և Ապոնինէ Սպարտացու աշակերտների դէմ դատ բացուեց բնակչութեան կողմից՝ կուսակալի (պրոկոնսուլի) առջեւ: Աշակերտները մեղադրւում էին բռնութիւններ գործելու մէջ: Պրոյերեսիոս-Պարոյրը հանդէս եկաւ մի փոյլուն պաշտպանողական ճառով և դատը շահուեց, աշակերտների ու հետեւապէս դպրոցի օգտին:

Ինչպէս իր տեղում նշուեց, Պրոյերեսիոս-Պարոյրի ասպարէզին Աթէնքում բաւական լուրջ դժուարութիւնների հետ է կապուած եղել, նախանձորդների, հա-

կառավարողների եւ մրցակիցների պատճառով: Իրա համար էլ նրա գործունէութեան հորիզոնը մերթ պայծառացել, մերթ էլ ժթաղնուել է, թէեւ վերջի վերջոյ յաղթանակը նրան է պատկանել:

Այս կապակցութեամբ, հարկաւոր է մի ըստ ամենայնի էական բացատրութիւն: Երբ ասում ենք ճնախորհողներ՝ լրացուցիչ բացատրութեան հարկ վկայ, որովհետեւ բոլոր նախանձորդները միմեանց արժեն, իրենց միակողմանի կուրուքեամբ ու անբարեացակամութեամբ, առանց տեղի, ժամանակի, անձի ու մասնագիտութեան խորութեան: Բայց «հակառակորդների» ու «մրցակիցների» հարցում որոշ վերապահութիւն ուղղակի անհրաժեշտ է, որովհետեւ «հակառակորդ» ու, մասնաւորապէս, «մրցակից» չի նշանակում անպայման թշնամի լինել, յատկապէս ճարտասանութեան նման մի քննադատում:

Ճարտասանութիւնը արուեստ եւ միաժամանակ իր տեսակի խաղ ու մարզանք է՝ թէ՛ ճարտասանի եւ թէ՛ հասարակութեան աչքում: Իւրաքանչիւր ճարտասան իր կարողութիւնները առաւելագոյնս դրսեւորելու համար, անհրաժեշտաբար, պէտք է որ իր դիմաց ունէ հակառակորդ ու մրցակից ունենայ: Մրցակցութիւնը, ճիշդ է, չի կանուս է մասնաւորապէս ունակում ու աշխարհահայեացքային տարբերութեան դէպքում, բայց բոլոր պարագաներում մնում է մրցակցութիւն: Մրցում են ոչ միայն հակառակորդները, այլեւ՝ բարեկամները, հաճելի մթնոլորտում իրենց ձեռքը փորձելու կամ առաւել պատասխանատու եւ անողոք ասպարէզի նախապատրաստուելու դիտաւորութեամբ:

Ահա ա՛յլ լոյսի տակ պէտք է դիտել նաեւ Պարոյր Հայկազնի հակառակորդների ու մրցակիցների հարցը, առանց մոռանալու, որ որոշ տեսակի հակառակութիւններ իրականում տհաճ հետեւանքներ ունեցան նրա համար՝ պատճառաւորաբար, որ նա ժամանակաւորապէս արտաքուրէ Սթէնքից, իսկ յետոյ էլ միշտ լարուած պայքարի դէպքերում մընայ, իր գիրքն ու համբաւը լիովին ա-

պահովելու եւ չկորցնելու համար: Պատճառութիւնը թողել է մրցակիցների մի շարք տնուններ, որոնցից ամենանշանաւորը Հիմերիոսն է՝ Պարոյրի ամենագլխաւոր հակառակորդը:

Հիմերիոս Պրուսացին ծնուել է Բիւթանիայում 300 եւ 310 թուականների միջեւ, ուրեմն՝ առնուազն 24 տարով փոքր է Պարոյրից: Նրա հայրը՝ Ամենիասը, նոյնպէս հետոք էր: Հիմերիոսը վախճանուել է 380 թուականից յետոյ՝ խոր ծերութեան մէջ: Նա իր հետադարձական ուսումնական ուղևորութեամբ Սթէնքում: Այս գրաւորել է Գոստանդնուպոլսում, նորից վերադարձել Սթէնք՝ հետադարձութիւն ուսուցանելով, իբրեւ Պրոյերեսիոսի մրցակից: Ունէր մեծ թուով աշակերտներ, որոնց մէջ էին որոշ ժամանակ նաեւ Բարսեղ Կեսարացին ու Գրիգոր Նազիանզացին: Գործունէութեան հիմնական վայր ունենալով Սթէնքը, Հիմերիոսը յաճախ ճամբորդել է՝ այցելելով նաեւ Կորնթոս, ապա, մօտ 350 թուին, Նիկիոնդիոս, որտեղ հրապարակօրէն մրցեց իր բարեկամ Լիրանիոսի հետ: Ինչպէս թուագրում է սովորաբար՝ 356ին, մեծ մրցում եղաւ Հիմերիոսի եւ Պրոյերեսիոսի միջեւ, երբ Լաիջաիւ յաղթանակ չաւեց Պրոյերեսիոսը: Ուստի՝ Հիմերիոսը հետագայ Սթէնքից ու այնուհետեւ մի տեսակ աւելի թափառական կեանք ունեցաւ: 362ին, Յուլիանոս կայսեր հրաւերով, դնաց Անտիոք՝ այնտեղ ճարտասանութիւն ուսուցանելու: Ծանապարհին միմեանց յետեւից ճառախօսում էր Թեսաղոնիկէում, Տիլիպէում, Կոստանդնուպոլսում եւ ուրիշ այլեւայլ քաղաքներում: Հետագայում, միայն Պրոյերեսիոսի մահից յետոյ՝ 368 թուականին, Հիմերիոսը վերադարձաւ Սթէնք ու շարունակեց իր գործը: Հեթանոս Հիմերիոսը լուրջ դժուարութիւնների մատնուեց Վաղէս կամ Գրատիանոս կայսրերի օրօք՝ 376 կամ 382 թուերին (թուականը մասնագիտօրէն ճշդուած չէ): Իր Ռուփինոս որդուն եւ աղջկան կորցնելուց յետոյ՝ կուրացած Հիմերիոսը վախճանուեց ընկնաւորութիւնից:

Հիմերիոսից մնացել է զբաղան որո-



չակի ժառանգութիւն, դպրոցական ու պարագայական 24 ճառերը՝ լրիւ: Ժամանակին նրա հեղինակութեամբ յայտնի են եղել մօտ 80 ճառեր: Թիշուլ 24 ճառերից բացի, մնացել են նաեւ արեւայլ շատուածներ կամ ամփոփումներ:

Հիմերիոսի ճառերը կրում էին միանգամայն ապագադատական բնոյթ, հեռու մնալով հրատապ հարցերից: Նա դիմում էր, իբրեւ կանոն, պատմական նիւթերի կամ իրաւաբանական որոշակի չէզոք պարզանքի՝ անցեալի մակարդակով, համեմատաբար քիչ անդրադառնալով իր ժամանակի կեանքի թանձրացեալ երեւոյթներին: Վերջին կարգի ելոյթները վերաբերում էին անձնական յարաբերութիւնների, պաշտօնական անձանց կամ զաղաքներին նուիրւած ներքոյականներին: Ինչպէս ծառայող պարագայական առիթներին, դպրոցական կեանքի հետ կապւած արարողութիւններին (բացում, ողջոյնի խօսք, հրաժեշտ, նախագլուշացում, շնորհակալութիւն, եւայլն):

Հիմերիոսի ճառերը լի էին յունական դասական դրականութեան, ըստ էութեան բանաստեղծութեան երկերից արուող մէջբերումներով (Հոմերոս, Հեսիոդոս), մանաւանդ իոնեանէ-էոլեան քարերգութիւնից (Մաֆօ, Ալկայոս, Անակրեոն, Սիմոնիդէս): Եւ առհասարակ ոճական առումով՝ դրանք մրցում են բանաստեղծութեան հետ, յազեցում են պերճաբանութիւններով եւ կլոսթաւութեամբ: Հիմերիոսի ճարտասանական արւեստի մասին պահպանուել են թէ՛ համակրական եւ թէ՛ այլ վկայութիւններ, իսկ Լիբանիոսը հեղուկ էր արուեստի այդ ուղղութիւնը: Հիմերիոսը իր ուղարած ժամանակ ուժեղ տպաւորութիւն է թողել իր ունկնդիրների ու, մանաւանդ՝ բազմաթիւ աւակերտների վրայ, բայց որեւէ նկատելի ազդեցութիւն չի թողել իրեն յաջորդած ճարտասանների սերունդների վրայ, աչքի ընկնելով շեշտւած արհեստականութեամբ: Մասնաւորապէս ուսումնասիրողների վկայութեամբ, Հիմերիոսի համար բնորոշ խօսքի ճոռոմարանութիւնը եւ բանաստեղծականացումը գերազանցում է իր միւս բոլոր

ժամանակակիցների նոյնպիսի ճարտասանական ելոյթների նոյնպիսի յատկութիւններին:

Վերջում նշենք, որ Պրոքրեստոսի ու Հիմերիոսի 386ի նշանաւոր մրցումը տեղի է ունեցել Իլլիրիայի նահանգի պրետորեանների պրեֆեկտ եւ կրթութեան հեթանոս Անատոլիոս Բերթոսցոս (Բէյ-բոսթոլ) ներկայութեամբ ու թերեւս էլ իր տեսակի իրաւարարութեամբ: Անատոլիոսը Լիբանիոսի բարեկամն էր եւ վախճանուել է 360ին: Աւելի առաջ բարձր պաշտօններ է վարել Սիրիա (Ասորիք) եւ Ասիա երկրամասերում, ինչպէս եւ Կոստանդնուպոլսում՝ իբրեւ պրոկոնսուլ (կոնսուլ):

Պրոքրեստոս-Պարոյրի անունը անմիջականորէն կապուած է նաեւ իր հետադաշուած նշանաւոր դարձած աշակերտների անուններին: Բոլոր առիթներով, ուստի, յիշատակում են մանաւանդ Եւնապիոսը, Յուլիանոս կայսրը, Բարսեղ Մեծ Կեսարացին եւ Գրիգոր Նազիանզացին: Առաջին երկուսի մասին կը խօսուի այս ուսումնասիրութեան յաջորդ հատուածներում: Իսկ այժմ արժէ համառոտաբար մի քանի խօսք ասել վերջին երկուսի վերաբերեալ:

Բարսեղ Մեծ Կեսարացին Կապադովկիայից էր: Կապադովկիայից բխած՝ հրդեհարի երեք ամէնից անուանի անձնաւորութիւններն են համարուած յատկապէս Բարսեղ Մեծ Կեսարացին, Նրա կրտսեր եղբայր Գրիգոր Նիւսացին եւ Գրիգոր Նազիանզացին՝ եկեղեցական ու մշակութի պատմութեան ասպարէզում թողած ակնառու ժառանգութեան բերումով:

Բարսեղ Կեսարացին ծնուել է մօտ 330 թուին՝ հաւանաբար Կեսարիայում, անուանի գերդաստանում: Հայրը Հոնսոր էր, մայրն ու տառը քրիստոնէայ խոր հաւատացեալ, զրանով իսկ ազդելով Պոնտոսի Նէոկեսարիայում մեծացող պատանու Հոգեւոր կազմաւորման վրայ: Բարսեղը երկար տարիներ Հոնսորութիւն սովորել է Կեսարիայում, Պոստանդնուպոլսում եւ Աթէնքում, որտեղ 350ին սերտօրէն բարեկամացաւ Գրիգոր Նազիանզացու հետ: Կոպուած էր նաեւ

Լիբանիստին: 356ին վերադարձաւ հայրենիք, դարձաւ քրիստոնեայ ու նուիրւեց ասկետական (ճգնաւորական) կեանքի: Այնուհետեւ լիովին նուիրուեց եկեղեցական գործունէութեան, հասնելով ամենաբարձր աստիճանների (Կապադովկիայի մետրոպոլիտ): Վախճանուել է երեսի 379 թուին:

Բարսեղ Կեսարացին թողել է գրական բաւական հարուստ ժառանգութիւն, մանաւանդ պատմական ու աստուածաբանական նշանակութիւն ունեցող եւ հասարակ կազմող նամակներ (թղթեր), ինչպէս եւ ճառեր ու ուսումնասիրութիւններ, դասախոսական ու ծիսաբանական հետազոտութիւններ: Նշանաւոր է երիտասարդութեանն ուղղուած նրա ճառը՝ «Եթանոսական գրականութեան օգտակար կիրառութեան մասին», որի մէջ արտայայտուած է դրական միտք՝ հնաշխարհիկ կրթութիւնը քրիստոնէական եկեղեցուն մօտեցնելու իմաստով:

Գրիգոր Նազիանզացին եպիսկոպոսի զաւակ է եւ ծնուել է Կապադովկիայի Արիանզոս դիւզում (Նազիանզոսի մօտ): Ծննդեան թուական է համարւում 329ր կամ 330ը, իսկ մահուան՝ 390ը կամ 391ը: Նազիանզացին իր էութեամբ մըտածող էր, գրող, հոգեւոր կեանքով ապրող զգայուն ու դեղազէտ մարդ: Քանիցս նշանակուել է եկեղեցական բարձր պաշտօնի (Կապադովկիայում եւ Կոստանդնուպոլսում), իր կամքին հակառակ, բայց փոստօրէն մասների արանքով է նայել այդ պաշտօններին ու առանձնութեան մէջ, բնութեան գրկում, դրադուել է գերազանցապէս գրական բնուածադործութեամբ: Նազիանզացին եւ բաւական նշանակալի գրական ժառանգութիւն է թողել՝ 44 տալիսկարգ ճառեր, 244 նամակներ, մօտ 400 բանաստեղծութիւններ: Ազգել է յաջորդ սերունդներին վրայ:

Պարսյր Հայկազնի անուանի ժամա-

նակակիցներից է Լիբանիսը, ինչպէս ասուած է սովորաբար՝ «Ձորբորդ գարի ուլ-քրիստոնեայ ամենանշանաւոր գրողը»: Նա ծնուել է 314 թուին Անտիոքում եւ վախճանուել 393ին, նոյն քաղաքում: Ընտանիքը անուանի էր սերնդէ սերունդ իր տուած մտաւորականներով եւ վարչական պաշտօնեաներով: Հայրը վաղաժամ մեռաւ եւ նրա երեք որդիներին խնամելու հոգար, որոնցից Լիբանիսը երկրորդն էր, ընկաւ մօր վրայ: Տասնըմէկ տարեկանից եղբայրների հետ դըպրոց յաճախեց, իսկ 15 տարեկան դառնալուց յետոյ, ինչպէս ինքն է պատմում, համակուեց «Խօսքի արուեստի մի աստիկ սիրով» եւ մոռացութեան տուեց բնութեան ու բնական կեանքի հմայքը, ծախեց իր սիրելի ու գրեական աղաւնիները, այլեւ չյաճախեց ներկայացումներ ու մրցումներ, ամբողջովին տարուեց դասական գրքերով ու ընթերցանութեամբ, Ուլպիանոս Անտիոքցու եւ ապա Զենոբ Եմեսոսցու ուսուցչութեան ներքոյ:

Անտիոքից յետոյ Լիբանիսն ուսումը շարունակեց Աթէնքում, որն աւարտելուց յետոյ 26 տարեկանում ուսուցիչ նշանակուեց, բայց որոշ պատճառներով 340ին Աթէնքից հեռացաւ եւ առանձին դպրոց հիմնեց ու հռետորութիւն ուսուցանեց Կոստանդնուպոլսում, Նիկիայում, ապա Նիկիոմեդիայում (344-348) եւ կայսեր կտրուկ հրահանգով վերադարձաւ Կոստանդնուպոլիս, իսկ 354ից էլ վերջնականապէս հաստատուեց Ծննդավայր Անտիոքում, այնտեղ մնալով մինչեւ մահ: Հռետորական արուեստ ուսուցանելուն զուգընթաց, Լիբանիսը սիրում էր նաեւ հասարակական գործունէութիւնը, միջամտում հայրենի քաղաքի հանրային գործերին, պաշտպան կանգնում անմեղ տուժողներին, դատաւիտում մեղաւորներին, այդ հոգի վրայ նաեւ դանազան հակաասկետիւններ վատարկելով:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏՁԵԱՆ

(Շար. 2)



Շուրջ վաթսուհի հատարներու հեղինակ և Փրանսական արդի գրականութեան մեծագոյն

ղէմբերէն մէկը նկատուող հայազգի դրազէտ Հանրի Թրուայա վերջերս հրատարակեց 240 էջ-  
նոց նոր վէպ մը՝ «Ստարաթեան հացը», որ դըր-  
ւած է իրապաշտ լարժումը յատկանշող ոճով ու  
կառուցով:

«Ստարաթեան հացը» վէպին զլիսաւոր հե-  
րոսները երկու տիպարներ են — Փրանսացի ա-  
տոմեարտը մը և անոր առանձնատան պահակ  
փոխտնակալի գաղթական մը: Իր կիներ կանու-  
թիւն կորսնցուցած ու անդաւակ մնացած առաւ-  
նայտից կը կուգուի փոքրուկացի պահակին եր-  
կու գտականերուն և կ'աւել որդեգրել զանոնք՝  
դրամն և խոստացուած փայլուն ապագային  
նշումով: Փոքրուկացի գաղթականը, սակայն,  
որ բուն սիրով մը կը սիրէ իր պահակները և  
ու ժողովարարութեան աւելի յարգ կ'ընծայէ,  
բան անոնց խոստացուած ներթափան հեռանկար-  
ներուն, կը մեղմ էնթարկուի իր սիրովը կամ-  
քին և աւ աչք ապրած ռեմիսիթեան մէկ պահուն  
կը սպաննէ իր զաւակներուն յափշտակիչը:

Եւ Մոմսայի մէջ Պերթրան Փիւս-Տելփեշ  
և Էմիլիար Մակաբիսի մէջ Թրանսուա Նուրի-  
սիէ Յունուարի կիսուն յաջորդաբար սեղա-  
ղայ ձան Հանրի Թրուայայի «Ստարաթեան հա-  
ցը» վէպին, ընդգծելով անոր ընկերային ու հո-  
գծրանական սուսնեան յատկութիւնները:

Թրանսուա Նուրիսիէ հետեւեալ տողերով կը  
վերջացնէ իր դրամատիկանը.

«Ձմառնա՛մ, որ ինձ եւս, պարոն Հանրի  
Թրուայա քլլալէ առաջ, եղաւ առաւ պզտիկ գաղ-  
թական մը: Կ'աւելի, որ ան մնացած քլլար այս  
սեղանմանը եւ գիտնար կրկին անգամ մեր վը-  
րայ կեդրոնացնել զառնաւորեմ տարբեր տշխարհէ  
մը եկած իր մայրաւմբը»:

Իրենց զիջ գիտցածին վրայ մենքն ընդող  
յողուածողները կրնան պզտիկ միջթարութիւն  
մը ապրել այն իրողութեան դիմաց, որ երբեմն  
օտարներն ալ, եռյիսիկ այս կամ այն ակադե-  
միայի ակադեմիներ նոյն դիւրութեամբ բառեր կը  
ղենք քով քովի և ընդհանրացումներ կ'ընեն նոյն  
դիւրութեամբ, ինչպէս պատահած է Կոնքուա ա-  
կադեմիայի անգամ Թրանսուա Նուրիսիէի դրա-  
մատիկաներէ մէջ, Հանրի Թրուայայի աւելիով.  
«Ձմառնա՛մ, որ ինձ եւս, պարոն Հանրի Թրուա-  
յա քլլալէ առաջ, եղաւ առաւ պզտիկ գաղթական  
մը», եւայլն:

Թրանսուա Նուրիսիէ այդպէս հաւատացած  
բլլալու պատճառներ կրնայ ունենալ, բայց եթէ  
ծանօթ բլլար Մորիս Շալարաէսի հետ Թրուա-  
յայի ունեցած աւելի քան երկու հարիւր էջնոց  
դրոյցին (էլլիմֆում երկար մամբայ մը), հաւա-  
նարար եռուղ համարձակութեամբ փորձել ուս-  
սոցնէլ հօրենական Թորոս տոհմին և մօրենու-  
կան վրայահայ մեն հօր աչք Փրանսազիք Թորո,  
որ ի մտնկութ ուսանալուով եղած է, երկուս-

տարգութիւնը դիմացած ուսանական մշակոյ-  
թով, բայց ուսու չէ եղած:

Յիշեալ դրոյց-հատարին տարբեր էջերէն քա-  
ղելով՝ տարբեր կը ներկայացնենք քանի մը հաս-  
տիւն, որ Հանրի Թրուայա ինք կը պատմէ իր  
կեանքը, ծնունդէն մինչեւ վաթսուընչիկ տա-  
լեկան հասակը:

Իր ընտանեկան պարագաներուն մասին տը-  
ւած Խանթութիւններուն կարգին, Հանրի Թըր-  
ուայայի պատկանելութեան մասին վիպութիւն  
մը պէտք է համարել նաեւ Ռուսաստանէն խոյս  
տուած առնէ ձեռք մղած անցադիրը, «Նորամա-  
նուկ Հայաստանի Հանրապետութեան դիւանագի-  
տական ներկայացուցչին» անգրիտումով:

Հայաստանի Հանրապետութեան ունեցած դի-  
ւանագիտական այդ իրաւունքէն օրին օգտուե-  
ցան բազմաթիւ ղէմբեր, ընդ որս և Երուանդ  
Յաւեան, որուն անցադիր լուսանկարական պատ-  
ճէնը կը ներկայացնենք զիջ անդին, ընդհանուրին  
մասին զաղափար մը տալու համար:

## ԱՅՆՔԱՆ ԵՐԿԱՐ ՔԱՄԲԱՅ ՄԸ

— Պարոմ Համրի թրաւայա, իմչո՞ւ այս վերնագիրը՝ «Այնքան երկար համրայ մը», ի՞նչ խորք ուզած է՞ք տալ մեր գրայցին:

— Այդ խորագիրը անոր համար, որ երկար հեռաւորութիւն մը կը բաժնէ զիս իմ ծննդավայրէս: Հօրս ընտանիքը, ծագումով կէս հայ եւ կէս չերքէզ, Կովկասի հիւսիսը գտնուող Արմաւիր քաղաքէն է: Այդ լեռներուն վրայ հինէն ի վեր ապրած են հայկական խմբաւորումներ, որոնք սերտ բարեկամութիւն ունէին չերքէզ ցեղախումբերու հետ: Հայերը այս վերջիններուն սովորութիւններն ալ իւրացուցած էին, բացի կրօնքէն: Այս «չերքէզ-հայերը», ինչպէս կը կոչէին զանոնք, եկեղեցի չունէին, բայց տարին հեղ մը, դժուարին պայմաններու տակ, հայ քահանայ մը կու գար իջմիածնէն՝ պսակելու զոյգերը եւ կնքելու նորածինները: Երբ միտսիսն Կովկասը դրաւելու ձեռնարկեց, այս «չերքէզ-հայերը» օգնեցին քրիստոնեայ Ռուսաստանին, փոխանակ իրենց բարեկամ իսլամ չերքէզներուն, որովհետեւ հայկական դաւաճանքը շատ մօտ էր ռուս ուղղափառ եկեղեցւոյ դաւաճանքին: Եւ իրենց այդ օժանդակութեան փոխարէն, ստացան ռուսական Հպատակութիւն եւ արտօնուեցան կառուցանել, կառավարել ու անտեսել քաղաք մը, որ կոչուեցաւ Արմաւիր: Իմ նախահայրերս իրենց ընտանիքներով հոն հաստատուեցան: Անոնք կը կոչուէին Թորոս, բայց ցարական կառավարութիւնը ռուսացուց այդ անունը եւ դարձուց Թարասով: Հայրս հարիւր անգամ պատմած է ինծի այս բոլորը, զորս լսած էր իր հօրմէն:

— Եւ մեր մա՞յրը, ի՞նչ էր իր ծագումը:

— Մօրենական մեծ մայրս ծագումով գերմանացի էր, իսկ մեծ հայրս՝ վրացահայ, որ բժիշկ էր Եկատերինոսարի մէջ: Իրենց ամուսնութենէն ետք, իմ ծնողներս տարիներով բնակեցան Արմաւիրի մէջ, ուր մայրս ժամանակը կ'անցընէր դրացի շատախօս հայուհիներու հետ: Բացառիկ ուրախութիւն մը պատճառեց իրեն Մոսկուայի մէջ հօրս բացած մասնաճիւղին պարագան: Հայրս հոն տուն մը գնեց, ուր ես ծնած եմ 1 Նոյեմբեր 1911ին: Միայն տարւած յուշեր պահած եմ մանկութեանս այդ վայրէն: Մեծ տուն մը, լեցուն՝ ռադասուոր-սպասուհիներով, բայց մեծագոյն հաճոյքս մօրս ծունկերուն կրծկելիս էր, երբ կ'ունկնդրէի իր պատմութիւնները: Տաղանդաւոր պատմող մըն էր մայրս, իսկ հայրս մտածող, կշռող եւ լուրջ մարդ մը: Իր բոլոր ընկերները զովհետով կը խօսէին իր ուղղամտութեան մասին: Անոր մօտ ընտանիքը կը զգենուր նախնական մեծութիւն մը, որ անկասկած կու գար իր հայ եւ չերքէզ նախնիներէն, որոնց մօտ տոհմային հաւատարմութիւնը կը նկատուէր գլխաւոր արժանիքներէն մէկը: Բուշնիկ յեղափոխութենէն առաջ, ան աշխատու զիրք մը կը գրաւէր գործի աշխարհին մէջ: Տարբեր քաղաքներու մէջ ունէր բազմաթիւ մասնաճիւղեր, բայց այդ գործը եւ ընկերային կեանքը փոթորիկէ մը աւլուեցան-զացին շուտով: Պատերազմ եւ յեղափոխութիւն, արիւնոտ ողբերգութիւն մը՝ մեծերուն համար, իսկ ինծի համար զուարճալի փոփոխութիւն մը: Այդ ժամանակ ես վեց տարեկան էի: Երեւելի մարդերը անսպասելիօրէն վախէ բռնուեցան: Այդ օրերուն միայն անցադիրներու մասին կը խօսէին: Մեր ծառաները մէկը միւսին ետեւէն հեռացան: Բուշնիկները գրաւած էին քաղաքը եւ իբրեւ պատանդ վաւ կը զնէին ականաւոր մարդերը: Հայրս ստիպուեցաւ խոյս տալ, Զեկայի՛ն ձեռքը չի յախու համար:

Քաղաքները յայտարարուած էին օրէնքէ դուրս եւ զրկուած քաղաքացիական իրենց իրաւունքներէն: Սովոր սկսած էր եւ կը պահէր գեղորայքը: Ռուս սիւսն Պրեստ-Լիտովսկիի մէջ խաղաղութեան դաշինք կը կնքէր Գերմանիոյ հետ, բայց կը շարունակուէր սպիտակ ռուսերու եւ կարմիրներու կռիւը: Մայրս կը պատրաստուէր Մոսկուան ձգել եւ կը փորձէր հօրս միանալ Խարկովի մէջ: Աղքատիկ հազուադէպով եւ շուկեկառքով կը տեղափոխուէինք հոս ու հոն, ըստ սպիտակներուն եւ բոլշեւիկներուն միջեւ տեղի ունեցած կռիւներուն: Վերջապէս, հազար շարշարաններով կըրցունք հասնիլ Խարկով եւ գտանք հայրս: Յուսահատական էր մեր կացութիւնը: Հասկնալու համար խոյս տալու մեր աճապարանքը, պէտք է գիտնալ, որ Ռուսիոյ մէջ տեղի ունեցած քաղաքացիական կռիւը բացարձակ վայրենիութիւն էր: Արքայական ընտանիքը քնաջնջուեցաւ բոլշեւիկներու կողմէ: Ամէն անգամ, որ կողմերէն մէկը կը տիրանար քաղաքի մը, անմիջապէս կը զնդակահարէր քաղաքական տարբեր կարծիք ունեցողները՝ պարզ մատնանշումի մը հիմամբ:

Վերջապէս, մենք հաստատուեցանք Քիսլովոստակ, Կովկաս, բայց շուտով հոն ալ սկսաւ իրարանցումը՝ բոլշեւիկներու յաղթանակին պատճառով: Առաջին անգամ ըլլալով լսեցի, որ ծնողքս կը խօսէր Ռուսիայէն հեռանալու մասին: Անշուշտ, ոչ վերջնականապէս: Զեւակերպութիւնները կը դժուարանային, այնուամենայնիւ, անցողիկ մը ձեռք ձգեցինք, եւ վերջապէս՝ Փրանսական հիւպատոսարանէն, Կ. Պոլիս մեկնելու համար: Հայրս յաջողեցաւ տեղ գտնել նաեւ մը վրայ եւ մենք Փետրուարի սկիզբները ճամբայ ելանք դէպի Պոլիս, որ մեր վերջին հանգրուանը պիտի չըլլար, այլ անկէ Թրանսսպիտի անցնէինք:

Կ. Պոլսոյ մէջ՝ նոր դժուարութիւններ: Տեղական իշխանութիւնը Կիպրոս կը զրկէր բոլոր ռուսահպատակները եւ ծագումով հայերուն միայն կը թոյլատրէր Պոլիս իջնանիլ: Ըստ մեր ինքնութեան թույլտրում՝ մենք հայրական ծագումով ռուսահպատակներ էինք: Պէ՞տք էր մեզ ընդունէին, թէ՛ մերժէին: Կացութիւնը աւելի բարդացաւ այն պատճառով, որ մինչ բոլոր հայերուն մականունները «նան» ունէին իրենց վերջաւորութեան, մերը կը վերջանար «Օֆ»ով, որ ցոյց կու տար, որ մենք ծագումով ռուս էինք: Այդ խառնաշփոթութենէն յաղնած՝ հայրս ճարտար միջոցի մը գիտեց: Նորամանակ Հայաստանի Հանրապետութեան դիւանագիտական ներկայացուցիչը մեզի տուաւ 19 Մարտ 1920 թուակիր նամակ մը, զոր կրողը, Ռուսիոյ մէջ իր-րեւ թարասով ճանչցուած, իրականութեան մէջ կը կոչուէր Թորոսեան: Այս թորոսեան մականունը, որ մերը չէր եղած, կառչած պիտի մնար մեր Թարասով անունին, հակառակ հետազային անկէ ազատելու համար ի գործ դըրած մեր ջանքերուն: Ինչեւիցէ՝ այդպէս վերամկրտուած՝ մենք կըրցունք ոտք դնել հաստատ հողի վրայ: Պոլսոյ մէջ մենք բնաւ բան չտեսանք, այնքան որ տարուած էինք Փարիզի երազով: Իտալական նաւը նախ մեզ տարաւ Վենետիկ՝ շունչ մը առնելու համար, ուրա՛ջ շուկեկառքով հասանք Փրանսական սահմանը:

— Իսկ հայերէ՞նք, հայերէն կը խօսի՞՞ք:

— Ոչ. մեր ընտանիքին մէջ ոչ ոք հայերէն խօսած է եւ կը ցաւիմ այդ բանին համար, որովհետեւ կ'ըսեն, թէ սքանչելի լեզու է: Հայ գրականութիւնը, անոնց համար, որ կրնան գործերը կարգաւ իրենց բնագիրներէն, կը թուի, թէ իր ծոցին մէջ պահած ունի հրաշքներ: Ռուսահայ, բայց ռուսական մշակոյթով սնած եմ: Անհրաժեշտ պահուածքն է ատիկա ինծի համար, թէեւ Կոնքուս մըցանակին արժանացած ատենս, ողջունուեցայ Փարիզի հայ եւ ռուս շրջանակներէն միասնաբար:

# ԴԱԺԱՐԱՆԳԻՆԻՆ ԿՐԻՍՏՈՅՈՒՆ

ՏԵԻՆՈՒԹԻՒՆ  
 Միջ. քաղաքաց. հանգ.  
 Քիշե 22 Հունիս 1925



ԴԻՄԱԳՐՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԱՆՕՐՈՒԹԻՒՆ

Թիւ ամս, 54 ցոյ.  
 Հասակ, Բարձր  
 Հերթ, անթրոպոմետր.  
 Ճակատ, անթրոպոմետր.  
 Աչկունք, ցածրամակարդակ.  
 Մորուք, անթրոպոմետր.  
 Դեմք, ցածրամակարդակ.  
 Թոյր գիւտ, Բարձր  
 Տեղի ծննդեան, Կ. Երևան  
 Տեղի բնակութեան, Երևան  
 Արտ. աստի, Գրաքնն.  
 Նշան առանձնական, Կ. Երևան

Վճարելու սակագին:

Ձրանք

Լ.՝ Կիւմուր.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ  
 ԱՆՑԱԳԻՐ

ՅԱՆՈՒՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ  
 ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

Մենք, Հանգանութիւնը, ինչպէս զայնու  
 ի Պաշտօնէն, ինչպէս ի Քաղաք-  
 կան եւ գիւտարական իշխանութեան  
 բարեկամ պետութեան, թողաւ վարել  
 զհանգանութիւն իւր անարգել Երևան  
 Երևան Երևան  
 որ գնաց Երևան, Հունիս 22  
 եւ չնորոգել իմ ազնութիւն եւ պաշտ-  
 պետութիւն ի պաշտօնէն Կարգի:  
 Տուեալ ի Երևան 22 Հունիս 1925

LE CONSUL GÉNÉRAL





VALIDITÉ

Pour un an  
Jusqu'au 22 Janvier 1925.



Signature du porteur.

Yervant Odian  
Signature

Signalement et Indications.

Age: 54 ans

Taille: haute

Cheveux: grisonnants

Front: ordinaire

Yeux: châtains

Barbe: rasée

Visage: ovale

Teint: brun

Lieu de naissance: Constantinople

Domicile: Bucarest

Profession: Ecrivain

Signes particuliers: néant

RÉPUBLIQUE ARMÉNIENNE

PASSEPORT

AU NOM DU GOUVERNEMENT

DE LA

RÉPUBLIQUE ARMÉNIENNE

Nous, Consul Général de la République Arménienne à Bucarest, prions les Autorités Civiles et Militaires des Puissances

Amies de laisser passer librement Monsieur

Yervant Odian

se rendant en Syrie, par voie de terre,

et de lui prêter aide et protection en cas de besoin.

Délivré à Bucarest

le 22 Janvier 1924.

MP 21491300,  
RAL,

*[Signature]*



VISA FOR  
APPLIED FOR AT  
CONSTANTZA 1/4 4

Vu au Consulat de Grèce  
Pour y aller se rendre

en grèce

Bucarest, le 24 Janvier 1944.

Ap. B. G. 4390.



peru lei 1104/112 451


Seen at the British Vice Consulate  
at Constantza.

Good only for TRANSIT through the  
Palestine (Taffar) —  
en route for Syria

No. 2 CONSTANTIN / A / 1924

*Wm. W. W. Smith*

**British Vice Consul**




digitised by J.A.R.A.R.®

Control 3 Hotel  
Beyant 5/11/1924  
any south Clatter



# ARMENIAN ARCHITECTURE AN EXHIBITION



Ani (Armenia), 1000 A.D.

Armenian Studies Program  
California State University, Fresno  
Fresno, California  
1991

Հայկական ճարտարապետությունը, յատկապես եկեղեցաշինական արտեսող օտար հասարակության ծանոթացնելու նպատակով, Զերեզոյի համալսարանին մէջ տնցնալ Հոկտեմբերին կատարուած է բացառիկ ցուցանադէս մը, կազմակերպութեամբ Իտալիոյ Հայ Մշակութային Միութեան եւ Միլանայի Մանուկեան ու Բամպուկեան ընտանիքներուն գործան աջակցութեամբ: Փրոֆեսէօր Աարեան Ալբաիս Նովելլոյի գլխաւորութեամբ քրականացած այս ցուցանադէսը, որ յղացուած է Միլանայի Փալլէքսէմիէի մասնագէտներուն կողմէ, օտար այցելուներուն ներկայացուցած է մօտաւորապէս 86 եկեղեցիներու եւ վանքերու մեծածաւալ լուսանկարներ ու յատկազօրներ՝ իւր գարին մինչեւ 18 դար: Է Հոկտեմբեր 1981ին, ցուցանադէսին բացումը կատարած է Զերեզոյի համալսարանի Հայագիտական ամպիոնի պատասխանատուն՝ փրոֆ. Տիգրան Գալստեմեան, որ զատիւրօքն է Հայկական ճարտարապետութեան մասին եւ լուսանկարներու մէջոյաւ բացատրած Հայկական խորաններու, քարակերտ գործերու, կամարներու եւ խոյակներու կառուցային յատկանքները: Զրանայի, Պելլէքսէի, Փարթուկայի, Աւլարիոյ, Գերմանիոյ, Լիբանանի, Իտալիոյ, Արժանթինի եւ Իրանի ժողովուրդներուն Հայկական ճարտարապետութեան ներկայացնելէ ետք, անցնալ տարուան ընթացքին այս ցուցանադէսը փոխադրուեցաւ Միացեալ Նահանգներ՝ Հայ Ժողովուրդի ճարտարապետութեան իւրայատուկ սահման, որմադրիչներուն հանձնարին եւ քաղաքացիներուն վերանայնալու նպատակով:

Հետք վերանայնալու կարողութեան մասին ճաշակով փոխանցելու նպատակով:

Այդ իսկ պատճառով, Գալստեմեան, Հարմարութի, Միլանայի, Իւ. Մի. Էլ. Էլ. Էլ. Պրալի, Ինտերմիլիոյ Հանրածանօթ Համալսարաններու մէջ ցուցադրուելէ ետք, յիշեալ ճոնարկը դրանաւ է Զերեզոյի համալսարանի ընդարձակ սրահը, մինչ մինչեւ 28 Հոկտեմբեր:

Հայ Մշակութային փառքն ու պատիւը ներկայացրող Հոյակերտ կոթողներու՝ Էլմիանի, Հոփուի, Էլմի, Հաղարատի, Սանահինի, Տաթևի եւ Երման այլ հարստութիւններու կողքին, ետեւ ցուցադրուած են տխուր կացութիւնը Հայկական բնակչութեան ու կիսափոշի եկեղեցիներու, ինչպէս՝ Աղթամարի Ս. Կալէկեղեցւոյ եւ Անիի մօտ տաճարին, որոնց գործերը փոշի դալու պատահալքին առկ էր գտնուին: Նմանապէս, ներկայացուած են լուսապատկերներն ու յատկազօրները Հայկական բնակչութեան հողերուն վրայ դրանալու մեր աշխարհի եկեղեցիներուն, որոնք, թրջուկան իշխանութիւններուն ծրարութեամբ, ուժանակի միջոցաւ մասամբ կամ ամբողջովին քանդուեցան՝ պատմութիւնը ժողովրդեան մասնակցութեամբ քանդուեցան:

## ՅՈՒՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆԱԳԻՏԱՐԱՆ ՄԸ ՀԱՅԵՐՈՒ ՄԱՍԻՆ

Ամբէրի մէջ յունարէն լեզուով հրատարակուող «Ինտրիա յունական եւ համալսարանային ընդհանուր մեծ համայնագիտարան» միացեալ հոլովութիւն (18 էջը՝ գունաւոր) յատկացուցած է Հայաստանի եւ Հայութեան, հրատարակելով ամենամասնական մատուցական Հայի Պաշարանի պատրաստած յղուածն ու 25 գունաւոր լուսանկարներ:

Քուշէ թուղթի վրայ, զեղատիպ տպագրութեամբ լոյս տեսած յիշեալ համայնագիտարանի 201-202 եւ 208-209 միացեալ երկուական պրակները աչքատու են իրենց ընտանեկիւր դասաւորումով եւ, մանաւանդ՝ համեմատական ընդլայնուող յղուածներով:

Թիւ 201-202 պրակներուն մէջ (էջ 382-400) լոյս տեսած է Հ. Պաշարանի ընդարձակ յղուածը, որ կը ներկայացնէ Հայաստանի պատմութիւնը, կլիման, բնակչութիւնը, ժողովրդական տնտեսութիւնը, ճարտարարուեստը, բժշկութիւնը, գիտութիւնը, գիրն ու գրականութիւնը, զրուշութիւնն ու մանրանկարչութիւնը, Հոյեւոր կեդրոնները, երաժշտութիւնը, Թատրոնը, տպագրութիւնը եւ լարժանկարը:

Իսկ յաջորդ 208-209 պրակներուն մէջ ներկայացուած են Հասեալ նիւթերը... «Հայ առաքելական եկեղեցին», «Հայ լեզու», «Հայկական գիրք», «Հայ տնտեսական եկեղեցին», «Հայկական լեզուն», «Հայերը Յունաստանի մէջ» եւ «Հայ կաթողիկէ եկեղեցին»:



Համազգայինի Մոնրէայի մասնաճյուղին կողմէ Գանատա հրաւիրուած բազմամասնակի զերան եւ բեմադրելի ժողովարդական վերջերս վերադարձաւ Պէյրութ, լրջանի թատերական կեանքի աշխուժացման իր դործան մասնակցութիւնը բերելէ ետք:

Անցեալ զարնան Մոնրէայ հասնելէ ետք, ժողովարդական իր լուրջ հաւաքած է լրջանի Համազգայինի Պէյրութ Ազատական թատերախումբի անդամները եւ լրջանի նախապատրաստական աշխատանքներու՝ ժող. Ս. Յակոբեանի Վիտալի կը կանչէ: Թատերախումբը բեմադրերու նպատակով:

Ետք, 12 Սեպտեմբեր 1981ին, Վիտալի Պէյրութի թատերախումբին մէջ, Պէյրութ Ազատական թատերախումբը թատերախումբի հանրութեան ներկայացուցած է իր առաջին կայքը, որուն յաջորդած են 13, 19 եւ 20 Սեպտեմբերին տրուած ներկայացումները:

Առհասարակ սիրող թատերախումբներէ կողմէ Պէյրութ Ազատական թատերախումբի վերջին աշխատանքը արժանացած են հայ եւ օտար արուեստագէտ լրջանակներու բարձր գնահատանքին: Հանդիսութեանց ներկայ գտնուած արուեստագէտները ընթերցելի ողջուած են ժողովարդական բեմական մտայնացման եւ ճիշդ աշխատելու հանդիսացող Վիտալի կը կանչէ: Բեմականացման ու իր առիթնող խաղարկութիւնը:


Պէյրութի մէջ իր սերունդին ունենալէ ետք, Պէյրութ Ազատական թատերախումբը մեկնած է Պէյրութի մասնակցութեան Արեւելեան Ամերիկայի եւ Գանատայի Համազգայինի լրջանակի մարտնչութիւնը:

«...Թատերազնութիւն եւ Թատերաբանի համալսարանի թատերական բաժնի փրոֆեսորներէ բաղկացած դատական կազմը լուսազոյմ թատերախումբի մրցանակը շնորհեց Համազգայինի Պէյրութ Ազատական թատերախումբին, իսկ լուսազոյմ բեմադրիչի մրցանակը՝ Ժողովարդականին»:

Թեան կազմակերպած Յ. Վ. Համալսարանին: Ետք 30 եւ Կիւնի 11 Հոկտեմբերին կայացած այս Համալսարանի աւարտին, Ժողովարդական եւ իր գործակիցները հիշելով իրենց անցած ընթացքը՝ վերադարձան եւ հանդիսատեսները թատերական աշխատանքին հրապարակեցին:

Պէյրութ Ազատական թատերախումբը վերջին անգամ հանդէս եկած է Թորոնթոյի բազմամասնակցային փառատանի բեմին, օտար այլ թատերախումբներու կողքին: Multicultural Theatre Festival-ի մրցանակին իրենց մասնակցութիւնը բերած են 42 Համալսարանի թատերախումբներ, ի շարք ալ իրենց՝ Պէյրութ Ազատական թատերախումբը, որ հոկտեմբերին, Փիլիպպիններէ, իտալացիներէ, լեհերէ, սերիներէ, պաներէն եւ այլ լեզուներու հետ հանդիպած է Մեծաքաղաքին:

10 լուրջներու վրայ երկարած այս մրցանակի արդիւնները յայտարարուած են Կիւնի, 17 Յունուար 1982ին, Թատերազնութիւն եւ Թորոնթոյի Համալսարանի թատերական բաժնի վերադարձներէ բաղկացած դատական կազմը լուսազոյմ թատերախումբի մրցանակը շնորհած է Համազգայինի Պէյրութ Ազատական թատերախումբին, իսկ լուսազոյմ բեմադրիչի մրցանակը՝ Ժողովարդականին, մրցանակակիցները պատուելով յիշատակի ոսկի մետալով եւ Համապատասխան վկայագրով:




A.R.A.R.®

digitised by

## ՀՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՄԲ ՍՏԱՑԱՆՔ

- Խենթը (վեպ)  
Րաֆֆի, Պեյրուք, 1981, Համազգայինի «Վահե Սեբեան» տպարան
- ԱՐՑՈՒՆՔ եւ ժՊԻՏ (արձակ էջեր եւ բանաստեղծություններ)  
Անուշ Գրիգորյան, Նիւ Եոթ, 1980
- ՍՏԵՓԱՆՈՍ ԴԱՇՏԵՑԻ (ուսումնասիրություն)  
Սիմոն Սիմոնյան, Պեյրուք, 1981, տպարան «Սեան»
- ՀՈԳԵՀԱՏՈՐ (բանաստեղծություններ)  
Արմեն Արամյան, Պեյրուք, 1981, տպարան Ալբափրէս եւ Թէֆնոփրէս
- Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻ (բանաստեղծություններ)  
Լեւոն Վարդան, Պեյրուք, 1982, տպարան Ալբափրէս
- ՀԵՔԻԱԹՆԵՐՈՒ ԱՇԽԱՐՀԸ — հատոր Դ. (հեփաթներ)  
Ներսէս արքեպիսկոպոս Բախտիկեան, Պեյրուք, 1982, տպարան «Կ. Տօ-  
նիկեան եւ որդիք»
- ՄԵՐ ԿԵԱՆՔԷՆ (յօդուածներ)  
Գրիգոր Զօհրապ, Պեյրուք, 1981, տպարան «Կ. Տօնիկեան եւ որդիք»
- ՕՐՄԱՆԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԻՔ ԵՒ ԿԱՐՄԻՐ ՍՈՒԼԹԱՆԸ (վեպ)  
Գ. Հրանտ, Պեյրուք, 1981, տպարան «Կ. Տօնիկեան եւ որդիք»
- ՄԱՐԿԵՐԻԹԱՅԻ ԱՌԻԻՄՆԵՐԸ (պատմաւածներ)  
Հայկ Նազգաշեան, Պեյրուք, 1981, տպարան Ալբափրէս
- ՓԵՆԷ ՊԱԿ ՄԱՏՂԱՇ ՀՈԳԻՆԵՐՈՒ (բանաստեղծություններ)  
Վահագն, Պեյրուք, 1982

ԼՈՑՍ ՏԵՍԱՆ	ԼՈՑՍ ՏԵՍԱՆ
<p><b>ՆՈՒԹԵՐ Հ. Յ. ԴԱՀՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՊԱՏՐԻԱՐԻՔԱՆ ՀԱՄԱՐ</b> Դ. հատոր</p> <p>Խմբագիր՝ ՀՐԱՇ ՏԱՄԱՆՊԵՏԵԱՆ</p>	
<ul style="list-style-type: none"> <li>• Հրատարակություն Հ. Յ. Դաշնակցության, Պեյրուք, 1981, Համազգայինի «Վահե Սեբեան» տպարան, կաշեկազմ, գին՝ 80 լ. ոսկի:</li> </ul>	
<p align="center">●</p> <p align="center"><b>ԹԵՎԻՐԵԱՆ ԱՐԴԱՐԱՀԱՏՈՅԸ</b></p> <p align="center">Խմբագիր՝ ՅԱՐՈՒԹԻՆ ՔԻՐՈՔՅԵԱՆ</p>	
<ul style="list-style-type: none"> <li>• Հրատարակություն Հ. Յ. Դաշնակցության, Պեյրուք, 1981, Համազգայինի «Վահե Սեբեան» տպարան, 421 էջ, գին՝ թղթակազմ 25 լ. ոսկի, կաշեկազմ՝ 35 լ. ոսկի:</li> </ul>	



**ԼԻԲՐԱՆԱՆ**

Հատավաճառ 12 Լ. Ո.  
Տարեկան բաժնեգին 125 Լ. Ո.

**ՍՈՒՐԻԱ**

Հատավաճառ 15 Ս. Ո.

**ԱՐՏԱՍԱՀՄԱՆ**

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

**بَاكِينُ**  
مجلة شهرية ، أدبية وفنية علمية  
المدير المسؤول  
السيد اوتين كارنيك قرانجيان  
**PAKINE**  
REVUE MENSUELLE  
LITTÉRAIRE & ARTISTIQUE  
Propriétaire  
Dr. A. KAZANDJIAN  
•  
**ԲԱԿԻՆ**  
ԱՄԱՍԳԻՐ  
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ  
ԵՒ ԱՐՈՒՆԵՍԻ  
Խմբագիր  
ԳՐԴՈՍ ՄՆԱԳԵԱՆ  
Խմբագրության անդամներ  
ՅԱՐՈՒԹԻՆ ԳԵՐԳԵՐԵԱՆ  
ՍԱՐԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ  
Վարչական պատասխանատու  
ՎԱՀԷ ԲԵՐՈՍԵԱՆ  
B. P. 11 - 8404 - Beyrouth - LEBANON  
Tel. 296898